

14620

891.99

U-40



S. Gulbenkian,
Tiflis le 14 Octbr 1903



1109

211

[Faint, illegible handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page]

[Faint handwritten text]


2011

391.99
G-40
u.u.

Ն Ա Ր Գ Ո Ս:

ՍՊԱՆՈՒՄԸ ԵՂՆԻՆԻՆ

Վ Ի Պ Ա Կ



ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳՈՂԹՆԻ.

76
//

22-8512

ԲԱԳՈՒ
Տպարան «Ն Ր Օ Ր»
1901.

Дозволено цензурой. Тифлисъ. 26 Января 1901 г.

113520-472

81
29



5173455

ՄՊԱՆՈՒԱԾ ԱՂԱԻՆԻՆ

Վ Ի Պ Ա Կ

I.

Գիշերուայ ժամը 3-ին մօտ էր: Հազիւ վերջացրի շտապ աշխատանքս և յոգնած, տանջուած՝ վեր կացայ որ քնեմ, երբ յանկարծ հնչեց դռանս զանգակը: Սկզբում կարծեցի, թէ դա մի պատրանք է, ականջի հալլուսինասիտն — գիշերային խորին լռութեան արգիւնք. բայց յետոյ սրբան զարմացայ, որ զանգակը դարձեալ հնչեց և այս անգամ — աւելի ամուր, աւելի երկարատև: Զգացել էր, թէ ինչպիսի անորոշ, բայց զօրեղ երկիւղ է ազգում ձեզ գիշերուայ ուշ ժամին հնչող զանգակի տարօրինակ սուր, խորհրդաւոր ձայնը, երբ ձեր շուրջը կատարեալ լռութիւն է տիրում, երբ ոչորի չէր սպասում դուք: Այսպիսի մի երկիւղ պաշարեց ինձ այդ բոպէին. գիշերուայ այդ ժամին ես ոչորի չէի սպասում, և ոչոր էլ չէր կարող դալ ինձ մօտ: Ծառաս ժամը 10-ից արդէն քնած էր խոհանոցում, և անպիտանն այնպիսի քնուկ էր, որ զանգակ չէ, զուռնա էլ ամէիր

ականջի մօտ՝ չէր իմանալ: ձարահատեալ ինքս գնացի
դուռը բանալու և, մինչդեռ իջնում էի մուժը նա-
խասենեակիս սանդուղքով, զանգակը երրորդ ան-
գամ հնչեց:

Վերջապէս դուռը բաց արի:

Փողոցում, դռանս առաջ դանուած քարի մի
հատիկ աստիճանի վրայ կանգնած էր Քարեգին
Սիսակեանը—ինձ շատ մօտիկ ընկեր-բարեկամս:

Խիստ զարմացայ:

— Քարեգին... այդ դ՞ն էս...

— Ես եմ:

— Ի՞նչ է պատահել:

— Կարո՞ղ եմ մտնել քեզ մօտ:

— Սյս ժամի՞ն:

— Ես գիտեմ, որ դու ուշ ես քնում, դրա հա-
մար եկայ քեզ մօտ:

— Ի՞նչ է, գործ ունիս:

— Չէ, այնպէս:

— Ի՞նչպէս թէ այնպէս: Ո՞վ է իմացել, որ
մարդ մարդու տուն գնայ այս ժամին այնպէս:

Քարեգինը ծիծաղեց տարօրինակ մեղմ, ուրախ
ձայնով: Ս.Ա.հասարակ ձայնից նկատում էի, որ
չափազանց ուրախ է. գիշերն այնքան մուժ էր,
որ դէմքի արտայայտութիւնը չէի տեսնում:

— Գեւ Տօ չե՞ս պառկել, թող ներս գամ, էլի:

Ու նորից ծիծաղեց:

Յանկարծ ինձ այնպէս թուաց, թէ ցնորուել է։
Սյդ միտքն այնպէս ազդեց ինձ, որ կարճ ժամանակ չէի
իմանում ինչ անեմ—ներս թողնեմ, թէ ուղղակի
բռնեմ ձեռքից և իրենց տուն տանեմ։ Եւ մինչդեռ
դռան շէմքում լուռ կանգնած՝ դէմքս առաջ էի տա-
րել և աշխատում էի գէթ մի գիծ որսալ նրա դէմքի
վրայ, որ ապացուցանէր ինձ իմ սոսկալի կասկածը,
նա մի սառը ցած դրեց քարի աստիճանից և ասաց.

—Բառ գնանմ։

Յանկարծ բռնեցի նրա ձեռքից։

—Սպասիր, արի։

Ու նրան ներս քարշեցի։

Մտաւ և, մինչդեռ փակում էի դուռը, մտա
կանգնած՝ էլի ծիծաղեց։

—Ես քեզ հասկանում եմ. երևի կարծում ես,
թէ ցնորուել եմ,--ասաց։

—Ի հարկէ, ցնորուել ես,--չգիմացայ և բա-
ցականչեցի՝ զայրացած նրա շարունակ ծիծաղելու
վրայ, որն ուղղակի զրգուում էր յոգնած ջղերս։
—Ցնորուած մարդը միայն գիշերուայ այս ժամին
կըթողնի տաք անկողինը, դուրս կըգայ տանից այ-
ցելու թիւններ անելու աշնպէս։ Արի տեսնեմ։

—Մուժն է, սնց դամ։

—Տուր ձեռքդ։

Մինչդեռ ձեռքից բռնած՝ բարձրացնում էի

Նրան մութ նախասենեակիս սանդուղքի ինձ շատ լաւ ծանօթ աստիճաններով, յանկարծ մի նոր միտք ծագեց գլխումս:

— Կամ, գուցէ, դու լուսնոտ ես, և ես չեմ իմացել մինչև հիմայ,— հարցրի:

Էլի ծիծաղ:

— Իսէր Աստուծոյ, մի ծիծաղիր, թէ չէ՛ այնպէս կը տամ, որ այստեղից մինչև դուռը մէկ կը գնաս,— սաստիկ զրգռուած բացականչեցի և նրա ձեռքն այնպէս սեղմեցի, որ ցաւից մի «օյ» արեց:

— Որքան ես գիտեմ, լուսնոտները լուսնկայ գիշերներն են դուրս գալիս տանից, իսկ այս գիշեր այնքան մութն է, որ... — ասաց և իսկոյն աւելացրեց.— ես հօ տանից չեմ գալիս որ:

Ակամայ կանգ առայ:

— Տանից չե՞ս գալիս:

— Զէ:

— Հապա՞:

— Մի տեղից...

Եւ, ըստ երևոյթին, էլի ուզում էր ծիծաղել, բայց, երևի, յիշելով զայրոյթս, զսպեց իրեն. նրա ձայնը միայն խորհրդաւոր կերպով գողաց:

Ես պինդ թքեցի, կարծեմ՝ մի հայհոյական դօրեղ բառ էլ դուրս թռցրի բերնիցս և, այս անգամ արդէն կատաղած, քարշ տուի նրան հտեիցս:

Վերջապէս սենեակիս մէջ լամպի լուսով կարո-

զացայ լաւ դիտել նրան. ոչ ցնորուած էր և ոչ լուսնոտ.—նոյն անալի, անհամարձակ աչքերը. նոյն՝ ֆիզիկապէս առաջ կլորիկ դէմքը, առանց մի որևէ շարժուն գծի. նոյն գանգաղ, ծոյլ շարժումները: Միայն մշտատև ծիծաղկոտ աչքերը փայլում էին մի ինչ-որ անմեղ, անհուն, իդիօտական երջանկութեամբ: Սակայն այդ աչքերը փոքր ինչ շաղուած էին, և մի վայրկեան ինձ թուաց, թէ գի՛նու հոտ առայ նրա բերանից:

—Գու արբած ես, — ասացի, խիստ զարմացած նայելով ուղղակի նրա ծիծաղկոտ աչքերին:

—Ձէ, ես արբած չեմ, միայն... միքիչ, ինչպէս ասում են, քէփով եմ:

—Ո՞րտեղ էիր:

✓ —Մի տեղ, — կրկնեց իւր խորհրդաւոր խօսքերը, և այս անգամ նրա աչքերը մինչև անգամ ընդունակութիւն ունեցան խորամանկութիւն արտայայտելու:

Չգացի, սր գայրոյթը նորից բռնում է ինձ և այս անգամ աւելի մեծ ուժով, բայց զսպեցի ինձ:

—Լսիր, — ասացի. — այս կոմեդիան վերջանալն է, թէ ոչ: Կասես, վերջապէս, սրտեղից ես գալիս և ինչո՞ւ ես՝ եկել այս ժամին ինձ անհանգստացնելու:

—Կասեմ, ինչո՞ւ չեմ ասիլ: Ես չկամեցայ տուն գնալ, որովհետև քունս չի տանում, իսկ մենակ

մնայ էլ չեմ կարող, որովհետև երջանիկ եմ. այդ պատճառով եկայ քեզ մօտ:

—Որպէս զի՛:

—Որպէս զի չկայ: Ուղղակի եկայ, հէնց այնպիս: Եթէ իմանայի, որ այսպէս լաւ գիշեր կ'անցկացնեմ, քեզ էլ կըտանէի, անպատճառ կըտանէի, որովհետև չես կարող երևակայել, թէ ինչքան սիրում եմ քեզ:

Ու մօտեցաւ, ձեռքերը տարածեց, որ գրկի ինձ, բայց ես դէն հրեցի նրա ձեռքերը և քիչ էր մնում, որ ապտակ էլ տայի:

—Գնրս այս բոպէիս, — աղաղակեցի, — դու ուղղակի ցնորուած ես:

Ամենին չվիրաւորուեց կողիտ վարմունքիցս. բնզհակառակը, նոյն մեզմ երջանիկ ժպիտով շարունակում էր նայել աչքերիս:

—Գուցէ և ցնորուած եմ, — ասաց, — որովհետև ինքս էլ զգում եմ, որ մի խիստ տարօրինակ մարդ եմ դարձել: Երեխաները միայն, գուցէ, այսպէս են լինում: Քայց՝ այս գիշեր միայն. երեկ այսպէս չէի, այսօր մինչև երեկոյ էլ այսպէս չէի, այսինքն մինչև այնտեղ գնալս, և... ձիշտ է, երջանկութիւնից մարդիկ ցնորում են, բայց և չեն բարկանում: Գու դժբաղդ ես:

Մօտեցայ կանգնեցի ուղղակի նրա առաջ և սպառնական դիրք բռնեցի:

— Լսիր, Քարեգին. եթէ կարճ չես կտրիլ, Աստուած է վկայ, դուրս կըշտըրտեմ քեզ այս բոստիս: Այնպէս յոգնած եմ և քունս այնպէս տանում է, որ ուղղակի համբերութիւն չկայ քո այդ ցնդաբանութիւնները լսելու:

Նա, առանց մի մազի չափ անգամ շփոթուելու, նայեց ինձ միշտ միևնոյն ծիծաղկոտ աչքերով և ասաց.

— Կարճն այն է, որ այս երեկոյ նշանուեցի:

Ապշութիւնից ահամայ յետույետ գնացի:

— Գն՛ւ...:

— Ես:

— Գն՛ւ... նշանուեցիր:

— Հա, ի՛նչ է որ:

Յանկարծ մի կատաղի ծիծաղ դուրս թռաւ քերնիցս:

— Երազումդ, թէ իրականութեան մէջ:

— Իրականութեան մէջ: Այս բոստիս նշանածիս տանիցն եմ գալիս:

Ծիծաղս քանի գնում՝ այնքան սաստկանում էր: Ըստ երևոյթին, նա խիստ զարմացել էր, թէ ինչո՞ւ էի այդպէս ծիծաղում և ի՛նչ կար ծիծաղելու: Նրա գէ՛մ զգացած զայրոյթս բոլորովին անցաւ, և այս անգամ զուարճանում էի նրա վրայ:

— Աստուած է վկայ, ճիշտ եմ ասում, — երգուեց նա երեխայական պարզամտութեամբ: — Այ, թէ չես հաւատում:

Ու ցոյց տուեց ձախ ձեռքի անանուն մատը,
որի վրայ ոսկի պարզ մատանի կար:

Մի կերպ հանգարտուեցի և խնդրեցի, որ նստի:
Նստեց: Այժմ սաստիկ հետաքրքրում էի նրանով:

— Գէհ, այժմ պատմիր:

— Ի՞նչ պատմեմ, նշանուեցի էլի, — ասաց ու
ծիծաղեց:

— Ձէ, գլխից պատմիր: Սիրահարումս էիր:

— Ձէ:

— Ի՞նչպէս թէ չէ:

— Ձէ, էլի: Ես մինչև անգամ այս երեկոյ միայն
տեսայ նրան առաջին անգամ:

— Աղջկանն:

— Այո:

— Նրան, որի հետ նշանուել ես:

— Այո:

— Խեղազարուել ես, ի՞նչ է:

— Ինչո՞ւ:

— Ի՞նչպէս թէ ինչու: Կարելի բան է միթէ՞
առաջին անգամ տեսնել աղջիկը և հէ՛նց առաջին
անգամից էլ նշան տալ:

— Ինչո՞ւ չի կարելի, քանի որ հաւանեցի: Այդ
քիչ է. ես սիրահարուեցի նրա վրայ:

— Մի գիշերում, մի քանի ժամուայ ընթացքում:

— Մի քանի ժամուայ ընթացքում: Ես մի տեղ
կարգացել եմ, որ սիրահարում եմ առաջին վայր:

կեանից, առաջին հայեացքից:

— Եւ այդ հիման վրայ ես կարծում, թէ սիրահարուել ես:

— Ոչ թէ կարծում եմ, այլ իսկապէս սիրահարուել եմ: Աստուած է վկայ: Սիրահարուած որ չլինեմ, այս ժամին ինչո՞ւ պէտք է գայի քեզ մօտ:

— Լաւ: Յետոյ նա՛:

— Ո՞վ, Սառան՞:

— Անունը Սառա է՞:

— Այո:

— Յետոյ Սառան: Հաւանեց քեզ:

— Հը՞, — արտասանեց նա և ապշած նայեց ինձ:

Ըստ երևոյթին, հարցս այնքան անակընկալ էր նրա համար, որ յանկարծակի եկած՝ չիմացաւ ինչ պատասխան տար: Այդ բոպէին այնքան մազալու արտայայտութիւն էր ստացել նրա դէմքը, որ ծիծաղս չկարողացայ զսպել: Բայց նրա շփոթութիւնը երկար չտևեց, և նա պատասխանեց առաջուայ երեխայական պարզամտութեամբ.

— Ի հարկէ, եթէ նշանս ընդունեց, կընշանակի՞ հաւանել էր:

— Ոչինչ, թէև սիրահարուած ես, բայց լողկկայով ես խօսում: Բայց ինձ այս աստ, տեսնեմ. ի՞նչպիսի ազջիկ է:

— Շատ խելօք ազջիկ է, ինձնից էլ խելօք:

— Ասենք, քեզնից խելօք լինելը մի մեծ առաւելութիւն չէ մինչև անգամ ազջկայ համար:

— Քեզնից էլ խելօք կըլինի: Աստուած է վկայ:

— Այ, այդ ուրիշ բան է, — ծիծաղեցի ես: — Յետոյ... ինչ էի ուզում ասել... Հնա, սիրո՞ւն է:

— Օ՛, չափազանց, չափազանց, — բացականչեց նա, և նրա աչքերը փայլեցին անհուն հիասքանչումով:

— Կարո՞ղ ես նկարագրել ինձ նրա արտաքինը:

— Կարող եմ, բայց չեմ նկարագրել:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ... Գու և արգացել ես երեկի հումորիստ Ստերնի ինքնակենսագրութիւնը:

— Զէ, չեմ կարգացել:

— Իւր սիրած ազջկայ նկարագիրը տալու տեղ, իւր գրքի մէջ ընթերցողին նա տալիս է մի դատարկ էջ՝ ներքեւ գրած հետեւեալ ծանօթութեամբ մօտաւորապէս. «Թող, — ասում է, — այս դատարկ էջի վրայ իւրաքանչիւրը իւր առաջին սիրոյ առարկայի արտաքին տեսքը նկարագրի: Ես վախենում եմ, որ ընթերցողները չհաւանեն իմ նկարագիրը: Եթէ ասեմ, որ իմ սիրած ազջիկը շիկահեր էր, սևահեր կին սիրողը կասի. «լաւ, ինչ մի գեղեցիկ բան է չէկ մագերը»: Եթէ ասեմ, որ նրա մագերը սև էին սաթի պէս, քիթները վեր կըբաշէին ոսկեգոյն մագեր սիրողները: Գրէք այստեղ ձեր առաջին սիրած

աղջկայ նկարագիրը: Այդպէս էր և իմ սիրած աղջիկը: Ուրեմն կարող էք երևակայել, թէ՛ սրբան սիրուն էր նա»:

— Բռաւճ, այդ լաւ բաներ ես իմացել, — բացականչեցի ես: — Բայց լսիր ինչ եմ ասում... Դէ՛հ, պատմիր, պատմիր, ինչպէս պատահեց այդ:

— Ի՞նչը:

— Այսինքն ինչպէս եղաւ, որ նշանուեցիր: Պատմիր մանրամասնօրէն:

— Մանրամասնութիւններ կա՛ն, որ պատմեմ: Պատահեց յանկարծ, ինքս էլ չիմացայ թէ՛ ինչպէս: Անցեալ շաբաթ փողոցում պատահեց հօրս հին բարեկամներից մէկը: Հարցրեց ամուսնացած եմ, թէ՛ ոչ: Ասացի՛ չէ: Ասաց՝ կուզես քեզ համար մի լաւ աղջիկ ճարեմ: Ասացի՛ ինչո՞ւ չեմ ուզիլ: Կատակով, գիտես: Ասաց՝ լաւ: Ու դնաց: Յետոյ, երեկ դարձեալ պատահեց: Ասաց՝ դէ՛հ, պատրաստուիր, որ վաղը երեկոյեան պէտք է գամ քեզ տանեմ նշան տալու. մի լաւ աղջիկ եմ ճարել: Ասացի՛ լաւ: Ելի կատակով, գիտես, որովհետեւ նրա ասածներն ես կատակի տեղ էի ընդունում: Բայց կարող ես երևակայել զարմանքս ու սարսափս, որ այսօր երեկոյեան նա եկաւ ինձ մօտ և ասաց՝ դէ՛հ, վեր կաց գնանք: — Ո՛ւր: — Նշան տալու: — Թողէք, ի սէր Աստուծոյ, — ասում եմ, — ես ամուսնանալու միտք չունիմ: Չէ, որ չէ. կպաւ եախիցս ու պուկ չեկաւ: Այստեղ միայն ինձ յայտնեց, որ իւր աղջիկն է

ուզում ինձ տալ: Հօ գիտես, որ ես թէի յիմար եմ, բայց շատ չեմ յիմար: Մտածեցի, տօ, շլինի թէ սա փտած աղջիկ ունի և ուզում է սաղացնի ինձ վրայ: Սունդուկեանցի «Խաթարալա»-ն միտս եկաւ: Սասցի՛ լաւ, որ այդպէս է, ես այստեղ մի բարեկամ ունիմ, — քեզ համար էի ասում, — թողէք նրան էլ հետս վերցնեմ: Համաձայնեց: Ուզում ես, տասը բարեկամ բեր, ասաց: Բայց յետոյ ես ինքս հրաժարուեցի այդ մտքից, որովհետև, մտածեցի, եթէ գործն անաջող գնար, էլ սով կըպրծնէր քո ծաղր ու ծանակից: Այդ պատճառով քեզ իմաց չտուի ու մէնակ գնացի: Ոչ որ չկար. ես էի, ինքը, հայրն ու մայրը: Բայց հայրն ու մայրը *նրա* ծնողները չեն: — Ի՞նչպէս թէ նրա ծնողները չեն:

— Նրա ծնողները չեն, էլի:

— Ուրեմն Սառան նրանց որդեգրուհի՞ն է:

— Ձէ, օրինաւոր դաւակն է:

Ջարմանքից ապուշ կտրուեցի:

— Լսիր, — ասացի, — դու այս գիշեր մի շարք յիմարութիւններ դուրս տուիր, բայց այս բոպէիս ասածդ արդէն յիմարագոյնն է: Ի՞նչպէս թէ նրանք Սառայի ծնողները չեն և, միևնոյն ժամանակ, Սառան նրանց օրինաւոր դաւակն է:

— Այ ինչպէս: Սառան իւր այժմեան հօր խորթ դաւակն է: Այսինքն նրա այժմեան հայրը իւր այժմեան կնոջից առաջ ունեցել է մի կին, և Սառան

այդ կնոջից է, բայց ուրիշ ամուսնուց, որի մահից յետոյ նա, այսինքն Սառայի իսկական մայրն ամուսնացել է Բաղիրեանի հետ:—Սառայի այժմեան հօր ազգանունը Բաղիրեան է:—Իսկ յետոյ, ինքն էլ, այսինքն Սառայի իսկական մայրը վախճանուել է, և նրա խորթ հայրը, այսինքն Բաղիրեանը, ամուսնացել է իւր այժմեան կնոջ հետ: Հասկացա՞ր:

—Ի՞նչ մի ալբերբայական խնդիր դրիր առաջս, որից, գլուխս կըկտրեմ, թէ մարդ առանց թուղթ ու մատիտի բան կարողանայ հասկանալ: Ինչեիցէ: Յետո՞յ:

—Յետոյ նշանը տուի, էլի: Յետոյ նստեցինք ընթրելու: Կերանք խմեցինք: Քո կենացն էլ խմեցինք, իբրև խաչեղբօր, որովհետև այդտեղ վճռեցի, որ խաչեղբայրս դու պէտք է լինիս:

—Շատ շնորհակալ եմ այդ պատուի համար: Բայց դու պատմիր ի՞նչպէս ծանօթացար ազգայ հետ, ի՞նչ խօսեցիր, ի՞նչպէս յանկարծ սիրահարուեցիր, վերջապէս ի՞նչպէս յայտնեցիր սէրդ:

—Ես նրան սէր չեմ յայտնել:

—Հապա՞:

—Հապա չկայ: Ուղղակի ասացի. «Օրիորդ, ես ձեզ հաւանում եմ. եթէ դուք էլ ինձ էք հաւանում, ընդունեցէք այս մատանին»: Նա էլ ընդունեց:

—Ընդունելիս ի՞նչ ասաց:

—Ոչինչ:

— Անխօս ընդունեց:

— Անխօս: Միայն շատ պինդ-պինդ նայում էր աչքերիս: Առհասարակ նա ինձ հետ ամենևին չի խօսել, միայն շարունակ պինդ-պինդ նայում էր աչքերիս:

— Այ տնաքանդ, որ հետդ ամենևին չի խօսել, բաս սրտեզից գիտես, թէ խելօք աղջիկ է, այն էլ քեզնից ու ինձնից էլ խելօք:

— Հայեացքից, յետոյ յոնքերից գիտեմ: Գիտես, նա մի տեսակ յոնքեր ունի. այնքան մօտիկ են իրար, որ կարծես միացած են իրար հետ: Յետոյ մատներից տեսայ, որ խելօք է:

— Ի՛նչ:

— Մատներից: Մատները բարակ և շատ երկար են:

— Եւ, թո կարծիրով, բարակ ու երկար մատները խելքի՛ նշան են:

— Չգիտեմ առհասարակ ինչպէս է, բայց նրա վերաբերմամբ ես այդ եզրակացութեանն եկայ:

— Շատ բարի: Շարունակիր, տեսնենք յիմարարանութիւններիդ թիւը որտեղ է կտրոււմ:

— Յետոյ, երբ մենք սեղան նստեցինք, նա գնաց բնելու:

Ինչքան էլ որ ես վճռել էի այլ ևս չզարմանալ այդ տարօրինակ երիտասարդի տարօրինակ պատմութեան վրայ, այնուամենայնիւ նրա այդ վերջին խօսքերը բոլորովին ապշեցրին ինձ:

— Ի՞նչ ես ասում, տօ,— ազազակեցի ես,—
գժնել ես, ի՞նչ է:

— Ի՞նչպէս:

— Նա գնաց քնելու, և դու այդ բանում ոչ մի
ցոյց չնկատեցիր քո դէմ:

— Յոյց: Ի՞նչ ցոյց: Երևի քունը տանում էր,
որ գնաց քնելու: Կամ գուցէ քնելու չգնաց: Չգիտեմ:
Միայն թէ նա այլ եւ չերևաց:

Ես վեր կացայ տեղիցս:

— Լաւ, հեռացիր,— ասացի,— ժամե՛ս արդէն
չորսն է, պէտք է քնեմ: (Նա վեր կացաւ և վերցրեց
գլխարկը): Սպասիր: Տար ծանօթացրու ինձ հարս-
նացուիդ հետ. նա ինձ աւելի է հետաքրքրում,
քան թէ դու: Կրտսնե՛ս:

— Ինչո՞ւ չեմ տանիլ: Ես իսկապէս դրա համար
էլ եկայ, միայն մոռացայ: Ուզում էի խնդրեմ, որ
վաղը, այսինքն այսօր էլի, միասին գնանք նրա մօտ:
Ե՞րբ կըլինես ազատ, որ տանեմ:

— Շաբաթ երեկոյեան:

— Շատ բարի, շաբաթ երեկոյեան սպասիր
ինձ. կըզամ, միասին կըգնանք:

Ես ուղեկցեցի նրան մինչև փողոցի դուռը:
Նա «բարի գիշեր» ասաց ու հեռացաւ:

Աքազազներն արդէն կանչում էին:

II.

Շարաթ երեկոյեան, այսինքն երկու օրից յետոյ, Պարեգինն եկաւ ինձ մօտ:

Բայց նախ մի-երկու խօսք այդ տարօրինակ երիտասարդի մասին: Նա բաւական հարուստ ծնողների զաւակ էր: Հոգևոր դպրանոցի հինգերորդ դասարանից դուրս եկաւ մտաւ զինուորական ուսումնարանը, որ պատրաստուի՝ սպայ դառնայ, բայց շուտով տեսաւ, որ զինուորական շարքաշ կեանքը բոլորովին չի համապատասխանում իւր բնատրութեանը. ուստի սուինը յետ արեց և կամեցաւ տէր-տէր դառնալ, բայց երբ տեսաւ, որ քահանայական դասակարգի անունը խիստ ընկած է, այդ միտքն էլ թողեց: Այնուհետև ամենայն լրջութեամբ և իւր թոյլ բնատրութեանը ոչ յատուկ մի ներքին բուռն ձգտումով աշխատում էր վարդապետ դառնալ և վանահօր պաշտօնով բաշուել մի յետ ընկած վանք, այդ բանի համար մինչև անգամ Էջմիածին գնաց, բայց երեք ամսից յետոյ վերադարձաւ, մի տարի շրջեց անգործ, յետոյ մտաւ պետական կալուածների տեղական վարչութեան մէջ՝ իբրև մի հասարակ պաշտօնեայ՝ չնչին ռոճկով: Նա կարօտ չէր, ի հարկէ, այդ ռոճկին, քանի որ ծնողների ամբողջ կարողութիւնն իբրև ժառանգութիւն իրեն էր միայն մնացել: Իսկ այդ կարողութիւնը տարեկան մինչև երկու հազար ռուբլի տոկոս էր բերում, որով նա կարող էր առանց պաշտօնի էլ լաւ ապ-

րել, մանաւանդ՝ որ շատ համեստ կեանք էր վարում և այդ ոչ թէ նրա համար, որ ժլատ էր փող. ծախսելում, այլ նրա համար, որ ուղղակի չգիտէր, թէ ինչ բանի վրայ կարելի է փող ծախսել: Նա ուզում էր պաշտօն ունենալ, որովհետև ինչքան էլ որ ծոյլ էր, այնուամենայնիւ ատում էր անզորժ մարդկանց:

Յիշում եմ նրա ծնողներին, հայրը մի շատ խստաբարոյ և կրօնասէր մարդ էր. սակայն հայ քահանաներին ատում էր, ինչպէս թուրքը խոզի միսը. վերջը յարեց բողոքականութեան, բայց մահուան օրերին զղջաց, խոստովանուեց և սուրբ հարգութիւն առաւ հայ քահանայի ձեռքով:

Քարեզնի մայրը իղիօտ էր. վերջը խելագարուեց և մեռաւ հիւանդանոցում դեռ ևս ամուսնու կենդանութեան ժամանակ: Ասում էին, որ կնոջ խելագարութեան պատճառն ամուսինն է եղել: Բանն այն է, որ Քարեզնի մայրը շատ սիրուն կին էր. ամուսինը սիրում էր նրան մի տեսակ հիւանդոտ, կատաղի սիրով և վերին աստիճանի կասկածում էր, թէ մի գուցէ մի ուրիշն աչք ունենայ նրա վրայ. այդ պատճառով կնոջը տանից ամենեին դուրս չէր թողնում. շատ անգամ էլ ծեծում էր նրան: Վերջ ի վերջոյ նրա կասկածն այն աստիճանի հասաւ, որ կտրել տուեց իրենց տան պատշգամբը և դէպի փողոց նայող լուսամուտները շարել տուեց, որպէսզի կինը

հնարաւորութիւնն շունենայ դուրս նայելու:

Այդպիսի պայմաններումն էր ծնուել Քարեգինը, որ իւր հօր ու մօր առաջին և վերջին զաւակն էր:

Եւ այդպէս, շաբաթ երեկոյեան Քարեգինն եկաւ ինձ տանելու իւր հարսնացուի տուն:

— Քիտե՛ս, — ասաց նա, — ես արդէն նախազգուշացրել եմ նրան, որ խաշեղբօրս, այսինքն յեզ, այսօր պիտի ներկայացնեմ իրեն:

— Յետոյ դարձեալ շխօսեց:

— Ի՞նչպէս չէ. այս անգամ խօսեց:

— Ի՞նչ ասաց:

— Ասաց. «Լաւ, բերէք»:

— Ել պինդ-պինդ չէ՛ր նայում աչքերիդ:

— Ի՞նչպէս չէ: Բայց, դիտե՛ս, նա որ ինձ այդպէս նայում է, ես չեմ նայում նրան:

— Ինչո՞ւ:

— Զեմ կարողանում: Ես նրան առհասարակ նայում եմ այն ժամանակ, երբ նա ինձ չի նայում: Ես դեռ դիմացից ուղիղ նայած չկամ նրա գէմքին, բացի միայն առաջին անգամից, որի ժամանակ առանձնապէս ապաւորուել են իմ մէջ նրա բարակ, իրար հետ միացած յոնքերը: Ես միշտ տեսել եմ նրա պրոֆիլը միայն, և պրոֆիլով նա ինձ աւելի գրաւիչ է երևում, քան թէ ամբողջ գէմքով:

Զեռաց հագնուեցի, և մենք դուրս եկանք: Քարեգինն եկել էր կառքով, որն և սպասում էր դռանս

առաջ: Կառքի մէջ թղթում փաթաթուած մի ինչ-
որ բան կար, որն և բարեկամս, նստելիս, փերցրեց
ծնկների վրայ դրեց:

— Շարարեղէն է, — բացատրեց: — Քրպանումս մի
ուրիշ բան էլ ունիմ — ապարանջան: Երեք հարիւր
նուրլի տուի:

— Ի՞նչ:

— Երեք հարիւր նուրլի, — կրկնեց նա անփոյթ
կերպով:

— Տեսնենք, յիմարութիւններ դեռ շատ կը-
դործես:

Քարեպինն անմեղ զարմանքով նայեց ինձ:

— Յիմարութիւններ, — արտասանեց նա:

Բայց ես աւելորդ համարեցի նրա զարմանքը
փարատել: Ինձ հետաքրքրում էր նրա հարսնացուն:

— Քանի՞ տարեկան կըլինի, — հարցրի:

— Ուր, Սառան: Մեծ է, կարծեմ. բաւական
մեծ է երևում. եթէ քսանհինգ չլինի, քսաներկու
տարեկան անպատճառ կըլինի: Պինդ-պինդ որ նայ-
ում է ինձ, աւելի մեծ է երևում:

— Բայց չէ՞ որ դու նրա պինդ-պինդ նայելիս
չես նայում նրան, ինչպէս ինքդ ես ասում. ուրեմն
սրտեղից գիտես, թէ այդ ժամանակ աւելի մեծ է
երևում:

— Զգում եմ: Շատ բան մարդ տեսնում է զգա-
լով: Օրինակ, երբ պատը փուլ է գալիս զլսիդ, դու,

չնայելով, որ աշքերդ պի՛նդ փակում ես, բայց և այնպէս ամենայն մանրամասնութեամբ տեսնում ես, թէ ի՛նչպէս է պատն իջնում և քեզ տակովն անում:

Յանկարծ փորձող հայեացքով նայեցի նրա աշքերին. ըստ երևոյթին, այնքան էլ պարզամիտ չէր, որքան ես էի կարծում:

— Լսիր, Գարեգին, — ասացի շատ լուրջ կերպով. — եկ ուզողակի խոստովանուիր, որ թէ՛ն նշանուել ես, բայց վախեննում ես նրանից:

Նա մի կարճ ժամանակ շփոթուեց, ապա ասաց.

— Այո:

— Եւ այդ է պատճառը, որ նրա պի՛նդ-պի՛նդ նայելիս չես կարողանում նայել նրան:

— Այո:

— Գարձեալ դրա համար է, որ նա աւելի մեծ է երևում, մանաւանդ այն ժամանակ, երբ պի՛նդ-պի՛նդ նայում է քեզ:

— Այո:

— Որովհետեւ այդ ժամանակ դու փոքր ես երևում քո աշքում, այդպէս չէ:

— Այդ էլ ճիշտ է:

— Ուրեմն դու զգում ես, որ նա բարոյապէս մեծ է, այսինքն բարձր է քեզանից, այդպէս չէ:

— Ի՛նչպէս թէ բարոյապէս:

— Այսինքն իւր ներքին ուժով — կամքով, բնաւորութեամբ, խկրով:

—Անցեալ օրը հօ ինքս ասացի թեզ, որ նա
շատ խելօք աղջիկ է:

—Այսինքն զգում ես, որ խելօք աղջիկ է,
որովհետև չէ՞ որ նրա խելքը դեռ չես շափել:

—Այո, զգում եմ, — կրկնեց Գարեգինը:

Կարճ ժամանակ լռեցինք: Ես դիտում էի նրան.
Նա բոլորովին հանգիստ էր: Առհասարակ նա, ինչ
դրութեան մէջ էլ լինէր, միշտ պահպանում էր իւր
անտարբերութիւնը, որը շատ անգամ ինձ ուղղակի
բթամտութեան արդիւնք էր երևում, թէև նա ամե-
նին բթամտ չէր, և խօսքերից նկատում էի, որ
ընդունակ է երբեմն իրերի խօրքը մտնելու:

—Լսիր, — ասացի լռութիւնն ընդհատելով. —
կարող է նա տգէտի և յիմարի մէկը լինել, ինչպէս
մեր «մարդու տալու» շատ աղջկերք են լինում: Գու-
հօ գիտես, որ չեն խօսում կամ շատ խելօքութիւ-
նից, կամ շատ յիմարութիւնից:

—Ոչ, սխալում ես. լռողները միշտ խելօք են
լինում: Մինչև անգամ այն յիմարը, որ լռում է, խե-
լօք է. կընչանակի՝ նա այնքան խելք ունի, որ հասկա-
նում է, որ ինքը յիմար է և, լռելով, չի ուզում ցոյց
տալ, որ յիմար է: Այո, շխօսողը միշտ խելօք է:

—Ուրեմն, քո կարծիքով, անասունները խելօք
են մարդկանցից, — ասացի ես ծիծաղելով:

—Անշունչտ, — եռանդով վրայ բերեց բարեկամս:
—Ի հարկէ, խելօք են և հազարապատիկ աւելի խե-

լօր, բան մարդիկ: Թուիր մարդկայինն որ յիմարութիւնն ուզում ես և տես անասունները կատարում են այդ յիմարութիւններից գէթ մէկը: Շատերից մի պարզ օրինակ, ծխախոտ ծխելը յիմարութիւն է, չէ: Իէ ասա տեսնեմ, որ անասունն է ծխախոտ ծխում: Այս բոլէիս ասացիր, որ ես յիմարութիւններ եմ գործում. անշուշտ ակնարկում էիր, որ ես երեք հարիւր ռուբլանոց ապարանջան եմ նուէր տանում հարսնացուիս համար: Ասա տեսնեմ, այն որ անասունն է, որ իւր էգի համար ապարանջան է տանում ընծայ: Եւ ի՞նչ բան են այդ ապարանջանները, այդ ծխախոտը, այս օսլայած շապիկը, որն ուզողի վիզս կտրում է դանակի պէս, այս ձեռնոցները, որոնց մէջ ձեռքերս այրում են այս շոգին, այս կառքը, այս արձանը (այդ բոլէին մենք անցնում էինք Վարանցովի արձանի մօտով), այն ոտիկանը, որ այս բոլէիս այնպէս պինդ թրխկացրեց այն խեղճ սայլապանի մէջքին, հեռախօսի այս սիւնը, սափրիչի այն խանութը... Մարդկային յիմարութիւններ չե՞ն սրանք և այս յիմարութիւններից որ մէկն է անասունն ստեղծում և իւր կեանքի պայմանը դարձնում: Մարդն և անասունը ստեղծում են միևնոյն բնական օրէնքների հիման վրայ, բայց նրանց կեանքի և մահուան պայմանների մէջ այն տարբերութիւնը կայ, որ մարդիկ ապրում են իրենց ստեղծած յիմար ու անմիտ պայմանների

մէջ և մեռնում իրենց յիմարութիւններից, մինչդեռ անասունն ապրում է բնական պայմանների մէջ և բնական օրէնքով էլ մեռնում: Աւրեմն ո՞վ է խելօքը — մարդը, թէ անասունը:

Ես արդէն փորս բռնել էի ծիծաղից և հազիւ էի շունչս յետ բերում. ինձ փերին աստիճանի գուարճալի էր թւում ոչ թէ այն, ինչ որ ասում էր Քարեղինը, այլ այն պաթոսը, որով խօսում էր մեծ գիւտ արած մարդու նման:

Բայց այդ գուարճալի խօսակցութիւնը շարունակելու այլ ևս ժամանակ չկար, որովհետև արդէն հասանք բարեկամիս հարսնացուի տունը:

Գուռը բաց արեց մի պառաւ աղախին: Մի կողմի վրայ թերուած փտած սանդուղքով բարձրացանք գէպի փորրիկ բակը նայող մի շատ նեղ պատշգամբ, որը լուսաւորում էր պատից կախուած բաւական կեղտոտ լապտերով: Բարեկամս պատշգամբից ինձ ուղղակի առաջնորդեց հիւրասենեակը: Այդտեղ ոչոք չկար, բայց հին ձիւ վահաւորակի առաջ, կլորիկ սեղանի վրայ վառուող լամպը ցոյց էր տալիս, որ մեզ սպասում էին: Բարեկամս շաքարեղէնի փաթեթը խնամքով դրեց աթոռներից մէկի վրայ, վերարկուն հանեց, դրեց հարեան աթոռի վրայ և նստեց սեղանի մօտ՝ տանու մարդու նման: Ես էլ հետեցի նրա օրինակին:

Սենեակի կահաւորանքը ցոյց էր տալիս, որ տանտէրերն ունեւոր մարդիկ չէին, բայց ամեն կերպ աշխատում էին ծածկել իրենց չքաւորութիւնը: Քացի հին, շատ հին ձեւի գահաւորակից, որը պատած էր ծաղկանկար չիթով, և կլորիկ սեղանից, այդտեղ կային երկու բազկաթոռ, նոյնպէս չիթ պատտառով, աթոռներ, երեք հայելի՝ մէկը, փոքրը, հորիզոնական ձեւով, գահաւորակի գլխին, միւս երկուսն իրար դէմուդէմ, հանգիստակած պատերից կախուած. փերջիններիս տակ մի-մի սեղան երկ-երկու բրոնզի շամադաններով, և մինչև անգամ մի թանկագին, բայց շատ հին ու խաւը մաշուցած դորգ էլ փռուած էր յատակին: Պատերից մէկի մէջ ևս նկատեցի և մի պահարան, որի զոյութիւնը ծածկելու համար, դռներին կապրել էին միկնոյն պատտառն, ինչ որ պատերին: Կլորիկ սեղանի վրայ ընկած էր մի գիրք: Գա ծիւլ Սիմոնի «Քանուոր կինն Եւրոպայում» գրուածքի ռուսերէն թարգմանութիւնն էր, որ ևս առաջին անգամն էի տեսնում:

— Այս *ևս* է կարգում, — կամաց հարցրի ևս:

— Երեի, — աւելի ևս կամաց պատասխանեց Քարեգինը:

— Ի՞նչ ևս կարծում, այս գիրքը մոռացմամբ է գրել այստեղ, թէ գիտմամբ:

— Չգիտեմ:

Ես գիտում էի բարեկամիս. ըստ երևոյթին,

խիտ անհանգիստ գրութեան մէջ էր. խօսում էր շնչալով և շուտ-շուտ կէս-անհամբեր, կէս-վախկոտ հայեացք էր ձգում հարևան սենեակի դռանը, որն աւելի փոքր և ցածր էր, քան այն դուռը, որտեղից ներս մտանք:

Երկար սպասում էինք, բայց ոչոք ներս չէր մտնում:

— Գուցէ ոչ որ չկայ տանը—, ասացի:

— Ար՛սս—, շնչաց Քարեգինը, ձեռքը շրթունք-ների վրայ դնելով, և ականջները խլշկեց:

Երկրորդ, թէ երրորդ սենեակից նախ ինչ-որ դսպուած քշփշոցի ձայներ լսուեցին, յետոյ յանկարծ— կանացի մի անզուպ ծղրտոց, և ամեն ինչ նորից լռեց առաջուայ պէս: Այդ բոլորը կէս բոպէ էլ չբաշեց:

Քարեկամս, խիտ անհանգստացած, վեր կացաւ և այգպէս էլ մնաց, ականջը դէպի հարևան սենեակի դուռը յարած:

— Սա ի՞նչ բան էր—, զարմացած հարցրի:

— Այս նրա ձայնն էր—, արագ շնչաց Քարեգինը և նոյն անհանգստութեամբ նայում էր հարեւան սենեակի դռանը, որը կիսախուփ էր:

Վերջապէս այդ դուռը բացուեց, և կաւիքները ոլորելով ներս մտաւ գլուխը շիտի-կոպով ծածկած մի գիրուկ, ցածրահասակ կին: Շրթունքները կոշուհուպ ածած՝ նա անվստահութեամբ մօտեցաւ մեզ և,

յատկապէս գառնալով ինձ, կէս-Թիֆլիսի, կէս-զրական բարբառով ներողութիւն խնդրեց մեզ այսրան սպասեցնել տալուն համար: Քարեկամս մեզ ներկայացրեց իրար: Այդ կիներ նրա հարսնացուի մայրն էր:

— Ո՞րտեղ է Սառան, — հարցրեց Քարեզինը, մի կարճ անհամ լռութիւնից յետոյ, երբ մենք նստեցինք:

— Սառան խելուին գուքայ:

— Իսկ պարոն Սահակը որտեղ է:

(Պարոն Սահակը բարեկամիս ապագայ աներն էր):

— Շարաթ գիշիրնիրը նա մէ փոքր ուշ է տուն գալի, շունքի հաշիւնիր ունին:

Խօսակցութիւնն այդ եզանակով շարունակուեց մի հինգ րոպէ:

Վերջապէս մտաւ և Սառան:

III.

Երևի բարեկամիս պատմածի ազդեցութեան տակ, ամենից առաջ նայեցի նրա յոնքերին և զարմացայ, որ Քարեզինը տարօրինակ բան էր տեսել այդ յոնքերի մէջ. յոնքերը սովորական յոնքերից էին, թէև, ճիշտ է, բաւական բարակ, երկայն և ուղղաձիգ: Բայց այդ յոնքերը ճշմարիտ որ տպաւորիչ էին երևի նրա համար, որ, իրար մօտեցած, զրեթէ իրար հետ միացած, եթէ դաժան շասեմ, գոնէ շատ խիստ արտայայտութիւն էին տալիս նրա նուրբ գծուած մաքուր սպիտակ դէմքին: Անկոտորում յա-

մառութիւնն և կամքի ոյժ էր արտայայտում նրա հայեացքը—սուր, կասկածոտ և թափանցող: Նրա հպարտօրէն բարձրացած գլխին միանգամայն համապատասխանում էր արտաքինը—բարձրահասակ, բարեկազմ, բայց բարակ իրանին անհամաչափ փաթամ կրծքով: Բարեկամս չէր սխալուել. Սառան եթէ քսանհինգ տարեկան շինէր, քսան-քսաներկու անպատճառ կըլինէր: Նա ներս մտաւ ջղային քայլուածքով և ներս մտնելիս գլխի մի շարժումով դէպի մէջքը ձգեց ուսի վրայ ընկած հաստ գիսակը:

Նրան տեսնելուն պէս Քարեգիները վեր լծաւ տեղից, վազեց դէպի նա, ուզեց ձեռք տալ, բայց որովհետև Սառան իւր հայեացքն ինձ էր ուղղել, ձեռքը յետ քաշեց և շնջաց.

—Այս... այս իմ բարեկամս է... անցեալ օրը որ ասացի:

Մինչդեռ կըմօտենայի Սառային, որ ներկայանամ նրան, նա նոյն ջղային արագ քայլուածքով ինքը մօտեցաւ ինձ, տղամարդի պէս ամուր սեղմեց ձեռքս, որի ժամանակ զգացի, որ նրա մատները յիրաւի խիստ երկար են, առանց մի խօսք անգամ արտասանելու՝ նստեց մօր կողքին և սկսեց պինդ-պինդ նայել ինձ իւր յամառ, կարծես դայրացած, աչքերով: Միանգամից հասկացայ խեղճ բարեկամիս դրութիւնը. յիրաւի, երբ այդ աղջիկը պինդ-պինդ նայում էր քեզ, դու չէիր կարող նայել նրան. իւր

սուր, անթարթ հայեացքով նա կարծես կասկածում
և քննում էր, և այդ հայեացքին առանձին ոյժ էր
տալիս այն հանգամանքը, որ նա պինդ-պինդ նայե-
լիս ամենեկին շէր խօսում. նա լուռ հիպնոսահարում էր,
և այդ միջոցին, նրան շնայելով էլ, զգում էիր, որ
ընկճում ես նրա առաջ, որ նրա մէջ մի բան կայ,
որը ճնշում է քեզ ակամայ:

Աղջկայ ներս մտնելուց յետոյ, մայրը վեր կա-
ցաւ և դուրս գնաց: Սառան նրան ճանապարհ
դրեց մի երկար, անհաշտ հայեացքով: Պարզ երևում
էր, որ նրանք ատում էին իրար, և Սառան ամե-
նեկին շէր ծածկում այդ բանը:

Բարեկամս գրպանից հանեց երեքհարիւր ռուբ-
լանոց ապարանջանի տուփը, բաց արեց և դրեց
հարսնացուի առաջ, սեղանի վրայ, որի մօտ նստած
էինք երեքս: Ապարանջանի մէջ հազցրած խոշոր
շողակներ իրեն շրջապատող բազմաթիւ մանր շողակ-
ների հետ ճրագի լոյսի տակ սփաղաց խոշոր աստղի
հրաշալի նուրբ գոյներով:

— Այս մեր խաշեղբօր նուէրն է, — ասաց Քա-
րեգինը, տարօրինակ կերպով կարմրելով:

Ապշած նայեցի նրան. եթէ կատակ էր անում,
չատ յիմար կատակ էր: Կարծես նա հասկացաւ ինձ
և, չզիանձ յիմարաբան, թէ խորամանկութեամբ
ժպտալով, նայեց ինձ:

— Բարեկամս կատակ է անում, օրիորդ, —

ասացի ևս, դառնալով Սառային, որն իւր յամառ հայեացքով նորից սկսել էր նայել ուղղակի աչքերիս.—այդ ինքն է գնել և ինքն էլ նուիրում է ձեզ:

—Որք դու յիմարութիւն անուանեցիր,—վրայ բերեց Քարեգինը և խիստ ուրախ ծիծաղեց:

Այդ բոպէին նա ինձ վրայ խկլը իգիօտի տպաւորութիւն թողեց:

Սառան իւր հայեացքը նրա վրայ գարձրեց և գարձեալ ոչինչ չառաց. նա կարծես թէ զարմացած էր և չէր հասկանում, թէ ինչ ենք խօսում մենք: Սառջը դրած ապարանջանին ամենևին ուշադրութիւն չգարձրեց:

—Լաւ, ապարանջանը որ ևս ևմ նուիրում, հապա այս ով է նուիրում,—ասաց Քարեգինը, շտապով վեր կացաւ, գնաց աթոռի վրայից վերցրեց շաքարեղէնի բոնբոնիերը, թղթի փաթեթը գէն շարտեց և բերեց դրեց Սառայի առաջ:—Սյս հօ գն ևս նուիրում:

Արդէն համը տարաւ: Երջանկութիւնից բոլորովին յիմարացել էր և չէր նկատում, որ աւելի ու աւելի էր ապշեցնում Սառային իւր վարմունքով: Թէև այդ աղջիկը դեռ ևս ոչ մի խօսք չէր արտասանել, բայց այն հայեացքից, որով նա նայում էր մերթ իւր վիտացուին, մերթ ինձ, տեսնում էի, որ յիրաւի բաւականին խելացի և կրթուած աղջիկ պիտի լինի, և ևս զարմանում էի, որ նա համա-

ձայնել էր այդ իդիօտի կինը լինելու: Բայց որ Սառան ամենևին չէր հաւանում իւր փեսացուին և նրա վրայ նայում էր բարձրից, նոյն իսկ արհամարհանքով, այդ ես տեսայ յետոյ, երբ նա սկսեց այլ ևս ոչ մի ուշադրութիւն չգարձնել Քարեգնի վրայ:

Սակայն ես զլիսաւորապէս իմ հոգսումն էի. բանն այն է, որ ես վախենում էի, թէ մի գուցէ ընկերս իւր յիմար վարմունքներով իմ վարկն էլ ձգի Սառայի առաջ, որը, զարմանալի է, միմիայն այն բանով, որ չէր խօսում և շարունակ զարմացած դիտում էր, — մի տեսակ անորոշ երկիւղ էր ազդում և ստիպում էր մարդու շատ զգոյշ լինելու: Այդ պատճառով շտապեցի վերջ տալ Քարեգնի յիմարութիւններին և, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ այդ բոլորին ձեռքումս էր թիւլ Սիմոնի գիրքը, հարցրի.

— Այս գնէք էր կարգում, օրիորդ:

— Ոչ, — պատասխանեց նա:

Նրա ձայնը բաւական կոպիտ էր և անախորժ:

— Հապա ինչո՞ւ էր այստեղ դրուած, — մէջ ընկաւ Քարեգինը:

Սառան, նրան պատասխանելու տեղ, ինձ դիմեց.

— Մի ընկերուհի ունիմ. նա էր խնդրել կարդալու, այս երեկոյ վերադարձրեց:

— Ուրեմն քննն է, — աթոռը մօտ քաշելով

հարցրեց Քարեզինը:

Այդ եզակի դիմումն, ըստ երևոյթին, բաւական անհաճոյ թուաց Սառային: Նա իւր երկայն բարակ յոնքերը կիտեց, ձեռքերը խաշեց կրծքին և, թերթերունքների տակից նայելով գէպի ցած, պատասխանեց ոչ-խակոյն.

— Այո:

Իսկ դու կարգացնել ես այդ գիրքը, — նորից հարցրեց Քարեզինն, ըստ երևոյթին խիստ ուրախացած, որ առիթ ունի խօսելու իւր հարսնացուի հետ:

Սառան յանկարծ ձեռքերը հեռացրեց կրծքից և դայրացած գէմքով վեր կացաւ տեղից:

— Ներեցէք, — դարձաւ ինձ, — տուէք այդ գիրքը պահեմ:

Եւ նախ քան ես ծիւլ Սիմոնը կըմեկնէի նրան, նա խից այն ձեռքիցս, տարաւ գրեթէ շարտեց պատի մօտ, հայելու տակ դրուած սեղանի վրայ և, վերադառնալով, նստեց իւր առաջուայ տեղը: Զայրոյթից նրա սպիտակ գէմքին թեթև շառագոյն էր պատել, աչքերը չար արտայայտութիւն Էին ստացել:

Հարսնացուի այդ անակնկալ տարօրինակ վարմունքն, ըստ երևոյթին, խիստ կոտորեց խեղճ փեսացուի սիրտը: Սկզբում նա տեղնսւտեղը սառեց, յետոյ, երբ Սառան վերադարձաւ և նստեց նրա

մօտ, նա մինչև անգամ վախկոտութեամբ աթոռը միքիչ յետ քաշեց:

— Գու վիրաւորուեցիր, — անհամարձակութեամբ հարցրեց Քարեգինը:

— Ես չեմ սիրում, երբ ինձ հարցաքննում են, — բաւական կոպտութեամբ, աւանց նրան նայելու, պատասխանեց Սառան:

— Յետոյ ես քեզ երբ հարցաքննեցի, — թոթովեց խեղճ բարեկամս:

— Դո՛ւք այս ըոպէիս հարցրիք՝ կարդացել եմ ես այն գիրքը: Ինչո՞ւ չպէտք է կարդացած լինէի:

Բարեկամս բոլորովին կուշ եկաւ:

— Ես... Ներողութիւն... Ես չէի կարծում... Ես հարցրի այնպէս... Եթէ գիտենայի... Ներիր, խնդրում եմ:

Աստուած գիտէ, թէ ինչով պիտի վերջանար այդ տարօրինակ ընդհարումը, եթէ այդ ըոպէին չմանէր Բաղիրեանը:

Խեղճ բարեկամս այնքան շփոթուած էր, որ բոլորովին մոռացաւ ինձ ներկայացնելու իւր ապագայ աներօջը: Այդ պատճառով ներկայացայ ինքս անձամբ: Բարձրահասակ, բայց մէջքից խիստ կռացած, արդէն ծերացած մարդ էր, բոլորովին սպիտակ մազերով, ծիծաղկոտ երեսով և երկարափեշ սիւրտուկով: Բարութիւնը կաթում էր նրա դէմքից: Ինձ ընդունեց վերին աստիճանի սիրալիր կերպով:

Սառան կարծես հօրն էր մնում. վերկացաւ, իւր տեղը տուեց հօրը և անմիջապէս դուրս գնաց:

—Օհօ, նուէր էք բերել,—բացականչեց Բագիրեանը, տեսնելով սեպանի վրայ, բացփռուփի մէջ գրուած ասպարանջանը: Նա վերցրեց, կարճ ժամանակ դիտեց, առաջուց աչքերին ակնոցներ դնելով. դիտելուց յետոյ վայր դրեց և յետոյ բաց արաւ շարքերէնի բոնրօնիւրը:—Յյս էլ ուրիշ նուէր: Ինչպէս երևում է, դուք այնքան էլ միամիտ չէք եղել, ինչպէս ես էի կարծում,—ասաց նա և, մտերմաբար ժպտալով, կամաց խփեց Քարեգնի ուսին:

Բայց Քարեգինը դեռ ևս շփոթուած էր. վերին աստիճանի խզճալի գրութեան մէջ նա կաշկանդուած էր մնացել նստած տեղում և իւր աներոջ մտերմական խօսքերին պատասխանելու համար, ըստ երեւոյթին, ուզեց մի բան ասել, բայց ոչինչ չկարողացաւ արտասանել. նրա անալի դէմքի վրայ մի լացախառն ժպիտ երևաց:

Բագիրեանը քննական հայեացքով նայեց նրա աչքերին և, առանց շտապելու, լրջութեամբ հարցրեց.

—Ի՞նչ է պատահել. ձեզ նեղացրե՞լ են:

Լացախառն ժպիտն աւելի ծամածուեց Քարեգնի դէմքը և նա ոչ-խսկոյն պատասխանեց.

—Ոչ... Ե՛ս նեղացրի:

—Ո՛ւմ:

— Օրիորդին:

— Ի՞նչպէս:

— Նա բարկացաւ ինձ վրայ:

— Ինչո՞ւ:

— Չգիտեմ... կարծեց, թէ ես ուզում եմ հարցաքննել իրեն, մինչդեռ հարցաքննելու ես ամենեին միտք չեմ ունեցել... Ես ներողութիւն խնդրեցի... չներեց և... դուրս գնաց:

Կարող էք երեակայել իմ և Բաղիրեանի դարմանքը, երբ այդ ոգորմելին քիչ մ'նաց, որ լաց լինէր: Սակայն Բաղիրեանը, ինչպէս երևում էր, ինձնից աւելի լաւ էր ճանաչում իմ ընկերոջը: Նա ժրպտաց, ձեռքը դարձեալ մտերմօրէն դրեց իւր փեսացուի ուսին և կէս-կատակով, կէս-լրջութեամբ սկսեց մխիթարել նրան:

— Բան չկայ, սիրելիս, բան չկայ, — ասում էր նա: — Գուր դեռ չէք ճանաչում Սառային: Չիշտ է, նա վերին աստիճանի քմահաճ, յամառ և հայարտ ազգիկ է. բայց և այնքան բարի է, որ ձեր բարութիւնը նրա բարութեան մօտ — դերօ: Քմահաճ է, երբեմն խիստ կոպիտ, շատ անգամ ուղղակի կռուարար, — տեսնում էք, ես նրա բոլոր պակասութիւններն ասում եմ, — բայց այդ բոլորը — արտաքուստ, իսկ սիրտն ազանու սիրտ է: Անցեալ օր (Բաղիրեանը, ձեռքը դեռ ևս Քարեգնի ուսի վրայ դրած, դարձաւ ինձ) երեսիս ուղղակի այնպիսի կոպիտ

խօսքեր ասաց, որ դուք լինէիք նրա հայրը, դուրս կանէիք տանից: Պահանջեցի, որ ներողութիւն խընդրիւ: Ձխնդրեց և աւելի մեծ կողտուժիւններ ցոյց տուեց: Հետեանալ օրը, երբ ես այդ դէպքը մտացել էի, մտաւ ինձ մօտ և ասաց... Ի՞նչ էք կարծում, ի՞նչ ասի, որ լաւ լինի. «Ինչո՞ւ ինձ չծեծեցիր» ասաց:— Ինչի՞ համար, — հարցնում եմ դարմացած: «Նրան համար, ասում է, որ երեկ քեզ վիրաւորեցի»: Ահա թէ ինչպիսի աղջիկ է նա, բարեկամս, — դարձաւ Բաղիրեանը Փարեգնին:— Ա՛յ, շուտով կապրէք միասին և կըտեսնէք, ճիշտ եմ ասում, թէ ոչ:

Փարեգինն այդ խօսքերից փոքր ինչ հանդրատացաւ:

— Ախր նուէրիս էլ ուշագրութիւն չգարձրեց,
— գանգատուեց նա:

— Այս հրաշալի ապարանջանի՛ն:

— Այո:

— Օ՛, անհոգ եղէք. անկարելի է, անհնարին բան է, որ ուշագրութիւն գարձրած չլինի: Կին չէ: Բայց նա այնքան խելօք է, որ այդ ցոյց չէր տալ ձեզ: Պէտք է իմանար, որ նա շատ խելօք աղջիկ է, շատ զրքեր է կարգացել, ճ, շատ: Ա՛յ, այդ կողմից կարող էք վախենալ նրանից, — աւելացրեց Բաղիրեանը և, նայելով ինձ, բարեսրտութեամբ ծիծաղեց:

Ներս մտաւ Բաղիրեանի կինը, կաւիքները ոլորելով: Ապարանջանը տեսնելուն պէս նրա աչ-

քերը փայլեցին, չեմ իմանում՝ հիացմունքից, թէ նախանձից։ (Այդ կինը, իւր ամուսնու հետ համեմատած, դեռ ևս շատ ջահէլ կին էր և խիտ էր կոտորաւում)։

Գարեգնի տրամադրութիւնը, աներոջ խօսքերից յետոյ, այնքան լաւացաւ, որ նա այժմ մի քանի անգամ նոյն խոկ «գու»-ով սկսեց խօսել իւր աներոջ և գորանչի հետ։ Այդպէս էր նրա բնաւորութիւնը. բաւական էր, որ մէկը դիւր դար նրան, խկոյն կրսկսէր մտերմօրէն խօսել նրա հետ, թէկուզ առաջին անգամ լինէր ծանօթանալիս։

Բայց նրա ուրախ տրամադրութիւնը դարձեալ խանգարուեց, և խանգարողը դարձեալ Սառան էր։

Սառան մտաւ և մատուցարանով թէյ բերեց։ Յոնքերը կիտած, առանց ոչորի նայելու, նա բաժանում էր բաժակները, հրք հայրը, բարեսրտութեամբ ժպտալով, նկատեց նրան.

— Լսիր. ինչո՞ւ ես բարկացրել այս պարսնին։

Սառան ոչինչ չպատասխանեց։

— Ինձ նայիր։

Սառան, հանգիստ վիրաւորանքով աչքերը վայր թողած, կանգնած էր հօր առաջ և, մատուցարանը ձեռքին բռնած, սպասում էր, որ նա վերցնի իւր բաժակը։

— Չես լսում, ինձ նայիր, — կրկնեց հայրը։

Սառան դարձեալ կանգնած էր լուռ և արձանացած։

— Տես, ինչ սիրուն բան է բերել քեզ համար, — ասաց հայրը և, ապարանջանի տուփը վերցնելով, կամաց խփեց նրա կզակին:

Սառան մատուցարանը պահեց մի ձեռքում, միւսով վերցրեց վերջին բաժակը, դրեց հօր առաջ և դիմեց դէպի դուռը: Նրա գեղեցիկ դէմքն այնպիսի մի զսպուած կատաղութիւն էր արտայայտում, որ ևս երկիւղով սպասում էի, թէ ահա, որտեղ որ է, մի սկանդալ պիտի հանի:

— Գէ, դա արդէն բանի նման չէ, — կէս-կատակով, կէս-լրջութեամբ յանդիմանեց նրան հայրը: — Գու մեզ բոլորովին խաղք ու խայտառակ ևս անում:

Սառան կիսաճանապարհին յանկարծ շուռ եկաւ և դարմանալի հանգստութեամբ նկատեց.

— Որպէս զի ձեզ «խաղք ու խայտառակ» չանեմ՝ մի խօսէք ինձ հետ այնպէս, ինչպէս երեխայի հետ են խօսում:

Ու, շուռ գալով, դուրս գնաց մատուցարանը ձեռքին և դուռն էլ պինդ շրխկացրեց իւր ետևից:

Բաղիրեանը նայեց ինձ և ժպտաց:

— Տեսնո՞ւմ էք, նոր կոպտութիւն: Տեսնո՞ւմ էք, սիրելիս, — դարձաւ նա Գարեգինին, — ինձ հետ էլ է այդպէս վարում: Բայց հաւատացնում եմ ձեզ, այդ խօսքերն են միայն որ կան, իսկ սիրտը ազաւնու սիրտ է:

— Ելլախաւ էլ ինձ վրայ շէր, վուր ծիկա էրիտ
(Ժողոտայ), թէ ինչ է՝ առեցի, վուր շուտով հաղնուի,
— միջ մտաւ տիկինն Բաղիրեանը, շրթունքները
կուշուհուսի ածելով, բայց բաւական նկատելի չարա-
խրնդութեամբ: — Խիստ իրասածի է, վուր հատը շունէ:

IV.

Հրաժարուելով Բաղիրեաններէ առաջարկած
ընթրիքից, վերկացայ հրաժեշտ տալու նոր ծա-
նօթներին: Չնայելով պատահած դէպքերին, Քարե-
զինն, ըստ երևոյթին, ուզում էր մնալ, բայց, տեսնե-
լով որ ես ոչ մի պայմանով մտադիր չեմ մնալու, ինքն
էլ վերկացաւ և նոյնպէս հրաժարուեց ընթրիքից:

Գուրս եկանք:

Խեղճի սիրտն այնքան կոտորուած էր, որ մեզքս
զալիս էր ասելու այն, ինչ որ անհրաժեշտ էի հա-
մարում ասել: Բայց և այնպէս, երկար տեղ լուռ
անցնելուց յետոյ, չզիմացայ և ասացի.

— Լսիր. քանի ուշ չէ, ձեռք վերցրու այդ
աղջկանից:

Քարեզինն իսկոյն չպատասխանեց: Նա մի
քայլ յետ մնաց:

— Յետոյ կարող եմ, — ասաց:

Չայնից նկատեցի, որ թուրք կուլ տուեց:

Ակամայ կանգ առայ և զարմացած նայեցի նրա
դէմքին:

— Մի՞թէ, յիրաւի, այնքան սիրահարուած ես, որ չես կարող:

— Այն, չեմ կարող:

— Բայց, յիմար, մի՞թէ չես տեսնում, որ քեզ չի հաւանում, — զայրացած բացականչեցի ես: — Եւ ոչ թէ միայն չի հաւանում, այլ և տեսնել անգամ չի ուզում քեզ:

— Ի՞նչ անեմ: Ես սիրում եմ:

— Լսիր, յիմար, ի՞նչ եմ ասում, — զայրոյթս զսպելով, բարեկամարար ասացի և, առնելով նրա թիւր, առաջ տարայ: — Նա խիտտ յամառ և, զլիաւորը, շարահոգի ազջիկ է, այնքան շարահոգի, որ ամենին չի կարողանում զսպել իրենն գոնէ լոկ քաղաքաւարութեան համար: Ի՞նչ ես նայում նրա հօր ասածներին. նա նոյնքան ազաւնու սիրտ ունի, որքան դու — գայլի սիրտ: Նա քո կեանքը կը թունաւորի:

— Ի՞նչ անեմ:

— Փնւ, իզի՞տ, — սրտանց թքեցի և, նրա թիւր թողնելով, քայլերս արագացրի:

Այլ ևս ի՞նչ խօսէի այդ տխմարի հետ, որ իւր սեպհական երջանակութեանն անգամ այդպէս անփոյթ կերպով էր վերաբերում: Բայց ոչ, *անփոյթ* բառը սխալ գործածեցի: Նա անփոյթ չէր. ընդհակառակը, նրա յուսահատօրէն հնչող ձայնից նկատում էի, որ Սառայի վարմունքը շափազանց ազ-

դել է նրա բարի սրտին, բայց նա կամքի այնքան բաջուժիւն չունէր, որ դիմադրէր Սառայի իւր վրայ հէնց սկզբից թողած տպաւորութեանը, որին նա «սիրահարութիւն» էր անուանում: Սակայն ես ապշած էի մնացել, թէ մի՞թէ այդ կռուարար աղջիկը կարող էր մարդու մէջ որեւէ քնքոյշ զգացում յարուցանել, բացի յետ մղող զգացումից, սրպիսի զգացում յարուցել էր, օրինակ, իմ մէջ: Այդ բանը մանաւանդ զարմանալի էր Քարեգնի վերաբերմամբ, որին շատ լաւ ճանաչում էի, գիտէի, թէ որքան մեղմ սրտի տէր է: Կամայ-ակամայ գալիս էի այն եղբակացութեան, թէ Սառայի արտաքինը (որը, յիրաւի, հրաշալի էր) այնքան զօրեղ տպաւորութիւն էր գործել բարեկամիս վրայ, որ նա կորցրել էր մարդկանց ներքինը գնահատելու ընդունակութիւնը:

— Ես նրան առիթ չեմ տալ, որ կեանքս թունաւորի, — ասաց Քարեգինը, երկար տեղ հտեիցս լուռ գալուց յետոյ:

— Գու քո այդ ամբողջ իդիօտութեամբ արդէն մի մեծ առիթ ես, էլ ի՞նչ նոր առիթ պէտք է տաս, — նկատեցի ես:

— Սխալում ես. ես իդիօտ չեմ:

— Գու ո՛չ թէ միայն իդիօտ ես, այլ և, կարելի է ասել, — իդիօտների թագաւորը:

— Սխալում ես. ես չափազանց բարի եմ:

— Բարի, իդիօտ — միևնոյն է:

Գարեգիները քայլերը մեծացրեց և հաւասարուեց ինձ:

— Լձււ. ի՞նչ ես ուզում, որ անեմ, — ասաց վրճ-
ուական ձայնով: — Թողնե՛մ նրան:

— Ի հարկէ, յիմար:

— Ինչի՞ համար: Ձէ, մի ասա, տեսնեմ, ինչի՞ համար:

— Որ ասում եմ իզիօտ ես: Ե՛լի ասե՛մ, ինչոր
այս բոսլէիս ասացի:

— Նա չի սիրում ինձ, չէ՞: Լձււ: Հապա ինչո՞ւ
մատանիս ընդունեց: Ձէր ճանաչում ինձ այն ժա-
մանակ, չէ՞: Լձււ: Հիմա հօ ճանաչեց:

— Այո, ճանաչեց, և տեսար, որ ոչ ապարան-
ջանդ ընդունեց, ոչ բոնբոնիերդ:

— Այո, ճիշտ է, նա ոչ ապարանջանին
ուշագրութիւն դարձրեց, ոչ բոնբոնիերին, բայց հօ
մատանին դեռ մատի՛ն էր: Տեսար, թէ ոչ:

— Տեսայ:

— Ինչո՞ւ չհանեց մատից, չտուեց ինձ և չասաց.

«Պարոն, ահա ձեր մատանին. ես այլ ես չեմ կա-
մենում ձեր կիներ լինել, որովհետև քննեցի ձեզ և
տեսայ, որ դուք իզիօտ էք»:

Յանկարծ այնպիսի մի ծիծաղ բռնեց ինձ, որ
երկար ժամանակ չկարողացայ հանգստանալ:

— Բայց նա այդպիսի բան չարեց, — շարունակեց
Գարեգիները նոյն պրզիւով, առանց որևէ ուշագրու-
թիւն դարձնելու ծիծաղիս: — Ինչո՞ւ չարեց. հօ կարո՞ղ

էր անել. շէ՞ որ զարգացած ազջիկ է, վերջապէս համարձակ է: Ինչո՞ւ չարեց: Հը՞, քեզ եմ հարցնում, ինչո՞ւ չարեց:

— Որովհետև խելքը գնում է քեզ համար:

— Չէ, մի հեգնիր, խնդրեմ: Առա, ինչո՞ւ չարեց:

— Ես ի՞նչ գիտեմ:

— Հն՛, այդտեղ կայց,—յազթանակը տարած մարդու պէս վրայ բերեց նա:— Չարեց, որովհետև... ոչ ես եմ ճանաչում նրան, ոչ դու: Եւ ի դուր ես շտապում ինձ խորհուրդ տալու, որ ձեռք վերցնեմ նրանից: Մի՛նչև որ ինքը չմերժի, ես ձեռք վերցնողը չեմ, չեմ և չեմ:

— Ե՛հ, դու գիտես: Յտեսութիւն:

Մեր փողոցները բաժանւում էին. թողի նրան և գիմեցի գէպի բնակարանս:

Տասը քայլ չհեռացած, Գարեգիներ կանչեց ետևիցս.

— Սպասիր:

Կանգ առայ:

— Գու կըտեսնես, որ մենք չափազանց երջանիկ կըլինինք:

— Տայ Աստուած, —ասացի և շարունակեցի ճանապարհս:

— Եւ դու էլ կընախանձես, — գոռաց նա ետևիցս և ծիծաղեց:

«Յիմար», ասացի ինքս ինձ նրա հասցէին և առաջ անցայ:

Անցաւ մօտ տասն օր: Այդ ժամանակամիջոցում ես ամենևին տեղեկութիւն չունէի Քարեզինից: Բայց ահա մի երեկոյ խիստ ուրախ տրամադրութեամբ և իրեն ոչ-յատուկ աշխոյժով մտաւ ինձ մօտ, յայտնեց, որ առաջիկայ կիրակի օրն արդէն լինելու է իւր հարսանիքը, և ասաց, որ եթէ պատրաստութիւններ ունիմ տեսնելու՝ տեսնեմ:

— Ես քո խաշեղբայրը չեմ լինիլ, — վճռական տոնով ասացի ես:

Խեղճը հէնց այնպէս էլ սառած մնաց:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ նախ՝ ես չեմ հաւատում, որ Սառան համաձայնած լինի քեզ հետ պսակուել... .

— Աստուած է վկայ, երդում եմ արևովս, — եռանդով ընդհատեց խօսքս Քարեզինը, — երեկ ասաց, որ իրեն համար միևնոյն է՝ երբ ուզում եմ պսակուենք: Ես էլ ասացի՛ այս կիրակի:

— Այդ միևնոյն է. վերջին բոլէին էլ նա կարող է քեզ մերժել:

— Այդպիսի բան չի պատահիլ. Աստուած է վկայ, չի պատահիլ: Երևի անցեալ օրուայ նրա ցոյց տուած վարմունքն է թելադրում քեզ այդպէս կարծելու: Բայց սխալում ես, շատ ես սխալում: Նա այժմ ինձ հետ շատ սիրով է վարւում: Երեկ մինչև

անգամ թոյլ տուեց, որ ձեռքը համբուրեմ և, երբ համբուրում էի, քթիցս բռնեց ու ծիծաղեց:

Որովհետև ես էլ սկսեցի ծիծաղել, նա նորից եռանդով Աստծուն վկայ կանչեց, որ ճիշտ է ասում:

— Այժմ հետս նստում խօսում էլ է, և էլ պինդ-պինդ չի նայում երեսիս, — շարունակեց Քարեպինը: — Իմ նուիրած ապարանջանն էլ արդէն բանեցնում է: Իսկ բոնբոնիերի շաքարեղէնն էլ, — այն չէ. նրանից յետոյ ես ամեն երեկոյ տանում եմ, — երեկ պատշգամբում նստած՝ միասին էինք ուտում: Երկու հաս ինքն իւր ձեռքով դրեց բերանս: Յետոյ, երբ ես կամեցայ նոյնն անել, մատս կծեց և էլի ծիծաղեց: Քիտե՛ս, նա ծիծաղում է շատ ուրիշ կերպով. ծիծաղում է յանկարծ և յանկարծ էլ լռում: Յետոյ ասաց, որ գնանք ման գանք: Կառք նստեցինք և գնացինք Մուշտայիս: Զեռքիցս բռնած, տարաւ գետի ափը և սկսեց քարեր շարտել գբի մէջ կռկռացող գորտերի վրայ: Յետոյ մի քար էլ վերցրեց, պատրաստուեց նետելու և դարձաւ ինձ ու ասաց. «Այստեղ նայիր»: Նայեցի: «Ո՛ր ձեռքով եմ շարտում» հարցրեց: — Աջ, — ասացի: Քարը ձեռքի ուժգին թափով շարտեց այս անգամ գետի կողմը: Ու, երբ շարտեց, հարցրեց. «Ոչինչ չնկատեցիր»: Ի՛նչ, — հարցրի: «Չնկատեցիր, — ասաց, — որ ես աջ ձեռքս շարժում եմ ձախլիկ մարդու պէս»: Եւ որովհետև ես չհասկացայ նրա խօսքերի իմաստը, նա բացատրեց ինձ հետևեալ կեր-

պով. «Կանայք առհասարակ ձեռքի ճարպիկ և ուժգին թափ չունին,—ասաց.—նրանք աջ ձեռքով մի բան չպրտում են այնպէս, ինչպէս տղամարդը ձախ ձեռքով կըչպրտի»: Յետոյ յանկարծ հարցրեց. «Գետը որ ընկնեմ, ի՞նչ կանես»:—Ես էլ քո ետեից կընկնեմ, —ասացի: «Յիմար» ասաց:

—Ի՞նչ:

—Ասաց «յիմար»:

—Հէնց սւղղակի այդպէս:

—Ի՞նչպէս:

—Ուղղակի ասաց յիմար:

—Այո: Աստուած է վկայ:

—Յիմար, երդում էլ ես, —աղաղակեցի ես:—Նա քեզ արհամարհանքով յիմար է անուանել, և դու դեռ պարծենում էլ ես:

—Արհամարհանքով: Այ, տեսնում ես, որ սխալում ես: Գու էլ ես ինձ միշտ յիմար անուանում, իսկ անցեալ օրը մինչև անգամ իղիօտ էլ անուանեցիր: Բայց դա չի նշանակում, թէ դու ինձ արհամարհում ես, այլ նշանակում է, որ սիրում ես ինձ և մօտիկ բարեկամ ես: Այդպէս էլ նա:

—Իբր թէ նա քեզ այնքան սիրում է, էլի, որ ամեն տեսակ ածական կարող է տալ:

—Ի հարկէ: Եւ չեմ հասկանում, թէ ինչո՞ւ չպէտքէ սիրի ինձ: Ինչո՞ւ եմ ես վատ ուրիշներից:

Բայց դու զիտես, որ երեկ նա ինձ «լորի» էլ անուանեց:

— Ի՞նչ:

— Լորի:

Ծիծաղը նորից ակամայ դուրս թռաւ բերանիցս:

— Այդ այն ժամանակն էր, — աւելացրեց Քարեզինը, — երբ ես համբուրում էի նրա ձեռքը:

— Օ՛, ինչ երեկի կերպով բնորոշել է քեզ ձեռքը համբուրելու միջոցին ցոյց տուած շնորհքդ, — բացականչեցի ես:

— Ա՛յ ինչպէս էր, — բացատրեց նա: — Ես նայեցի նրա մատներին և հարցրի. — Ինչո՞ւ մատներդ այդքան երկար են: «Քեզ ծեծելու համար» ասաց: — Թէ՛ համբուրելու համար, — վրաբերի ես: «Ձէ, ուզակի ծեծելու համար» ասաց: «Երբոր ամուսնանանք, — աւելացրեց, — ես պէտք է քեզ ծեծեմ»: Լաւ, — ասացի, — երբոր ամուսնանանք, ինչքան ուզում ես՝ ծեծիր. բայց հիմա թոյլ տուր համբուրեմ: — Նա ձեռքը մօտեցրեց շրթունքներին այնպէս, ինչպէս տէրտէրներն են տալիս համբուրելու, ու, երբ ուզում էի համբուրել, ցուցամատով և միջին մատով հուպ տուեց քիթս ու ձիգ տուեց:

— Յետոյ քիթդ չցաւեց:

— Կարծեմ, ցաւեց, — ձայնակցեց նա ծիծաղիս:

— Վայ, քո մութը շմարի, Քարեզին, — փորս բռնած, ասացի ես: — Ի՞նչ մազալու բաներ ես սլատ-

մում: Յետոյ: Մուշտայիգում ուրիշ ինչ արիք:

— Յետոյ... Բարձրացանք վերև և նստեցինք մի նստարանի վրայ: Նա զոնտիկի ծայրով մի բան նկարեց հողի վրայ և հարցրեց. «Այս ինչ է»: — Եուն է, — ասացի: «Յիմանր» ասաց...

— Վահ, էլի յիմանր:

— Հա: Ասաց. «Յիմանր, բաս շունը ոտներ շի ունենալ»: Ասացի. — Նկարիր ու կունենայ, էլի: — Աւ ծիծաղեցի:

— Նա էլ ասաց՝ «լորի»:

— Ձէ, «լորի» այն մի անդամն ասաց: Նկարած բանի վրայ յանկարծ խաշ քաշեց բազմապատկութեան նշանի ձևով ու ասաց զայրացած. «Այս ոչ թէ շուն է, այլ ատրճանակ»:

— Ինչ:

— Ատրճանակ:

Չգիտեմ ինչու, այդ բանն ինձ խիտտ զարմացրեց:

— Լաւ. ինչո՞ւ անպատճառ ատրճանակ էր նկարել, — հարցրի:

— Չգիտեմ, — եղաւ Քարեզնի կարճ, անփոյթ պատասխանը:

— Չբացատրեց:

— Ձէ: Միայն ասաց. «Մարդ կարո՞ղ ևս սպանել»: Ասացի. — Ձէ: — Կարճ ժամանակ մտածութեան

մէջ ընկաւ. յիտոյ յանկարծ ասաց. «Իսկ եթէ ես հրամայեմ, որ սպանես» :—Սյն ժամանակ կըստանեմ, —ասացի: «Լաւ. սպանիր այս բղէղն» ասաց և զոնտիկի ծայրով ցոյց տուեց գետնի վրայ մի կարմիր բղէղ, որ կամաց անց էր կենում մեր առաջով: Վեր կացայ, ոտս բարձրացրի, որ ճխլեմ, բայց յանկարծ մեղքս եկաւ:—Ինչո՞ւ համար, —հարցրի: «Նրան համար, —ասաց, — որ ես եմ հրամայում» :—Շատ լաւ, —ասացի. —բայց մի յանցանք պէտք է ունենայ այս խեղճ բղէղը: «Իրա յանցանքն այն է, —ասաց, — որ կարմիր է և աչքի է ընկնում: Սպանիր այս րօպէիս» : Բայց մինչև որ ես ոտս նորից կըբարձրացնէի, բղէղը լծուաւ: «Ել ի՛նչ մարդ ես, —ասաց, — որ մի բղէղ էլ չկարողացար սպանել» :—Ես աւելի շուտ մարդ կըստանեմ, քան լծէ բղէղ, —ասացի: «Ինչո՞ւ» հարցրեց:—Որովհետեւ, —ասացի, —մարդը վնասակար կենդանի է, իսկ բղէղը—ոչ: «Գու այդ գրքո՞ւմն ես կարդացել, լծէ՞ քեզնից ասացիր» հարցրեց:—Ինձնից, —ասացի: «Լաւ, երբոր դու այդքան խելօք ես, —ասաց, —հապա ասա ինձ, լծէ ի՛նչ բանի համար կարելի է մարդ սպանել» :—Մարդ սպանում են, —ասացի, —կողոպտելու համար: «Ուրի՛շ» :—Ուրիշ... հայրենիքի համար: «Ուրի՛շ» :—Ել չգիտեմ, —ասացի: «Հապա վրիժառու լծեան համար» հարցրեց:—Վրիժառու լծեան համար էլ են մարդ սպանում, —ասացի: «Գու կարո՞ղ ես, —հարցրեց, —

վրիժառույթեան համար մարդ սպանելը : — Ես ոչորի հետ այնպիսի գործ չեմ ունեցել և չեմ ունենալ, — ասացի, — որ իմ մէջ մարդ սպանելու չափ վրիժառույթիւն ծագի: «Իսկ եթէ, — ասաց, — հանդամանքներն այնպէս բերին, որ քո մէջ վրիժառույթեան զգացում ծագի: Այն ժամանակ, — ասաց, — քո այդ վրէժն առնելու համար մարդ չե՞ս սպանիլ»: — Օրինակ, ի՞նչ գործում, — զարմացայ ես: «Օրինակ, երբ գործը վերաբերի քո պատուին» ասաց: — Ի՞նչպէս թէ իմ պատուին: «Օրինակ, — ասաց, — երբ այս պարտնը, որ մի քանի անգամ անցաւ մեր առաջով և ամեն անցնելիս յանդուկն հայեացքներ է ձգում ինձ վրայ, յանկարծ մօտենայ ինձ և համբուրի. չե՞ս սպանիլ»: — Օ՛, անպատճառ, — բացականչեցի ես և, յիրաւի, այդ բողբոջն յանկարծ այնպիսի մի կատաղի, անծանօթ զգացում դարձեց իմ մէջ, որ քիչ մնաց վազելի այն լիրբ պարսնի ետևից և ձեռնափայտովս վզակոթին հասցնէի: Սառան ձեռքս սեղմեց: Յետոյ վեր կացանք և տուն եկանք:

— Լսիր, չգիտեմ, դու զգում ես, թէ ոչ, — ասացի ես, — բայց շատ խորհրդաւոր բան պատմեցիր:

Գարեգինը զարմացաւ:

— Խորհրդաւոր:

— Ոչ մի խորհուրդ չտեսնո՞ւր դու այն բանում, որ նա ատրճանակ նկարեց, յետոյ հարցրեց մարդ

կարո՞ղ ես սպանել:

—Ի՞նչ խորհուրդ: Այդտեղ ոչ մի խորհուրդ
չկար: Նա ուզողակի ուզում էր ինձ փորձել, — ահա
բոլոր խորհուրդը:

— Այդ՝ ես քեզնից լաւ գիտեմ. բայց ինչո՞ւ էր
ուզում փորձել:

— Աստուած գիտէ: Երևի նրա համար, որ
կարծում էր, թէ հարկաւոր գէտըում ես չեմ կարող
պաշտպանել իրեն: Բայց զլխաւորն այն է, որ նա...
մի քիչ տարօրինակ աղջիկ է, և, ճիշտն ասած, եր-
բեմն ես չեմ հասկանում նրան: Մուշտայիզից որ
տուն զնացինք և, պատշգամբում նստած՝ թէյ էինք
խմում, չգիտեմ որտեղից՝ կատուի ձագի մի մըլա-
ւոց լսուեց: Նա յանկարծ ցնցուեց, գունատուեց,
խսկոյն ականջները փակեց և ներս փախաւ սենեակը:
Յետոյ երբ հարցրի թէ ի՞նչու այդպէս արեց, ոչինչ
չպատասխանեց. միայն շատ տարօրինակ հայեացքով
նայեց աչքերիս, լեզուն հանեց վրաս, ծիծաղեց,
յետոյ լաց եղաւ: Ահա թէ ինչպիսի աղջիկ է նա:

— Ուրեմն նա խելագար է, — բացականչեցի ես,
վերին աստիճանի դարմացած նրա այդ վերջին պատ-
մութեան վրայ:

Քարեզինը նորից սկսեց երգում-կրակն ընկնել,
որ Սառան խելագար չէ:

— Բայց և այնպէս, ես քո խաչեղբայրը չեմ լի-
նիլ, — կրկնեցի ես: — Եւ քեղ էլ դարձեալ խորհուրդ

կրտամ, որ, քանի ուշ չէ, ձեռք վերցնես նրանից։
Ես ուղղակի խղճում եմ քեզ։ Նա քեզ յարմար հարս-
նացու չէ։ Մի՛թէ դու այդ ինքդ էլ չես զգում։

Կարճ ժամանակ Քարեգինը նայեց ինձ վերին
ատիճանի ուղորմելի, նոյն իսկ պաղատագին հայեաց-
քով. յետոյ քիչ մնաց լաց լինի։

— Ի սէր Աստուծոյ, մի կոտրիր սիրտս, — ա-
ղաչեց նա։ — Ես նրան անչափ սիրում եմ։ Սա իմ
անգրանիկ սէրն է։ Ես պաշտում եմ նրան։ Եթէ
թոյլ տայ, մոմ կը վառեմ նրա ոտների առաջ, կը-
համբուրեմ այն հողը, որի վրայ նա ոտք է գնում։
Նրա գլուխը... Քիտե՞ս ինչ բան է նրա գլուխը...
Քժուում եմ, որ երևակայում եմ, թէ ես կարող եմ,
թէ ես իրաւունք պիտի ունենամ գրկելու այդ գլուխը...
Օ, ես զգում եմ, որ չափազանց երջանիկ կը լինիմ
նրա հետ։ Աստուած է վկայ, երգում եմ նրա ա-
րևով, որից թանկ ոչինչ չկայ ինձ համար աշխարհիս
երեսին... Աղաչում եմ, թոյլ տուր ամուսնանամ
նրա հետ։

Ակամայ ծիծաղեցի։

— Յիմար, ես ինչ իրաւունք ունիմ քեզ արգե-
լելու, որ ինձնից թոյլաւութիւն ես խնդրում։ Ա-
մուսնանում ես՝ ամուսնացիր, բայց ես...

— Ոչ, երբոր դու նրա մասին վատ ես խօսում,
սիրտս պղտորում է։ Անցեալ օրն ասացիր, թէ նա
չարահոգի աղջիկ է։ Ոչ, նա չարահոգի չէ. նա անչափ

բարի ազջիկ է. նրա սիրտն ուղղակի ազանու սիրտ է, ինչպէս հայրն էր ասում: Մուշտայիզից որ վերագառնում էինք, մի խեղճ, մի պառաւ կին պատահեց: Հանեց մի ռուբլի տուեց: Նա փող ունի. հիանալի ձեռագործ գիտէ: Իսկ հիմա էլ ասացիր, թէ խելագար է... Մի՞թէ այդպէս կարելի է...

— Լաւ, լաւ. ես մեղաւոր եմ: Հիմա ի՞նչ ես ուզում. — ամուսնանալ. ամուսնացիր. քո ձեռքը ոչոք իրաւունք չունի բռնելու: Իսկ ես քո խաշեղբայրը չեմ կարող լինել, որովհետեւ երեք ամսով արձակուրդ եմ առել և վազն արդէն գնում եմ ամառանոց: Հիւանդ եմ, պէտք է գնամ կազդուրուելու:

— Լաւ, մի՞թէ չես կարող մինչև կիրակի սպասել: Ազաչում եմ, եթէ սիրում ես ինձ, մնա:

Այնպիսի ողորմելի-պաղատական ձայնով էր խօսում, որ վերջիվերջոյ չէի կարող չհամաձայնել:



Մինչև վերջին րոպէն էլ ես չէի հաւատում, թէ այդ ամուսնութիւնը գլուխ կըզայ, ի նկատի ունենալով Սառայի այն տարօրինակ բնաւորութիւնը, որ նա ցոյց էր տուել իմ առաջին այցելութեան ժամանակ և որպիսին ներկայացել էր ինձ Քարեգնի արած պատմութիւնից: Բայց այդ ամուսնութիւնը ոչ թէ միայն գլուխ եկաւ, այլ և պսակի գիշերը Սառան կարող էր օրինակելի նորահարս լինել: Այդ գիշեր

միայն տեսայ, [Ժէ որքան հրաշալի գեղեցկութիւն ունէր նա հարսանեաց սպիտակ հագուստի մէջ: «Նրա գլուխը... գիտես ինչ բան է նրա գլուխը» ակամայ միտս եկան Քարեգնի խօսքերը, երբ ներս մտայ պայծառ լուսաւորուած հիւրասենեակին և տեսայ այդ խորհրդաւոր աղջկայ լայն, խոհուն, փղոսկրի սպիտակութեամբ փայլող ճակատը՝ գազաթիւն հաւաքած շքեղ սև մազերով, սպիտակ թափանցիկ շղարշի տակ: Նա մի յաւէրժահարս էր, որի առաջ պէտք էր ծունկ խոնարհել և սքանչացման, սրբազան երկիւղածութեան և պաշտելիութեան խօսքեր արտասանել: Նա նստած էլ լուռ, գէմբը սաստիկ գունատ էր, կեդրոնացած հայեացքի մէջ մի ինչ-որ խորր, անթափանցելի թախիժ էր նշմարոււմ, որը տրագիկական կերպարանք էր տալիս նրա գէմբի զարմանալի խիստկանոնաւոր գծերին: Մայիսեան ծաղիկների մի սիրուն փունջ էի տարել: Մատուցի: Ընդունելիս տխրութեամբ ժպտաց, [Թեթևակի գլուխ տուեց և հրաւիրեց, որ կողքին նստեմ: Քարեգինը նստեց աջ կողմը: Ի մեծ զարմանս իմ, բարեկամիս մէջ այդ երեկոյ տարօրինակ վախկոտութիւն էի նկատոււման էր գալիս ոտների մատների վրայ, խօսում էր կամաց, յիմարութիւններ շատ շէր դուրս տալիս, անգաղար կարմրում և սաստիկ բրտնում էր: Քայց այդ բոլորի հետ միասին հարսնացուի վրայ նայում էր վերին աստիճանի երկիւղած սքանչացումով: Ըստ

երևոյթին, Սառայի այդ գիշերուայ գեղեցկութիւնը նրա համար էլ անսպասելի նորութիւն էր, և նա ճնշոււմ էր այն դիտակցութեան տակ, որ այդ գեղեցկուհին իւրն է, իւր սեպհականը:

Հարստնիքը շատ համեստ բնաւորութիւն ունէր, գլխաւորապէս նրա համար, որ Սառան էր այդպէս կամեցել: Հիւրերի թւում ներկայ էին նորահարօթ ծնողների ամենամօտ ազգականները, նրա ընկերուհիներից մի երկուսը, վերջիններիս թւում ժիւլ Սիմոնը կարդացող ընկերուհին — ոսկեպատ պենս-նէով մի խիստ տղեզ և խիստ համարձակ աղջիկ. — իսկ փեսացուի կողմից հրաւիրուած էին մի քանի պաշտօնակիցներ, այնպէս որ բոլորը 'միասին առած' հազիւ մի տասնհինգ հոգի լինէին:

Եւ այդպէս, հակառակ սպասածիս, հարստնիքը տեղի ունեցաւ և վերջացաւ առանց միտրիէ միջադէպի:

Երրորդ օրը մեկնեցի ամառանոց: Սկզբներում ինձ սաստիկ հետաքրքրում էր նորապսակ զոյգի կեանքը, գլխաւորապէս Սառայի տարօրինակ և խորհրդաւոր բնաւորութեան նկատմամբ: Այդ պատճառով երկու շաբաթից յետոյ մի նամակ գրեցի Գարեգին: Պատասխան չստացայ: Կարծելով, որ նամակս տեղ չի հասել, նոյն նամակը կրկնեցի երկրորդ անգամ: Ելի ոչ մի պատասխան: Գրեցի երրորդ անգամ: Գտրձեալ լուծիւն: Յետոյ մտածեցի, որ ամառը գուցէ քաղաքում չեն մնացել, և այլ ևս բան չգրեցի:

Սեպտեմբերի սկզբներին որ Թիֆլիս վերադարձայ, առաջին գործս այն եղաւ որ գնացի այցելութիւն տալու նորապսակներին: Բայց Քարեգնի նախկին բնակարանում ինձ ասացին, որ պսակուելուց երկու շաբաթ յետոյ գուրս է գնացել և յայտնի չէ, թէ որտեղ է ապրում: Քնացի պետական կալուածների տեղական վարչութիւնը, այնտեղ էլ նրա ընկերներն ասացին, որ պսակուելու օրից թողել է իւր պաշտօնն և յայտնի չէ՝ քաղաքումն է, թէ՛ քաղաքումը չէ, որովհետև ոչոք նրան այլ ևս չի տեսել: Քնացի Սառայի հօրանց տուն, որ գտնէ նրանցից տեղեկանամ, թէ որտեղ են ապրում իրենց ազգիկն ու փեսան. իմ բաղձից Բաղիրեանն էլ իւր գործերը վերջացրել էր այստեղ և անով-տեղով քոչել էր Բ. ինչ-որ նոր գործ սկսելու այնտեղ:

Սյգպիսով շաջողուեց գտնել ինձ այնքան հետաքրքրող նորապսակների բնակութեան տեղը, և ես, կամայ-ակամայ, հրաժարուեցի այլ ևս բարեկամիս որոնելուց, երբ նորից հանդիպեցի նրան, բայց այս անգամ շատ տարօրինակ պարագաներում:

Սակայն մի միջադէս:

V.

Պեկտեմբերի մի ցուրտ գիշեր, երբ, երեկոյեան աշխատանքս վերջացնելուց յետոյ, վերադարձայ տուն

և մտայ ննջարանս, որ նորից նստեմ պարապելու վաղուան համար (ննջարանս միշտ տաք էր, որի պատճառով և այդտեղ էի տեղափոխել գրասեղանս), ահամայ կանգ առայ զարմացած: Քրասեղանիս վրայ վառուեմ էր լամպը: Մահճակալիս վրայ երեսն ի վեր պառկած էր մէկը և խռփացնելով քնած էր: Թէև վերմակն, ինչպէս երևում էր, սկզբում ծածկել էր վրան, բայց յետոյ, քնի մէջ, ձեռքով պատի կողմն էր շարտել, անշուշտ այն պատճառով, որ սենեակս շատ տաք էր: Աջ ձեռքը կախ էր ընկել մահճակալից ներքի: Հագած էր սիւրտուկ: Փիլիտի կոճակները բաց էր արել, և երևում էր չթի կապոյտ շապիկը սպիտակ սլուտերով: Քլիսարկն ընկած էր մահճակալի գլխավերեր, յատակի վրայ: Ճանապարհորդական երկարածիտ կօշիկներից մէկը հագին էր, միւսն ընկած էր մահճակալից բաւականին հեռու: Մահճակալի մէջքին կախ էր ընկած նրա ձմեռուայ վերարկուն, որի ատլասի աստառը տեղ-տեղ ճաքճաքել էր և երևում էր տակի բամբակը: Սենեակի անկիւնում դրուած էր մի ահագին ջարդուած ճամպուրուկ:

Աչքերիս չհաւատալով, մօտեցայ, որ լաւ դիտեմ, թէ ո՞վ է այդ յանդուզն ինքնակոչ հիւրը: Կարճ խուղած խիտ մաղերով, սափրած լիքը գէմքով և չափազանց սև յոնքերով ու բեխերով մի արծուաքիթ երիտասարդ էր: Ինձ թուաց, թէ նրա գէմքը ճանօթ է ինձ, բայց ոչ մի կերպով չկարո-

դացայ յիշել, [Ժէ ով կարող էր լինել: Աւրեցի գնամ քնած ծառայիս զարթեցնեմ հարցուիորձ անելու, բայց ոտս գիպաւ աթոռին և այնպիսի թրխկոց բարձրացաւ, որ քնածն իսկոյն բաց արեց աչքերը, միքանի վայրկեան յանկարծ արթնացած մարդկանց անմիտ աչքերով նայեց ինձ, յետոյ վեր թռաւ և գրկաբաց դիմեց ինձ, կանչելով:

— Ա՛, արդէն եկե՛լ ես... Ներողութիւն. պառկեցի, որ միքիշ հանգստանամ, քունս տարիլ էր: (Նա երկու ձեռքով ամուր գրկեց ինձ և համբուրեց շրթունքներս): Ամբողջ օրը ճանապարհ եմ եկել, և սաստիկ ջարդուած էի:

— Ներողութիւն... ես... — [Ժոթովեցի նրա մտերմական անսպասելի վարմունքից շփոթուած, — ես չեմ կարողանում ձեզ յիշել...

— Մի՛թէ, — բարձրաձայն ծիծաղեց նա: — Թուեանը չեմ ես... Միասին չէ՛ինք սովորում գպրոցում: Զեռքս խփեցի ճակատիս:

— Ա՛խ, ճիշտ որ, — ասացի ես, յանկարծ յիշելով նրան: — Բայց դու այնքան փոխուել ես...

— Տնաչէն, բաս այս երկար ու ձիգ տարիներում մարդ չի փոխուիլ... մանաւանդ արեւելցին, որ այսօր տեսնում ես մազ չկայ երեսին, վաղն արդէն արջի պէս մազակալել է:

Նա վերցրեց սենեակի մէջ տեղում ընկած իւր կօշիկը և գնաց նստեց մահճակալի վրայ:

—Ներողութիւն, — ասաց կօշիկը հագնելով, — անտէր մագոլը հողիս հանում էր: Ենորհակալ եմ, սենեակդ շատ տաք էր. ճանապարհին շան պէս մրսում էի: Հազիւ ջանս տեղն է եկել: Երևակայիր, որ ծառագ չէր ուզում ինձ ներս թողնել. հազար ու մի պապատանքով եմ մտել: Բայց անպիտանը, երևի, էլի կասկածում էր, որ, ինձ ներս թողնելուց յետոյ, դուռը փակեց և բանալին պրպանը կոխեց: Ի՞նչ պատմեց նա քեզ իմ մասին:

— Ես նրան չեմ տեսել. նա քնած է:

— Հապա ի՞նչպէս մտար:

— Ես առանձին բանալի ունիմ:

— Հա՛:

Կօշիկը շատ դժուարութեամբ էր հագնւում. նա կռացել տնքտնքում էր:

— Ա՛յ, անտէր մ՛նաս, թէ մտնես, հը՛... ժամը քանիսն է:

— Սրդէն տասնումէկն է:

— Չէ: Իսկ ես կարծում էի, թէ հազիւ իննը լինի: Ուրեմն մօտ երեք ժամ քնել եմ:

Վերջապէս կօշիկը մտաւ: Ոտը պինդ թրխկացնելով յատակին, վերկացաւ, մօտեցաւ ինձ և ուղղակի կանգնեց առաջս:

— Ինչ եմ ասում: Ուզես, չուզես, քո հիւրն եմ: Շատ չէ, միքանի օր: Փողս այնպէս հատել է, որ սաներիցս կախես, մի սև գրոշ չի ընկնիլ գրպա-

նիցս: Ինչպէս ուզում ես, հաշուիր. Պետերբուրգից մինչև այստեղ հասնելս՝ երեք տեղ պարտք եմ վերցրել: Քնում եմ Ա.: Հայրս մեռնում է. գրել էր, որ հոգուն վրայ հասնեմ, և փող չէր ուզարկել. Թէ որ Սարումեանը չպատահէր, — տեսնում ես ինչ փառաւոր տեղ է ընկել անիծածը, — [թէ որ նա չպատահէր, ստիպուած պիտի լինէի ուղղակի փողոցում գիշերելու: Նա ասաց, որ ինքը տնփեսայ է, յարմարութիւն չունի ինձ իւր մօտ տանելու, մի խօսքով գլխից ռազ արաւ և բերեց ինձ բեղ մօտ: Տեսնում ես, ես մեղաւոր չեմ. եթէ նեղանալու ես, նրանից նեղացիր:

— Ինչո՞ւ պէտք է նեղանամ:

— Ես ի՞նչ գիտեմ: Ես մի բիշ աներես մարդ եմ, — ծիծաղեց նա: — Բայց որ գիտենաս, ես այժմ շան պէս քողցած եմ, — աւելացրեց նա լրջութեամբ: — Եթէ ուտելու բան ունիս, տուր ուտեմ:

Ես ասացի, որ տանն ընթրելու սովորութիւն չունիմ, ուստի տանը բան չկայ ուտելու, և առաջարկեցի, որ, եթէ ուզում է, դնանք մօտակայ ռեստորանը:

— Քնանք:

Նա արագութեամբ կոճկեց ժիլետն ու սիրտուկը, աչքերով որոնեց, գտաւ յատակի վրայ ընկած գլխարկը, վերցրեց, թափ տուեց, ծածկեց, հագաւ վերարկուն, և դուրս եկանք:

Ճանապարհին առաւ թիս և այնպիսի մտերմութեամբ էր խօսում, որ կարծես թէ ինձնից աւելի սրտակից բարեկամ չունէր: Տարօրինակ ազատ և նազուժուզ շծախոզ երիտասարդ էր: Նրա վարմունքը սկզբում ինձ բաւական անախօրթ էր թւում, բայց յետոյ մի գիծ զգացի նրա մէջ, որը կարծես թէ զրաւեց ինձ. այդ գիծը թերևս այն էր, որ նա ցինիկութեան աստիճանի անկեղծ էր, լրբութեան աստիճանի համարձակ և սառնասրտութեան չափ անփոյթ: Ինձ թւում էր, թէ նա պատրաստ էր և՛ ամենամեծ առաքինութիւնը գործել, և՛ ամենամեծ ցածուժիւնը, և երկու գէպքումն էլ—կատարելապէս անփոյթ կերպով:

—Պետերբուրգում ի՞նչ էիր շինում, — հարցրի:

— Աւսանում էի:

— Ել չե՞ս ուսանում:

— Բան չունիս: Այնպէս վառաւոր կերպով վճիգեցին համալսարանից, որ քէֆդ գայ... Գու ինձ ասա, կանանց ետևից ընկնողը բան կըսովորի...: Բայց յիմար հայրս կարծում է, թէ դեռ սովորում եմ: Պրոֆեսորներիցս մէկն ինձ ասաց, որ ես կամ մեծ մարդ դուրս կը գամ, կամ ամենամեծ պաղլեցը: Հաւանականը երկրորդն է, իհարկէ:

Երբ ռեստորան մտանք, նա սկսեց այնպէս վարուել, որ կարծես թէ հիւրասիրողը ես չէի, այլ—ինքը: Ընթրիքի համար ամեն կարգադրութիւն

Նա արեց: «Ես բիֆստերս կուտեմ, դո՛ւ: Արայ չնս խմիլ. ես մի բաժակ կրկոնծեմ»: Արայը կոնծեց մի ումպով: Մինչև բիֆստերսը կըբերէին, սառը մսեղէնին վրայ ընկաւ քաղցած դայլի պէս: Բիֆստերսն էլ շկշտացրեց նրան, և նա դարձեալ մսեղէն պահանջեց: Եւ այդ բոլորը նա ջրեց մի շիշ կարմիր գինով: Յետոյ ծխախոտ պահանջեց և մի հատ թաւաղայ արեց ինձ: Ես հրաժարուեցի, որովհետեւ չէի ծխում:

— Ի՞նչ տեսակ մարդ ես, — ասաց, — ոչ ծխում ես, ոչ խմում և ոչ կարգին հաց ուտում:

Նա դանակով ձեծեց գինու դատարկ շիշը, և մօտ վազոյ սպասաւորին պատուիրեց, որ մի շիշ գինի էլ բերի:

— Կուզես ասեմ, այս բոպէին ինչ ես մտածում, — գիմեց նա ինձ:

— Ի՞նչ:

— Մտածում ես. «Էս հարամգաղէն համ իմ հիւրն է, համ էլ ինքն է կարգադրութիւններ անում»:

Ծիծաղեցի:

— Ինչ ուզում ես՝ ասա, անմիտ նախապաշարումներով լի է մեր կեանքը, — ակեղացրեց նա: — Այդ նախապաշարումների կարգը պէտք է դասել, անշուշտ, և հիւրասիրութեան պայմանները: Ինչո՞ւ համար ուղղակի ինքս չպահանջեմ այն, ինչ որ սիրտս ցանկանում է: Մի բան, որով ես պարծե-

նամ եմ, այդ այն է, որ ես ոչ մի բանից չեմ
բաշխում, որովհետև չեմ հասկանում, թէ ինչ բան է
ամօթի զգացումը:

— Իբր թէ՞:

— Աստուած է վկայ:

— Իսկ Աստուծու հաւատում ես:

— Ի՞նչ, չլինի՞ կարծում ես՝ աթէիստ եմ: Չէ,
ես այդպիսի դատարկ բաների վրայ ուղեղս չեմ
յուզնեցնում: Ասում են՝ Աստուած կայ, ուրեմն կայ:

— Բայց ասում են, որ չկայ:

— Ուրեմն չկայ:

— Բայց այս րոպէին Աստուծուն վկայ բերեցիր:

— Ուրեմն կայ: Բայց թողնենք այս. սա սո-
փեստութիւն է: Փիլիսոփաների մէջ, իմ կարծիքով,
Եպիկուրն էր ամենից խելօքը. խլիբ կեանքից այն
ամենը, ինչ որ կարող ես, և ոչ մի բանի մասին
մի մտածիր: Մտածողութիւնն առհասարակ խան-
գարում է մարսողութիւնը, իսկ յայտնի է, որ ստա-
մոքսի խանգարումն յռեհտեսութիւն է առաջ բերում,
իսկ յռեհտեսութիւնից աւելի սարսափելի դժբաղ-
դութիւն չկայ աշխարհիս երեսին:

Նա լցրեց բաժակները սպասաւորի նոր բերած
չից:

— Խմենք այս նրանց կենացը, որոնք այնքան
խելօք են, որ Աստուծու դոյութեան խնդրով չեն
զրազուում:

Եւ նա աչքը բաժակի մէջ տնկած՝ կամաց և մեծ ախորժակով ծծեց գինին:

— Ես հսկայական յիմարներ եմ համարում այն մարդկանց, — շարունակեց նա, — որոնք ներկան գոհում են ապագայի համար: Մի ընկեր ունիմ ուսանողներից. զրպանում որ մի մանէթ ունենայ, մի կողէկ չի ծախսիլ. ասում է՝ վաղը քաղցած կըմնամ. բայց մոռանում է, որ այսօր քաղցած է մնում: Քերականութեան միջից պէտք է ջնջել ապառնի ժամանակը: Ապագայ չկայ, որովհետև անյայտ է, իսկ ինչ որ անյայտ է, այդ մասին մտածելն ու հոգալը, բնականաբար, մեծ յիմարութիւն է: Բացի զրանից, դա վախկոտութեան, անվստահութեան նշան էլ է. — մի գուցէ, եթէ այսօր այսպէս անեմ՝ վաղն այնպէս լինի, ու այսօր չեն անում այն, ինչ որ իրենց սիրտը ցանկանում է: Ինչ է կեանքը: Կամ, աւելի ճիշտը, ինչ պէտք է լինի կեանքը. — բոլորական հաճոյք: Ե՛հ, երբոր սրտիդ այս բոլոր թեւադրածը չես անում ինչոր վաղուան հաշիւներով, էլ ինչո՞ւ ես տպրում: Սյգպիսով, իբր թէ խոհեմութեամբ, — այ մի ուրիշ բառ, որ նոյնպէս չեմ հասկանում, — իբր թէ խոհեմութեամբ, միշտ չես անիլ այն, ինչ որ ցանկանում ես անել, միշտ կըզսպես քեզ, իսկ յետոյ մէկ էլ տեսար՝ մեռել ես: Մահուան գաղափարը խելացի մարդու համար մեծ խթան պէտք է լինի ամեն բան անելու. այսինքն այն ամենը, ինչ որ

սիրաբը ցանկանում է: Այսօր թէ վաղը պէտք է մեռնեմ, չէ՛. է՛հ, երբ որ այդպէս է, ինչո՞ւ շանեմ այն, ինչ որ ցանկանում եմ: Ես դեռ կանեմ, յետոյ, հէրն անիծեմ, ինչ ուզում է պատահի... Կրկնում եմ. փիլիսոփաների մէջ ամենից խելօքն Եպիկուրն էր. — խլիբ կեանքից այն ամենը, ինչ որ կարող ես, և ոչ մի բանի մասին մի մտածիր, — աւելացրից նա զինու բաժակը նորից ծրծովելով:

— Բայց դու սխալուում ես, — վերջապէս չկարողացայ դիմանալ և նկատեցի հոս: — Եպիկուրն այդպիսի բան չի ասել. դու միայն կրկնում ես ստոիկների զրպարտութիւնը Եպիկուրի դէմ: Ամենից առաջ պէտք է նկատեմ քեզ, որ քո հաւանած այդ փիլիսոփան զործ էր ածում ամենահասարակ կերակուր, և այն էլ չափաւոր կերպով, և խմում էր միմիայն ջուր. իսկ դու տասը մարդու կերակուր կերար այս բոպէիս և զինու երկրորդ շիշն է, որ դատարկում ես: Բայց այդ — մարմնականը: Իսկ հոգեկան-բարոյականը... Ճիշտ է, Եպիկուրը պնդում էր, թէ երջանկութիւնը հաճոյքի մէջ է, բայց ամեն մի հաճոյք վայելելուց առաջ, նա ամենախիստ քննութեան էր ենթարկում հետևանքը, որովհետև կան հաճոյքներ, որոնց հետևանքը միշտ դառն է լինում: Պահեցողութիւն և ինքնազսպողութիւն ամեն բանում — ահա իսկապէս Եպիկուրի վարդապետութիւնը, և ոչ թէ անսահման սանձարձակութիւն, ինչպէս դու ես հասկանում:

— Հէրն անիծեմ, չեմ վիճում, — բացականչեց Թուսեանը: — Բայց այդ աւելի վատ նրա անուան համար, եթէ այնպէս չի քարոզել, ինչպէս ես եմ հասկանում: Ուրեմն նրանից աւելի խելօքը նրանք են, որոնք նրա վարդապետութեանն իմ հասկացած բացատրութիւնն են տուել:

Նա արդէն արբած էր, և ես այլևս աւելորդ համարեցի նրա հետ վիճարանելը: Գիտում էի միայն, թէ ինչպէս բաժակը բաժակի հտեից ծրծովում էր, առանց դէմքի մի գիծն անգամ շարժելու: Արբած էր, բայց խօսքի թելը չէր կորցնում: Համբերութեամբ սպասեցի, մինչև որ մի շիշն էլ դատարկեց, յետոյ պատուիրեց, որ վճարեմ, և, վերջապէս, ժամը 2-ից անց էր, որ դիմեցինք դէպի տուն:

Նա տեղաւորուեց իմ ննջարանում: Բարեբաղ-դարար, մի ձեռք աւելորդ անկողին ունէի, ձգեցի վառարանի մօտ, պատի տակ (մահճակալիցս վճռա-պէս հրաժարուեց): Պառկեց:

Ես մի վատ սովորութիւն ունիմ. ինչքան էլ որ յոգնած լինիմ և ինչքան էլ ուշ լինի, խակոյն չեմ կարողանում քնել. պէտք է առնուազն մի կէս ժամ շուռումուռ գամ անկողնիս մէջ, մինչև որ քնեմ: Ահա այդ միջոցին, երբ ես տանջւում էի անքնութիւ-նից, անկող ճիւրս յանկարծ նստեց անկողնում:

— Գրողը տանի, — ասաց, — էս անտէր գիւնին քունս միշտ փախցնում է: Երևակայիր, պատահել է,

որ քէֆի ժամանակ երկու, մինչև անգամ երեք օր
շարունակ չեմ քնեյ:

Ըստ երևոյթին, նա սպասում էր, որ ես ձայն
կըհանեմ, բայց տեսնելով, որ անշարժ պառկած եմ
(գիտամամբ քնած էի ձևացնում ինձ, որպէս զի դահլա
չտանի), հարցրեց.

—Քնած ես:

Ուզում էի դարձեալ ձայն չհանեմ, բայց մէկ
էլ մտածեցի, թէ գուցէ ինչ կարևոր բան է ուզում,
պատասխանեցի.

—Չէ:

—Գէ որ քնած չես, քեզ մի բան պատմեմ.
յանկարծ միտս եկաւ: Կըլսես:

—Ի՞նչ բան:

—Իմ կեանքից մի փոքրիկ էպիզոդ:

VI.

Նա նորից պառկեց և վերմակը կըծքին քաշեց:

—Սրանից երկու տարի առաջ, ամառը, հիւր
էի գնացել հօրեղբօրս մօտ Մ... ամառանոցում:
Հետս հրացան և շուն էի տարել: Որս անել շատ էի
սիրում: Առաւօտները վաղ վեր էի կենում, գնում
էի անտառը, ամբողջ ժամերով թրև էի գալիս և
մի ծիտ էլ է չէի զտնում, որ սպանեմ: Յետոյ ինձ
ասացին, որ մի հինգ-վեց վերստ հեռու մի լիճ կայ,

ուր վայրենի բազեր շատ են լինում: Այնուհետև
գնում էի այդ լիճը որս անելու: Ճանապարհս
անտառի միջովն էր: Մի առաւօտ, երբ անցնում էի
այդ անտառով, եզնու մի հսկայական ծառի վրայ
մի կտցահար նկատեցի: Հէնց այնպէս, որպէս զի
մի բան սպանած լինիմ, հրացանս ուղղեցի և արձա-
կեցի: Զիմացայ դիպում, թէ ոչ, որովհետև հրացա-
նիս պայթիւնի և շան հաջոցի վրայ մի սարսափելի
ճիշ լսուեց: Մէկը դուրս թռաւ ծառի տակից: Մի
աղջիկ էր, որին չէի նկատել ծառի հաստ բնի ետևը:
Գլխաբաց էր, բայց ձմեռուայ տար վերարկու ունէր
հագին. — բաւական ցուրտ էր: — Գլխարկս վերցրի
և ներողութիւն խնդրեցի: Նա կանգնած էր անշարժ
ինձնից մի տասը քայլ հեռու: Դէմքը մեռելի գոյն
էր ստացել, նայում էր ինձ անթարթ, սարսափահար:
Նկարիչ որ լինէի, կընկարէի նրան այդ զրութեան
մէջ — այնքան զեղեցիկ էր: Նորից ներողութիւն
խնդրեցի: Ոչ մի խօսք չարտասանեց: Մօտեցաւ
ծառին, խոտի մէջ ինչ-որ որոնեց, գտաւ, — գիրք էր,
— վերցրեց, մի ձեռքով շտկեց մազերը և հանգիստ
քայլերով հեռացաւ: Հետեեալ առաւօտեան, երբ
անցնում էի նոյն տեղով, նա նստած էր նոյն ծառի
տակ գիրքը ձեռքին: Մօտովն անցնելու ժամանակ
նայեց ինձ և գլուխը նորից կախեց գրքի վրայ:
Անցայ մի յիսուն քայլ, յետոյ յետ դարձայ և, հրա-
ցանիս դիմհար տալով, կանգնեցի նրանից մի տասը

քայլ հեռու, ուղղակի նրա դէմ առ դէմ: Վերին
աստիճանի խոտուժեամբ, բայց ոչ բարկացած,
նայեց ինձ և հարցրեց. «Ի՞նչ էք ուզում»:—Ուզում
եմ, որ ներէք,—ասացի:—«Գա ի՞նչ յանդգնութիւն
է, պարսն» ազադակեց նա: Ճակատս դրի հրացանիս
բերանի, իսկ ոտս շնիկի ոտի վրայ:—Եթէ չէք
ներիլ,—ասացի,—այս ըոպէիս գանգս ցրիւ կածեմ:
Նա սաստիկ վախեցած վեր թռաւ տեղից: «Գժուել
էք, ինչ է» ազադակեց:—Ներսում էք, թէ ոչ,—նոյն
դրութեամբ հարցրի ես: «Ե՛ս էք Աստժոյ, գէն կորց-
րէք այդ հրացանը, ներում եմ» արագ-արագ ար-
տասանեց նա:—Սյժմ հանգիստ կըթողնեմ ձեզ,—
ասացի, զլուխ տուի, շուացրի շանս ու հեռացայ:
Երրորդ առաւօտեան նա դարձեալ նոյն ծառի տակն
էր:—Ես ձեզ խորհուրդ չեմ տալ առաւօտեան այս
ժամին նստէք խոտի վրայ, տեսնում էք՝ որքան
թաց է,—ասացի: «Խոտի վրայ հօ չեմ նստած,—
ասաց.—տեսէք»: Եւ ցոյց տուեց, թէ ինչի վրայ
էր նստած: Նստած էր հսկայական եղևնու գերա-
նաչափ արմատի վրայ, որը մի կէս արշին բարձր էր
մնացել գետնից:—Սյդ միևնոյն է,—ասացի,—
խոնաւութիւնը կարող է ձեր ոտներից անցնել:
Անփոյթ կերպով վեր բաշեց ուսերը: «Ո՛րտեղ էք որս
անում» հարցրեց: Տեղն ասացի: Գիրքը բաց ու
խուփ արեց, ըստ երևոյթին, ուղեց մի բան ասել,
բայց ոչինչ չասաց, նորից գիրքը բաց արեց և

աչքերը տնկեց վրան: — Յտեսութիւն, — ասացի:
«Յտեսութիւն» ասաց: Հեռացայ իմ ճանապարհով:
Զորրորդ առաւօտեան դարձեալ նոյն տեղումն էր:
— Բարի լոյս, — ասացի: Զպատասխանեց. միայն
նայեց և ժպտաց: Յետոյ ասաց. «Թոյլ կըտաք, որ
ձեզ հետ գամ տեսնեմ՝ ինչպէս էք որս անում»:—
Եթէ կամենում էք, ինչո՞ւ չէ: Բայց կըյոգնէք:—
«Հեռու է» հարցրեց:— Վեց վերստ կըլինի:— «Բան
չկայ, կըբամ»: Աւ վեր թռաւ տեղից: Գնացինք:
Մի քիչ առաջ էր ընկել ինձնից: Մի ձեռքով բռնած
ունէր գիրքը, միւսով բարձրացրել էր սև շրջագլխատի
փեշերը: Երևում էին սև գուլպաները դեզին տուֆ-
լիների մէջ: Գրան աւելացրու և երկու սևերի մէջ,
սև շրջագլխատի և սև գուլպաների արանքում երեա-
ցող սպիտակ տակի շրջագլխատը, նուրբ անկուա-
ծով պատած: Գեղեցիկ են անսպիտանների ոտները:
Սիրում եմ: Հազիւ երկու վերստ ճանապարհ գնա-
ցած, կանգ առաւ, նայեց ինձ և ժպտաց:— Ի՞նչ է,
յոզնեցիք, — հարցրի: Գլխի շարժումով դրական
պատասխան տուեց:— Հիմա ի՞նչ էք ուզում, որանենք,
— հարցրի: «Ես յետ կըդառնամ» ասաց: Եունս
բաւական առաջ էր վազել և կորել էր ծառերի մէջ:
Ետացրի: Պոչը խաղացնելով և հաջալով դուրս
թռաւ ծառերի արանքից:— Ի՛է գնանք, — ասացի
ուղեկցուհուս: «Գուր էլ էք յետ դառնում», զարմացաւ
նա:— Բաս հօ մենակ չեմ թողնիլ ձեզ այս անտա-

աում. դուք կարող էք մոլորուել:— «Ոչ, չեմ մոլորուիլ, —ասաց.— անտառն ինձ լաւ ծանօթ է»:— Սյգ միւնոյն է, —ասացի.— իմ պարտքս է ձեզ հասցնել ձեր տեղը:— «Յետոյ»:— Յետոյ յետ կըզառնամ:— «Յետ դառնա՞ք»:— Եթէ կամենում էք, —ասացի,— յետ չեմ դառնալ: Նկատելի կերպով կարմրեց:— «Ես այդ շէի ուզում ասել, —ասաց.— այլ ուզում էի ասել, թէ մինչև այստեղ արդէն երկու վերստ եկել էք, այստեղից յետ դառնալիս դարձեալ երկու վերստ պիտի անէք, նորից յետ դալով—դարձեալ երկու վերստ. այդ—վեց վերստ. յետոյ այստեղից էլ մինչև լիճը շորս վերստ պիտի գնաք, այդ դառաւ տասը վերստ: Միթէ կարող էք միանգամից տաս վերստ ճանապարհ կտրել»:— Անհոգ եղէք, —ասացի.— ոտներս ամուր են, իսկ կօշիկներս ձեր տուֆլիները չեն: Ի դէպ, —աւելացրի,— ես զարմանում եմ, որ դուք այդպիսի բարակ տուֆլիներով առաւօտեան այսպէս վազ դուրս էք գալիս անտառը. դուք կարող էք հիւանդանալ, տեսէք՝ որքան թաց է խոտը:— Նա դարձեալ անպոյթ կերպով վեր քաշեց ուսերը և ժպտաց. յետոյ մօտ վազող շանս կանչեց և փաղաքշական խօսքերով սկսեց շոյել նրա գլուխը: Յետ դարձանք: Շատ էր յոգնել: Թևս առաջարկեցի: Ընդունեց, առանց նազ ու թուզ ծախելու: Շունս ամենալաւ տրամադրութեան մէջ էր. առաջ էր ընկել, մերթ կորչում էր ծառերի մէջ, մերթ դուրս էր

վազում. անտառն ազմկում էր նրա հաջոցի ձայնից: Արևը բաւական բարձրացել էր: Օդն անշարժ էր: Անտառի բաց տեղերում, արդէն դեղնած խոտերի մէջ սւււում էին մորիխները: Յանկարծ ուղեկցուհիս կանգ առաւ, ձեռքը հանեց թևիս միջից և մատն ուղղեց դէպի ծառերից մէկի կատարը: «Տեսէ՞ք, տեսէ՞ք, այն ի՞նչ թռչուն է» շշնջաց: Հրացանը հանեցի ուսիցս և շուացրի շանս: Ուղեկցուհիս թռաւ մի քսան քայլ հեռու, կուշ եկաւ մի ծառի տակ և, գիրքը թևի տակ առնելով, մատներով խցեց ականջները: Արձակեցի: Ծառի տերեւները խշխշացին, և թռչունը վայր ընկաւ: Շունս մի քանի ոտիւնով թռաւ և ատամների մէջ բռնած՝ բերեց մատոյց ինձ իմ որսը: Աղանի էր, սպիտակ՝ ինչպէս ձիւն: Որտեղից էր աղանին լոյս ընկել եղևնու անտառում — Աստուած գիտէ: Ամարանոցում հայոց եկեղեցի կար, — երևի այնտեղից: Ուղեկցուհիս մօտ վազեց և երեսայական սարսափահար բուռն հետաքրքրութեամբ սկսեց դիտել սպանուած թռչունը: «Ա՛խ, աղանի՛ է», շեմ իմանում խիստ ուրախացած, թէ՛ խիստ տխրած շշնջաց նա: Որսս տուի իրեն: Երկու մատով բռնեց մի ոտից և նայեց, թէ՛ գնդակը նր տեղին է դիպել: «Տեսէ՞ք, տեսէ՞ք, — ասաց, — ուղղակի կրծքին է դիպել: Ինչքան սպիտակ է և ինչպէս կարմիր է ներկել արիւնը սպիտակ փետուրները»: Երկար ժամանակ մեծ հետաքրքրութեամբ դիտեց,

յետոյ տուեց ինձ: Առայ և շարտեցի ծառերի խորքը: «Ինչո՞ւ դէն ձգեցիր», յանդիմանութեամբ նկատեց նա: — Հասպա ինչիս էր պէտք, — ասացի:

Թուսեանն ընդհատեց պատմութիւնը, վեր կացաւ ասելով «Ձգիտեմ, ծխախոտը դո՞ւ վերցրիր ռեստորանում, թէ՞ ես», հրկար ժամանակ ման եկաւ իւր շորերի դրպաններում, գտաւ, մի հատ վառեց և զնաց նորից պառկեց: Մի-երկու անգամ ուժեղ կերպով ներշնչեց ծխախոտի ծուխը, քթածակերից քուլա-քուլա դուրս հանեց, յետոյ յանկարծ նայեց իմ կողմը:

— Քնեցիր, — հարցրեց:

— Ձէ:

— Լսում ես:

— Հա: Միայն, եթէ շարունակութիւնն էլ այդպէս մանրամասն ես պատմելու, — աւելացրի, — աւելի լաւ է՝ թողնես վաղուան, որովհետեւ քունս արդէն տանում է:

— Ձէ, շատ կարճ եմ կտրելու: Բանը վերջացաւ նրանով, որ մի քանի շաբաթից յետոյ նա անձնատուր հղաւ ինձ այդ բառի ամենակատարեալ իմաստով: Մինչև անձնատուր լինելը խրանում էր ինձնից այժի պէս, իսկ անձնատուր լինելուց յետոյ կապուեց ինձ հետ շան պէս: Օր չէր պատահիլ, որ մի քանի անգամ երգում շառնէր ինձնից, թէ կամուսնանանք: Երգում էի, ի հարկէ, բայց նկատում

էի, որ որքան շատ էի երգում, այնքան քիչ էր հաւատում: Ձեռն յիշում, որ առաջինը ես լինիմ գնացած նրա հետ տեսնուելու. միշտ նա էր սպասում ինձ անտառում—մի տեղ՝ ուր մարդու ոտք ամենեկին չէր դիպչում: Տեսնելուն պէս սաստիկ ուրախանում էր և ընկնում էր վզովս: Բայց դա երկար չէր տևում. նրա գէմքը կամաց-կամաց ինչ-որ մտախոհ տխրութիւն էր արտայայտում, և նա՝ էլ չէր խօսում, չէր նայում ինձ, նոյն խկ երբեմն հեռացնում էր ձեռքերս, երբ ուզում էի գրկել նրա իրանը: Հրաշալի իրան ունէր.—բարակ, ճկուն, տար... Մի անգամ տարաւ ինձ անտառի այն տեղը, ուր սպանել էի աղանիին: «Ինչո՞ւ սպանեցիր» ասաց:—Ո՛ւմը,—զարմացայ:—«Աղանիին»:—Ես մոռացել էի այդ գէպը: «Յիշում ես,—ասաց,—ինչքան սպիտակ, ինչքան մաքուր էր... Յիշում ես, ինչպիսի անհոգութեամբ և անգթութեամբ դէն շարտեցիր»: Ակամայ ծիծաղեցի: Նա նստեց խոտի վրայ, դէմքը ծածկեց ձեռքերով և լաց եղաւ:

Թուսեանը ծխեց ծխախոտի վերջին մնացորդը, շարտեց վառարանի կողմը և յօրանջելով ասաց.

—Խեղճ աղջիկ... Հիմա որ յիշում եմ, մեղքս գալիս է, հաւատացիր: Անմեղ էր, ինչպէս այն աղանիին, որին սպանեցի: Բանը վերջացաւ նրանով, որ հեռացայ և... մոռացայ:

—Առանցխղճի խայթի,—չկարողացայ շնկատել ես:

— Ինչպէս չէ. խիզճս երբեմն-երբեմն խայթում էր ինձ, բայց այնպէս... ասեղի ծակոցների պէս: Ուրիշ բան կըլինէր, եթէ մախաթի պէս խայթէր, — աւելացրեց նա, ծիծաղեց, յետոյ ասաց «բարի գիշեր» և վերմակը քաշեց գլխին:

Մի բոսայից յետոյ նորից լսեցի նրա ձայնը, այս անգամ վերմակի տակից.

— Ես հաւատարիմ մնացի իմ եպիկուրեան նշանաբանին. — խլիր կեանքից այն ամենը, ինչ որ կարող ես, և ոչ մի բանի մասին մի մտածիր:

Երկրորդ բոսային արդէն լսեցի նրա անհոգ խումփոցը:

VII.

Հետեւալ առաւօտեան, որ աչքերս բաց արի, անկոչ հիւրս չկար. չիմացայ ուր էր գնացել: Ամբողջ օրը չերկաց: Սպասում էի, որ գիշերը կըզայ, բայց գիշերուայ ժամն արդէն 12-ն էր, որ նա չկար: Նստած պարապում էի: Յանկարծ դռանս զանգակը հնչեց: Որովհետեւ ծառաս, ըստ սովորականին, այդ ժամին արդէն տասն երազ էլ էր տեսել, այդ պատճառով ինքս իջայ դուռը բանալու: Բայց դուռը որ բաց արի, տեսայ՝ ոչոք չկայ: Գիշերը խաղաղ էր. փաթիլ-փաթիլ ձիւն էր գալիս: Գէս նայեցի փողոցում, դէն նայեցի—մարդ չէր երևում: «Գատակի

ժամանակ է գտել յիմարը» մտածեցի ես, կարծելով, թէ հիւրս էր զանգակը քաշողը և այժմ թագնուել է հարևան փողոցում, որը մի քսան քայլի վրայ էր: Մի քանի բռպէ սպասում էի այն ցրտումը կանգնած. — ոչոք չկար ու չկար: Վերջապէս զայրացած՝ դուռը փակեցի և վճռեցի ամենևին չբանալ, եթէ դարձեալ զանգակը քաշելու լինէր: Ներս մտայ և նստեցի ընդհատուած պարապմունքս շարունակելու: Անցաւ մօտ մի քառորդ ժամ, և զանգակը նորից հնչեց: «Ձեմ բանալու, հէրն անիծած» սրտանց ասացի ինքս ինձ և տեղիցս շշարժուեցի: Բայց, քիչ սպասելուց յետոյ, զանգակը նորից հնչեց: Վերջապէս, երբ երրորդ անգամ զանգակը սկսեց զընդզընգալ, ջղային անհամբերութեամբ վեր թռայ և գնացի դուռը բանալու: Թուտեանն էր: Չկարողացայ զսպել ինձ և բաւական կոպիտ խօսքերով սկսեցի յանդիմանել, որ նա բաւական չէ՝ վայելում է իմ հիւրասիրութիւնը, այլ և անտեղի ու անժամանակ կատակներ է խաղում զլիսիս: Նա այնպէս ապշեց, այնպէս կարկամեց, որ ինքս ինձ ամաչեցի իմ ասած խօսքերից:

— Ի՞նչ կատակներ, ի՞նչ ես ասում, — թոթովեց նա:

— Բաս դու չէիր մի քառորդ ժամ առաջ զանգակ քաշողը:

— Մարդ Աստուծոյ, ես նոր եկայ, — ասաց նա,

դեռես ասշած իմ վարմունքից:—Ո՞վ գիտէ, ինչ մի սրիկայ է եղել, դռանդ առաջով անցնելիս խելքին վիշել է զանգակը քաշել, և դու կարծել ես, թէ ես եմ:

Այդ հնթադրուծիւնը բաւական հաւանական թուաց ինձ, քանի որ գիտէի, թէ Թիֆլիսի դիշերաչրջիկ կլինտոներն երբեմն ինչպիսի խաղեր են խաղում խաղաղ բնակիչների գլխին:

Թուտեանը մօտեցաւ վառարանին, ոտներն ու ձեռքերը տաքացրեց, յետոյ մի ծխախոտ վառեց, գնաց նստեց իւր անկողնի վրայ և սկսեց շորերը հանել:

Նստեցի պարապմունքս շարունակելու:

— Ախր չես ասիլ այսօր ուր էի կորած, — ասաց նա:

— Ո՞ւր:

— Քնացել էի փող ճարելու, որ հօրս հոգուն վրայ հասնեմ: Անամօթ եմ, ճիշտ է, բայց չեմ ուզում քեզ նեղութիւն պատճառել: Քնացի տնփեսայիս մօտ: Լաւ հիւրասիրեց, բայց մեռաւ-կտրուեց, մի կսպէկ շտուեց: Երևի անպիտանն իմացել է, որ ումից փող եմ վերցնում, չեմ վերադարձնում: Բայց չեմ վերադարձնում նրան համար, որ չեմ ունենում, և ոչ թէ նրան համար, որ չեմ ուզում վերադարձնել: Մեռնի ժլատ հայրս, ինչպէս որ արդէն մեռնում է, եթէ միայն ճիշտ է. կարծես թէ ինձ համար չէր

հաւարում, որ ամսական յիսուն ռուբլուց աւելի չէր ուղարկում ինձ: Ես համոզուած եմ, որ այսօրու էլին նա առնուազն քսան հազար ռուբլի ունի հաւաքած:

Ես աշխատում էի շլտել նրան. չզիտեմ ինչու, կամաց-կամաց մի խուլ ատելութիւն էի զգում դէպի նա:

— Կարո՞ղ ես երեակայել, — յանկարծ ասաց նա, — որ այսօր փողոցում պատահեցի այն աղջկան:

Իսկոյն յիշեցի նրա նախորդ զիշերուայ պատմութիւնը, և հետաքրքրութիւնս շարժուեց:

— Այնպէս գեղեցկացել, այնպէս փարթամացել է անպիտանը, — շարունակեց նա կօշիկները հանելով, — որ իսկոյն շկարողացայ ճանաչել: Ասենք, այն ժամանակն էլ տգեղ չէր: Կարծեցի, թէ պիտի յանդիմանի, բայց ընդհակառակը... Գանակ չունես:

— Ի՞նչ ես անում:

— Ուզում եմ մագոլս կտրեմ:

Գրչահատս շարտեցի նրա անկողնի վրայ:

— Ամուսնացել է: Ասաց, որ ամուսինը ջրի տարածներից մէկն է, ոչինչ չի իմանում: Յետոյ հասկացրեց, որ մենք կարող ենք մեր բանը շարունակել...

— Ի՞նչ բան:

Թուսեանը նայեց ինձ և ծիծաղեց:

— Ի՞նչ միամիտ ես եղել... Հարցրեց, թէ որտեղ եմ ապրում, ես էլ տուի քո տան հասցէն:

— Ի՞նչ, — ազդադակեցի ես, զայրացած վեր

թռչելով տեղիցս:—Դու ուզում ես անառականոց շինել իմ տունը:

Նա նորից ծիծաղեց:

—Մի վախենար, նա միայն պէտք է գրի ինձ, թէ որտեղ կարող ենք տեսակցութիւն ունենալ:

Միանգամայն ապահով կարող ես լինել, ես այնքան յարգում եմ քեզ, որ երբէք ի չարը չեմ գործ գնիլ քո հիւրասիրութիւնը:

Նա գուլպաները հանեց, գրչահատն առաւ և սկսեց քերթել ոտի մազոլը՝ ներքին շրթունքն ատամների մէջ սեղմած:

—Սխր չես ասիլ, ինձնից զաւակ էլ է ունեցիլ: Ինքն ասաց: Խեղդել դէն է ձգել:

Սյդ խօսքերը Քուսեանն արտասանեց այնպիսի անտարբերութեամբ, որ իրեն գործակից այդ ոճրագործ աղջիկը կարծես տանձ է կերել և կոթը դէն շարտել:

Յանկարծ այնպիսի մի նողկանք և, միևնոյն ժամանակ, այնպիսի մի կատաղութիւն տիրեց ինձ, որ քիչ մնաց վեր կենայի և ձեռքից բռնած դուրս ձգէի այդ աւազակին:

—Եւ նա այդ... բանը քեզ պատմեց նոյնպիսի անտարբերութեամբ, ինչպէս այժմ դ՞ու պատմեցիր ինձ, — նկատեցի ես, զսպելով ինձ:

—Ձէ. նա մի քիչ յուզուեց... Եւ հասկանալի է, թէ ինչու: Ինչ ուզում է լինի մայրական զգաց-

մունքն ուրիշ է: Իսկ ես... Ի՛նձ ինչ:

Ես արդէն աւելորդ համարեցի խօսել այդ ցի-
նիկի հետ, որը ոչ թէ միայն ամօթն էր կորցրել,
այլ և խղճի նշոյլ անգամ չկար նրա մէջ:

Խորին արհամարհանքով և զգուանքով դիտում
էի, թէ ինչպէս նա ամենայն հանդստութեամբ և
մեծ ուշադրութեամբ քերթում էր մազոյր, ռտները
մորեխի յետին ռտների նման սուր անկիւնաձև ցցած:
Յետոյ, որ վերջացրեց, դանակը ծալեց, վեր կացաւ
տուեց ինձ, շնորհակալութիւն յայտնեց, ասաց, որ
այժմ կարող է հանգիստ ման գալ, և գնաց պառկեց
անկողնում: Պառկելուն պէս խփոյն քնեց իւր մըշ-
տական ազմկող խռմփոցով:

Հետեեալ գիշերը, երբ ես նորից պարապում
էի, դարձեալ նոյն ժամին, ինչպէս և նախորդ գի-
շերը, հնչեց դռանս գանգակը: Այս անգամ արդէն
լիովին համոզուեցի, որ նախորդ գիշերն իմ գլխին
այնպիսի յիմար խաղ խաղացողը Թուսեանը չէր,
որովհետև այս անգամ նա պառկած էր սենեակումս
և խռմփացնում էր, որբան շնչափողում ոյժ ունէր:
Գնացի դուռը բանալու: Ելի խաղաղ գիշեր, էլի
ոչոք: Աւրիշ ենթադրութիւն չունէի անելու, եթէ ոչ
դարձեալ այն ենթադրութիւնը, որ գանգակս բա-
շողը գիշերաշրջիկ անհոգ սրիկաներից մէկն է ան-
պատճառ: Եւ երբ, երրորդ գիշերը, կրկնուեց նոյնը,
յանկարծ այնպիսի մի անգուսպ կատաղութեամբ

Ներքև վազեցի, որ էլ քիթ ու մուկ չէի հարցնիլ, եթէ այդ սրիկան ձեռքս ընկնէր: Բայց ինչ սրիկայ, ինչ մրիկայ, ձիւնով ծածկուած փողոցն ամայի էր, անապատի պէս: Յանկարծ գլխումս մի ուրիշ ենթադրութիւն ծագեց: Մտածեցի՝ մի գուցէ այն ոճրագործ կինն էր, որին Թուսեանը տուել էր իմ տան հասցէն և որը խոստացել էր նրան իրենց «բանը շարունակել»: Բայց դա անկարելի բան էր, որովհետեւ, նախ, որքան էլ նա մի անպատկառ կին լինէր, չէր համարձակիլ իրեն անծանօթ մարդու մի տուն պիղծ սիրոյ տեսակցութեան վայր դարձնել. երկրորդ՝ էլ ինչո՞ւ էր գալիս զանգակը քաշում, երբ չպէտք է սպասէր, որ դուռը բանային:

Չորրորդ գիշերը գործն արդէն ուրիշ կերպարանք ստացաւ: Այս անգամ ևս զանգակս հնչեց, բայց այլևս չգնացի դուռը բանալու, որովհետեւ նախ՝ դարձեալ ոչոքի չէի տեսնիլ, երկրորդ՝ այս անգամ մի անծանօթ և անորոշ երկիւղ կաշկանդեց ինձ: Չանցաւ մի րոպէ, զանգակս դարձեալ քաշեցին: Երկիւղս կրկնապատկուեց: Ուզում էի զարթեցնեմ Թուսեանին (նա դարձեալ տանն էր և դարձեալ խումփացնում էր իւր անկողնում), ուզում էի գնամ վերկացնեմ և ծառայիս, բայց ամաչում էի իմ վախկոտութիւնից: Ես արձանացել էի սենեակիս մէջ տեղում, չիմանալով ինչ անեմ: Ականջներս ահամայ սրել էի գէպի դուրս. սպասում էի, որ զանգակս

երրորդ անգամ պիտի հնչի. բայց այլ ևս ոչ մի ձայն չլսեցի: Յետոյ զարմանքով տեսայ, որ ամբողջ մարմնովս դողում եմ և սառն քրտինք էր պատել ճակատս: Ես ազատ էի նախապաշարումներից և, իհարկէ, չէի հաւատում սատանաների, քաջքերի և ալքերի գոյութեան. բայց այն հանգամանքը, որ ամեն զիշեր, զրեթէ ճիշտ միևնոյն ժամին, մի անյայտ, աներևոյթ էակ գալիս էր զանգակս քաշում, կարող էր ամենասկեպտիկ մարդուն անգամ սնտիապաշտական երկիւղ ազդել—անորոշ, անմիտ, գուցէ և ծիծաղելի, բայց, յամենայն դէպս, զօրաւոր երկիւղ: Այդ զիշեր քունս շտարաւ:

Հետեալ առաւօտեան եղելութիւնը պատմեցի հիւրիս:

— Ես կըբռնեմ նրան, — ասաց Թուսեանը:

— Ո՞ւմ:

— Զանգակը քաշողին:

— Յետոյ գիտես սի է:

— Գէ մէկը կըլինի, էլի:

— Յետոյ ինչպէս պէտք է բռնես:

— Այս զիշեր կըտեսնես: Սատանայ էլ լինի, կըբռնեմ: Ասում ես, ժամը տասներկուսի մօտերքն է քաշում, չէ՞, զանգակը: Լաւ: Այդ ժամին ևս կըզնամ կը կանգնեմ դիմացի տան պատշգամբի տակ և կըսպասեմ. հէնց որ կըմօտենայ զանգակը քաշելու, իսկոյն վրայ կըվազեմ և կըբռնեմ: Իսկ դու, յամե-

նայն դէպս, կանգնիր դռան հտեր, որպէս զի, ընդ-
դիմանալու գէպքում, միասին ներս քարշ տանք և
տեսնենք՝ մարդ է, թէ սատանայ: Եթէ մարդ լինի,
հօ լաւ կը թակենք, իսկ թէ որ սատանայ լինի,
այն ժամանակ, ով զիտէ, գուցէ կարողանանք պոչը
կտրել:

Այդպէս էլ արինք: Այդ գիշեր ծառայիս պա-
տուիրեցի, որ շքնի, և յայտնեցի պատճառը: Նա
սաստիկ վախեցաւ, բայց ինձ պէս ամաչեց երկիւզը
յայտնել: Միմիայն Թուսեանն էր, որ անխուով հան-
գըստութեամբ սպասում էր որոշեալ ժամին: Ժամը
տասներկսից տասը րոպէ առաջ նա, յամենայն
դէպս, վերցրեց իմ հաստ ձեռնափայտը և զնաց
որոշեալ տեղը՝ անյայտ այցելուին սպասելու: Պարզը-
կայ և խիստ ցուրտ գիշեր էր. լուսնի լոյսը կրկնա-
պատկուում էր փոփոցում անհալ գրուած ձիւնի սպի-
տակութեամբ: Ես և ծառաս կանգնած էինք դռան
հտեր, պատն ի վեր ցից կանգնած: Անհուն հետա-
քրքրութիւնից և անորոշ երկիւզից երկուսս էլ կար-
կամել էինք: Շունչս պահած՝ ականջս սրել էի գէպի
զանգակի թելը, որն ուղղակի անցնում էր գլխիս
վերեւով: Գրսից լսուած ամեն մի շրշիւնի վրայ
սարսափի ցնցումներ էին անցնում մարմնովս: Որ-
քան ժամանակն անցնում էր, այնքան գոզը բռ-
նում էր ինձ: Սակայն ինձ քաջութիւն էր տալիս
այն զիտակցութիւնը, որ Թուսեանը դուրսն է, և

Ժառայիս ներկայութիւնը: Ծառաս կանգնած էր այնպէս անշարժ, որ ինձ թւում էր, թէ նա կողքիս չէ: Նախասենեակս մութն էր:

Վայրկեաններն անցնում էին սոսկալի դանդաղութեամբ: Չգիտեմ ժամը տասներկսից պակաս էր, թէ անց, մէկ էլ տեսնեմ դռան ետեից ոտի զգուշաւոր քայլերի ձայն լսուեց. յետոյ ուղիղ ականջիս տակ ճրճուաց զանգակի թելերն իրար հետ միացնող պղնձի ժանգոտ եռանկիւնին, զանգակի թելը շարժուեց և զանգակը զրնգզրնգաց: Մագերս բիզբիզ կանգնեցին: Նոյն բոպէին ինչ-որ թրխկաց դռանը: Ծառաս վախից յանկարծ մի անորոշ ձայն արձակեց:

— Բաց արէք, բռնել եմ, — լսեցի Թուսեանի աղաղակը դրսից:

VIII.

Զիմացայ, ինչպէս բաց արի դուռը:

Թուսեանը ներս մտաւ մի ինչ-որ ահագին սև բան զրկած:

Եկէք տեսնենք ով է, — ասաց նա և, իւր ծանրութեան տակ տնքալով, սկսեց վերև բարձրանալ մութ նախասենեակիս սանդուղքով: -- Փայտը, փայտը... դուրս մնաց, — կանչեց նա:

Ծառայիս զրկեցի, որ ձեռնափայտը ներս բերի,

իսկ ես, դուր մարմնիս, բարձրացայ Քուսեանի ետևից:

Հասնելով սանդուղքի գլուխը, նա ոտով խփեց բաց արեց մուկ հիւրասենեակիս դուռը, իւր բեռը ներս տարաւ, ապա վայր դրեց, յետոյ բարշ տուեց ննջարանս:

Շտապով ներս մտայ, ճրագի լուսով նայեցի բռնուածի երեսին և տեղսուտեղս քարացայ:

Քարեզինն էր:

— Օհ, անիծուե՛ս դու, — ինքնաբերաբար դուրս թռաւ րիւանիցս, և սաստիկ լծուլացած՝ նստեցի աթոռի վրայ:

Քարեզինը կանգնած էր սենեակի մէջ տեղում, լուռ, անշարժ, գլուխը կախ, ձեռքերը կախ: Պլխարկը վայր էր ընկել: Սաստիկ գունատ էր և շնչում էր ծանր: Չէր նայում ոչ ինձ, ոչ Քուսեանին:

Ծառան, աչքերը վախից շորս շինած, ներս քրեց ձեռնափայտս և Քարեզնի գլխարկը, որը, ինչպէս երևում էր, դուրսն էր վայր ընկել, որովհետև շագախուած էր ձիւնի մէջ:

Քուսեանը ծառայիս ձեռքից առաւ ձեռնափայտը և ուղղակի կանգնեց Քարեզնի առաջ:

— Գէհ, բարեկամս, — ասաց նա, — այժմ, որ բռնուել ես, ասա մեզ՝ մտրդ ես, թէ սատանայ, և, եթէ մարդ ես, մարդկանց ո՞ր տեսակին ես պատկանում. իսկ եթէ սատանայ ես, պոշաւո՞ր ես, թէ անպոշ: Այդ բանն անհրաժեշտ է իմանալ, որովհե-

տև ուղում ենք քեզ հետ վարուել ըստ կարգին
Մեկքիսեղէկի:

Եւ, որովհետև Քարեզինը ձկան պէս լուռ էր,
նա ձեռնափայտը շարժեց և գոռաց.

— Գէ՛հ, ձայն կը հանե՞ս, թէ չէ:

Վերկացայ և հեռացրի Թուսեանին.

— Թող, — ասացի, — սա իմ հին բարեկամն է:

Թուսեանը սաստիկ զարմացաւ, բայց ժամանակը
չէր նրա զարմանքը փարատելու, որովհետև նախ
իմ զարմանքս էի ուղում փարատել: Ծառաս, դեռ
ևս սարսափի արտայայտութիւնն երեսին, կանգնած
էր դռան մօտ և մեծ հետաքրքրութեամբ դիտում
էր Քարեզնին, որին շատ անգամ էր տեսել ինձ
մօտ: Քարեզնի գլխարկն առայ ձեռքից, զրի աթոռի
վրայ և պատուիրեցի, որ հեռանայ: Ծառաս դուրս
գնաց: Գուռը փակեցի:

— Լսիր, — գիմեցի Քարեզնին, — այն գո՛ւ էիր
ամեն գիշեր գալիս զանգակս քաշում:

Ձայն չկայ:

— Ձե՞ս լսում, քեզ հետ եմ:

— Ես էի, — վերջապէս լսեցի Քարեզնի ձայնը:
Նա դարձեալ չէր նայում ինձ և այս անգամ
ճակնդեղի պէս կարմրել էր:

— Յետոյ ինչո՞ւ չէիր սպասում, որ գուռը բանամ:

Նա գլուխն աւելի կախեց և էլի ձայն չհանեց:

— Ախր, այ տնաքանդ, — շարունակեցի ես, —

այս հինգ-վեց օր է, դու ինձ ամեն զիշեր սարսափի մէջ ես պահում: Չանգակի ձայնը լսում, զալիս եմ դուռը բաց անում—ոչոք չկայ: Այդպիսի բան կարելի է: Յնորուած մարդը միայն այդպիսի բան կանի: Կամ, դուցէ, դու խկապէս ցնորուել ես: Հը: Քեզ հետ եմ, այ տնաքանդ, ձայն հանիր:

Բան չունիս: Կանգնած էր արձանի պէս: Ջհաննամը, գոնէ մի անգամ էլ է նայէր երեսիս,— ամենևին:

Անհամբերութիւնից արդէն ճաքում էի: Այդ նկատեց Թուսեանը և բարձրաձայն ծիծաղեց: Նրա ծիծաղի վրայ Քարեզինը, վերջապէս, բարձրացրեց գլուխը, նայեց նրան և նորից կախեց: Բռնեցի ձեռքից և տարայ նստեցրի լամպի մօտ: Հնազանդուեց ինձ երեխայի նման:

— Գու զիտես, որ ութ ամիս է՝ որոնում եմ քեզ և ոչ մի տեղ չեմ գտնում,—ասացի ես հանդարտ ձայնով, որպէս զի գոնէ այդպիսով խօսեցնեմ նրան:— Ո՞րտեղ էիր, քաղաքումս էիր:

— Գնացել էինք արտասահման, — վերջապէս պատասխանեց նա, բայց դարձեալ չէր նայում ինձ:

— Ուրեմն ամառանոցից վրած նամակներս չե՞ս ստացել:

— Ոչ:

— Կինդ սղջ է, առսղջ է:

Յանկարծ Քարեզինը վեր կացաւ տեղից, ա-

սաց «քարի գիշեր» և դիմեց գէպի գուռը:

Վեր թռայ և վազեցի նրա հտեից.

— Սպասիր, յիմար, ուր ես գնում:

— Գնում եմ...

— Կաց, բան եմ հարցնում:

— Ոչ... Հեմ կարող... գնում եմ, —ասաց նա այնպիսի կցկտուր և այնպիսի տարօրինակ յուզուած ձայնով, որ ես զարմանքից տեղսուտեղս արձանացայ:

— Ձեր գլխարկը, պարոն, — կանչեց նրա հտեից Թուսեանը, և աթոռի վրայից վերցնելով նրա գլխարկը, թափ տուեց և ուղղակի դրեց նրա գլխին:

Քարեգինը շտապով դուրս գնաց:

— Կա, գիտե՞ս, անպատճառ լուսնոտ է, —ասաց Թուսեանը:

Ես դուրս վազեցի Քարեգնի հտեից: Թուսեանն ուզում էր հետևել ինձ, բայց չթողեցի: Քարեգնին վրայ հասայ այն ժամանակ, երբ նա փողոցի գուռը բաց էր արել և դուրս էր գնում: Ես պահեցի նրան և նորից սկսեցի հարցեր առաջարկել իւր վարմունքի մասին, որն ուղղակի երազ էր թւում ինձ: Նա ոչինչ չպատասխանեց, դուրս գնաց, յետոյ յանկարծ նստեց դռանս առաջ գտնուած քարի աստիճանի վրայ և գլուխը կախեց ծնկների մէջ: Մինչդեռ ես ապշած էի մնացել նրա այդ նոր վարմունքի վրայ, յանկարծ ականջիս դիպան նրա խուլ հեկեկանքի

ձայները: Ակամայ ոտս դուրս դրի և խոնարհուեցի
դէպի նա:

— Գարեզֆն... ի՞նչ պատահեց... ինչո՞ւ ես լաց
լինում:

— Հապա ի՞նչ անեմ, — արտասանեց նա, գլուխն
աւելի կախելով ծնկների մէջ: — Ես չեմ կարող տուն
գնալ...

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ... շսպանեցի նրան...

— Ո՞ւմ:

— Այն պարոնին...

— Ո՞ր պարոնին:

— Քեզ մօտ որ կայ...

— Թուսեանի՞ն:

— Ինձ որ բռնեց...

— Հն՛, հն՛, նրան:

— Այո:

— Գու նրան ուզում էիր սպանել:

— Այո... Ոչ, ես չեմ ուզում նրան սպանել...
նա է ստիպում որ գամ սպանեմ...

— Ո՞վ, Թուսեանը՞:

— Ոչ, կինս...

Ես բռնեցի նրա ձեռքերից և փերկացրի: Մենք
կանգնած էինք ձիւնով և լուսնի լուսով ցերեկուայ
պէս լուսաւորուած փողոցում: Ես նայեցի ուղղակի
նրա աչքերին:

— Լսիր, հօ շին խելագարուել, — շատ լիջու-
թեամբ հարցրի ես:

Նա մի վախկոտ հայեացք ձգեց դէպի ներս,
դէպի մութ նախասենեակս, յետոյ յանկարծ բռնեց
ձեռքիցս և հեռացրեց դռան մօտից: Այժմ նա լաց
չէր լինում. այժմ նրա աչքերը փայլում էին մի
տարօրինակ փայլով:

— Յիշում ես, — շշնջաց նա, — որ քեզ պատմե-
ցի, թէ ինչպէս Մուշտայիդում նա գետնի վրայ
ատրճանակ նկարեց և հարցրեց՝ մարդ կարո՞ղ եմ
սպանել: Ահա, տես...

Նա գրպանից մի ատրճանակ հանեց, ցոյց
տուեց և խկոյն էլ գրպանը կօխեց նորից:

— Այս ատրճանակը նա է տուել ինձ և նա է,
որ ամեն գիշեր ուղարկում է ինձ այդ պարոնին
սպանելու: Գալիս եմ, գանգակը քաշում, բայց հէնց
որ գանգակի ձայնը դիպչում է ականջիս, փախչում
եմ սարսափահար... Հարցնում ես՝ հօ շին խելա-
գարուել: Ա՛յ, դեռես չէ. բայց կը խելագարուեմ,
անպատճառ կը խելագարուեմ, Աստուած է վկայ,
կը խելագարուեմ, որովհետեւ...

Նա նորից բռնեց ձեռքիցս և աւելի հեռու
տարաւ:

— Օրիորդ ժամանակն արդէն նա այդ պարոնի
հետ... Հասկանում ես, թէ ոչ, — շշնջաց նա ուղղա-
կի ականջիս մօտ: — Ես ոչինչ չգիտէի... ոչինչ

չիմացայ... այդ նա ինքն ասաց... Եւ որովհետեւ այդ ինձ համար միևնոյն էր,—որովհետեւ ես պաշտում եմ նրան,—այդ պատճառով նա սաստիկ կատաղեց և ասաց՝ միթէ պատուասիրութիւն չունիմ... Ասաց, որ այդ գազանիքն ինձ յայտնեց նրա համար, որ վրէժխնդիր լինեմ... Այդ այս օրերս էր, անցեալ օրը... Նա, չզիտեմ որտեղ, հանդիպել էր այդ պարոնին, և ասաց, որ քեզ մօտ է... Բայց ինչո՞ւ համար, ի՞նչ օգուտ... Որ ես էլ, ինքն էլ կորչե՞նք... Բայց ես պաշտում եմ նրան... Եթէ բանն իմ պատուասիրութեանն է վերաբերում—ես չեմ ուզում... Ես այդ մասին չեմ մտածում և չեմ էլ ուզում մտածել... Ի՞նչ պատահել է—պատահել, միթէ չի կարելի մոռանալ... մանաւանդ որ գործն անցած է... Բայց նա ինձ հանգիստ չի տալիս...

Նա մի բոսկէ կանգ առաւ, շունչը ետ բերեց, —պատմում էր վերին աստիճանի կցկտուր կերպով և իրեն ռշ-յատուկ արագախօսութեամբ,—և շարունակեց.

—Ութ ամիս է, որ մենք պսակուած ենք և այս ութ ամսում այնքան երջանիկ, այնքան խաղաղ էինք ապրում... Երջանկութիւնից մոռացել էի ամեն բան, նոյն իսկ քեզ. մի բոսկէ անգամ շէի ուզում տանից հեռանալ, որպէսզի միշտ տեսնեմ նրան, միշտ լսեմ նրա ձայնը, ստրկի պէս ծառայեմ նրան... Բայց այժմ կեանքս ուզողակի մի դժոխք է դարձել...

Նա դուրս է անուժ ինձ, չի ուզում երեսս տեսնել, մինչև որ շսպանեմ... Անցած յիշատակը վերանորոգուել է նրա մէջ կատաղի ուժով, և նա մի մարմնացած վրէժխնդրութիւն է դարձել... Այն օրը, որ տուն եկաւ, սարսափեցի, որ նայեցի նրա աչքերին... Ներս մտնելուն պէս նստեց բազմոցի վրայ և հրամայեց, որ շոքեմ իւր առաջ: Եւ, երբ կատարեցի նրա հրամանը, ասաց. «Յիշում ես, երբ մեր նշանուած ժամանակ գնացել էինք Մուշտայիդ, դու ասացիր, թէ մարդիկ վնասակար են, իսկ բղէզը—ոչ... այն կարմիր բղէզը, յիշում ես, որին խղճացիր սպանել... Յիշում ես,—ասաց,—որ ասացիր, թէ դու աւելի շուտ մարդ կըսպանես, քան թէ բղէզ»: Ասացի, որ յիշում եմ: «Յետոյ, յիշում ես,—ասաց,—այն մարդուն, որ, անցուղարձ էր անուժ մեր առաջով և լիրբ հայեացքներ էր ձգում ինձ վրայ: Յիշում ես, որ երբ ես հարցրի, թէ չնո սպանիլ այդ մարդուն, եթէ յանկարծ մօտենայ ինձ և համբուրի, դու բացականչեցիր՝ «ճ, անպատճառ»: Յիշում ես»: Ասացի, որ այդ էլ եմ յիշում: Յետոյ յանկարծ վեր թռաւ տեղից. աչքերը վառուժում էին սոսկալի կերպով: «Դէ՛հ, այժմ իմացիր,—ասաց,— որ ես գտել եմ այն մարդուն, որն ինձ ոչ թէ միայն համբուրել է, այլ և զաւակ է ունեցել ինձնից, և այդ զաւակն ես իմ ձեռքով խեղդել սպանել եմ»: Արովհետեւ չիմացայ ինչ ասեմ, այդ պատճառով նա

ձեռքերն այնպիսի ուժով դրեց ուսերիս, որ քիչ մնաց վայր ընկնեմ մէջքիս վրայ: «Սպունչ, — բղաւեց, — լսեցիր ինչ ասացի: Ինչո՞ւ չես կատաղում, ինչո՞ւ չես վեր թռչում և չես ազատակում» — ասն, ով է այդ մարդը, որ գնամ սպանեմ»: Որովհետև ես դեռ վերին աստիճանի ապշած էի և ձայն չէի հանում, այդ պատճառով յանկարծ ոտով պինդ խըփեց կրծքիս, յետոյ գնաց երեսն իվայր ընկաւ բազմոցի վրայ և սկսեց սաստիկ հեծկլտալ: Այնքան օտարստի էր նրա հեծկլտանքի ձայնը, որ սկզբում կարծեցի, թէ ծիծաղում է. բայց երբ վերկացայ և մօտեցայ, տեսայ որ խկապէս լաց է լինում: Յետոյ, երբ կամեցայ մխիթարել, պառկած տեղից ոտները գիծ-գիծ շարժեց, ուզում էր դարձեալ խփի, և հեծկլտանքի միջից ազատակեց. «Կորիր, ես քեզ չեմ սիրում, ես քեզատում եմ, դու տղամարդ չես, դու ամուսին չես, դու փախտ ես»: Նոյն գիշերը տուեց ինձ այս ատրճանակը, — այդ օրն էր առել, — և ասաց, որ դամ սպանեմ: Ես էլ եկայ, զանգակդ քաշեցի ու փախայ, որովհետև ես դեռ լաւ չէի հասկանում, թէ ինչ էր ուզում ինձնից: Մարդ սպանել... Ինչո՞ւ համար... Միթէ ճիշտ էր նրա պատմածը: Չէի հաւատում, որովհետև այդ անկարելի բան էր... Ես ուղղակի կարծում էի, թէ նա գժուել է: Երբ տուն գնացի, ասաց. «Սպանեցիր»: Խաբեցի. ասացի, որ տանը չէր: Հետևեալ գիշերը դարձեալ

ուղարկեց, երբորդ գիշերը նոյնպէս, շորբորդ գիշերը նոյնպէս. իսկ երեկ և այս գիշեր ուղղակի ասաց. «Իմացիր, եթէ այս անգամ ևս սպանած չես եկել, ես ինքս կըզնամ կըսպանեմ և սպա գետը կընկնեմ կըլսեզգուշեմ: Սյժմ ասա, ի՞նչպէս տուն գնամ, որ չեմ սպանել: Երեկ գիշեր իւր խօսքը չկատարեց, բայց այս գիշեր գիտեմ, որ կըկատարի, անսպտաճառ կըկատարի...»

Եւ Գարեգինը նորից սկսեց լաց լինել — այս անգամ ուղղակի երեսայի նման, ազի-ազի արտասուքներ թափելով աչքերից:

Բացուած զազանիքի անակնկալութիւնն այնպէս ազդել էր ինձ, որ ես չէի զգում, որ այդ ցուրտ գիշերին կանգնած եմ փողոցում, ձիւնի մէջ, զլիսաբաց, առանց վերարկուի, առանց կրկնակօշիկների: Լսում էի նրան ազահութեամբ. բայց նրա պատմութիւնն այնքան կցկտուր էր, որ շատ բան լրացնում էի երեակայութեամբ: Վերին աստիճանի խղճում էի բարեկամիս. դժուար թէ դրանից աւելի ողորմելի արարած լինէր աշխարհիս երեսին: Բայց միևնոյն ժամանակ մտածում էի և Սառայի մասին. — ի՞նչ արարած էր դա. մի ֆեննոմեն, թէ ուղղակի մի խելագար, որ ինքն էլ չէր իմանում, թէ ի՞նչ էր անում և ի՞նչ էր պահանջում: Նախ, օրիորդ ժամանակ, անտառի մէջ ընկնում է առաջին պատահած մարդու գիրկը, յետոյ իւր սեպհական ձեռքով խեղ-

դում է իւր դաւակին, յետոյ ամուսնանում է այս ողորմելի երիտասարդի հետ և այժմ ուղարկում է սպանելու նրան, որին, անշուշտ իւր կամքով, անձնատուր է եղել օրիորդ ժամանակ։

— Գու սուտ չէիր ասում, որ ես դժբաղդ կըլինեմ այդ աղջկայ հետ, — շարունակեց Պարեզինը լացուկումած ձայնով։ — Բայց ոչ, ես դժբաղդ չէի, ինձնից աւելի երջանիկ մարդ չկար աշխարհիս երեսին, և այս բոպէիս էլ ես չափազանց երջանիկ կըլինեմ, եթէ նա կամենայ, եթէ նա մոռանայ այն, ինչոր պատահել է... Ուրիշը լինէր իմ տեղ, գուցէ սպանէր, բայց ես չեմ կարող։ Սպանելու համար հարկաւոր է վառուել, կատաղել, գազանանալ, բայց մեղաւոր եմ, որ ես այդ ընդունակութիւնը չունեմ։ Զօրով ուզում էի ինձ վառել, բայց դրա հետևանքն այն էր լինում միայն, որ ես կարողանում էի դանդակը բաշել և սպա փախչել խելագարի նման... Ինձ թւում է, թէ կամ ես եմ խելագարուել, կամ նա, կամ երկուստ միասին... Յամենայն դէպս, ես չեմ կարողանում հասկանալ, թէ ինչ եմ անում ես կամ ինչ է անում նա...

Պարեզինը, գլուխը երկու ձեռքերի մէջ առած, շշմած մարդու պէս, կարճ ժամանակ նայեց գետնին, յետոյ յանկարծ եռանդով բռնեց ձեռքերիցս և աղերսալի հայեացքով նայեց աչքերիս։

— Սիրելի ընկեր, — բացականչեց նա, — տեսնում

ևս, որ ևս կորած ևմ, փրկիր ինձ, փրկիր նրան...
Արիւնը սառում է երակներիս մէջ, երբոր մտածում
եմ, որ նա կարող է խկապէս խելագարուած լինել...
Անցեալ գիշեր նա քնած տեղից յանկարծ վեր թռաւ,
նստեց անկողնում, ձեռքերը տարածեց գէպի վեր
և սպաղակեց. «Աղանի՛ն, աղանի՛ն, աղանի՛ն...»
Սպիտակ, մաքուր, անմեղ աղանիին... : Սա դարմա-
նալի է, չէ... Սա կասկածելի է, չէ... Ուղեգր
ցնդում է, ես այլ ևս ոչինչ չեմ կարողանում մտա-
ծել... Ինձ թւում է, թէ գլորում եմ, գլորում եմ,
գլորում եմ անդադար և չեմ կարողանում ոտիս
վրայ կանգնել... Միակ յոյսս դու ես մեացել. փրկ-
իր ինձ, ազատիր ինձ, սիրելի ընկեր: Սաս, ի՛նչ
անեմ այս սոսկալի վիճակից դուրս գալու համար:
— Ահա թէ ինչ, — ասացի ևս: — Նախ այդ
ատրճանակն ինձ տուր:

Սա արագութեամբ գրպանից հանեց ատրճա-
նակն և ինձ տուց:

— Այժմ տուն գնա: Երբ հարցնի՛ սպանեցիր,
ասա, որ ուզում էիր սպանել, բայց ես արգելեցի և
ատրճանակը խլեցի ձեռքիցդ: Բոլորովին անհող
կաց. նա իւր սպառնալիքը չի գործադրիլ, յամենայն
գէպս—այս գիշեր: Իսկ վազը ես ինքս կըզամ
նրա հետ խօսելու: Ուզում ես, որ գամ:

— Ո՛վ, ևս, — բացականչեց նա. — ես քեզ իմ
ազատարար հրեշտակի պէս կընդունեմ:

—Ո՛չ, ամենևին հարկաւոր չէ, որ դու ընդունես ինձ: Գու մինչև անգամ ամենևին չերևաս: Ասում ես:

—Իհարկէ, լսում եմ: Բայց ի՞նչ պէտք է խօսես նրա հետ:

—Այդ քո գործը չէ: Այժմ յայտնիր ինձ ձեր տան հասցէն և հեռացիր:

Նա մանրամասնօրէն յայտնեց իրենց տան հասցէն:

—Վաղը կըգամ երեկոյեան ժամը 5-ին: Գէ՛հ, այժմ գնա. ես սառեցի այս ձիւնի մէջ:

Գարեգիներ վերին աստիճանի թեթեացած՝ առաւ ձեռքս, արագութեամբ համրուրեց և փախաւ:

Տուն որ մտայ, Թուսեանն արգէն պառկած էր անկողնում և, կուրծքը բաց, ձեռքերն այս ու այն կողմ տարածած, խումփացնում էր ըստ սովորականին: Սիրտս ասաց՝ ատրճանակը հանեմ և տեղնուտեղը շանսատակ անեմ—այնքան զարշեղի թուաց ինձ այդ բոպէին նրա մազակալած կուրծքը, անհող խումփոցը:

IX.

Հետևեալ օրը, երեկոյեան ժամը 5-ին, գնացի Գարեգնի տուն: Ապրում էր խուլ, բայց լաւ փողոցում, լաւ տան մէջ: Նրա բնակարանի մուտքն առանձին էր երկաթէ վանդակով պատած ապակաւոր դռներով: Գուռը բաց արեց մաքուր, կոկիկ

հազնուած մի գեղեցկադէմ ռուս ազախին: Հարցրի՛ պարոնն ու տիկինը տանն են. պատասխանեց, որ տանն են: Ասացի, որ կամենում եմ տեսնել տիկնոջը միայն և տուի այցետոմս: Նա ներս հրաւիրեց ինձ և տարաւ հիւրասենեակը, իսկ ինքը չգիտեմ ուր շքացաւ:

Հիւրասենեակը զարդարուած էր մեծ ճաշակով և շքեղօրէն: Առհասարակ ամեն բանից երևում էր, որ բարեկամս ոչինչ չէր խնայում լաւ ապրելու համար: Բայց այդ զարդարանքը, այդ լաւ ապրուստը, անշուշտ, իւր կնոջ շնորքը պիտի լինէր, այլապէս Քարեգնին լաւ էի ճանաչում և գիտէի, որ թէև փող ունի, բայց կարգին ապրելու շնորհք—Աստուած տայ:

Անհամբեր հետաքրքրութեամբ սպասում էի տեսնելու այն կնոջը, որին Ֆենոմեն և խելագար էի համարում, և զգում էի, որ, չգիտեմ ինչու, վախենում եմ:

Մինչգեռ, այդ սպասողական դրութեան մէջ, զբաղուած էի պատերից կախուած իւզաներկ պէյզաժները դիտելով, չէի լսել, թէ ինչպէս բացուել էր ետևս գտնուած երկու դռներից մէկը և, երբ շուռ եկայ, որ միւս պատի վրայ կախուած նկարները դիտեմ, տեսայ, որ այդ դռան շեմքում կանգնած է Սառան լուռ, արձանացած, և ինձ է նայում: Նա ամեննին չէր փոխուել. նոյն հպարտ հասակը, նոյն հրաշալի գլուխը, նոյն իրար հետ միացած երկայն

բարակ յոնքերը, նոյն յամառ հայեացքը, գէմբի նոյն պլաստիքական խիստ գծերը, որոնց մէջ ժպիտ ասուած բանն ամենեկին չկար: Հապնուած էր սև, իրանը գօտեորած կարմիր պլիւշով:

Ուզում էի մօտենամ նրան, բայց նրա ուղղակի աչքերիս յառած խիստ սուր հայեացքը թոյլ չտուեց, որ տեղիցս շարժուեմ: Նա դուռը փակեց, մօտեցաւ ինձ, կանգնեց ուղղակի առաջս և ձևաքերը խաշեց կրծքին:

— Ինչո՞ւ դուք կամենում էք միայն ինձ տեսնել, — առանց այլապլուծեան ասաց նա:

Սյգ տարօրինակ ընդունելութիւնը բաւական չփութեցրեց ինձ:

— Որովհետև, — թոթովեցի ես, — ես ուզում եմ միայն ձեզ հետ խօսել:

Նա մի փորձող հայեացք ձգեց ինձ վրայ:

— Ուրեմն դուք լսկ այցելութեան համար չէք եկել: Գուք առանձին խօսելիք ունիք յատկապէս ինձ հետ:

— Սյո՞ւ, տիկին:

Նա հրաւիրեց ինձ, որ նստեմ: Իսկ ինքը կանգնած մնաց և շարունակում էր իւր անողոր յամառ հայեացքով նայել աչքերիս:

Ինձ թւում էր, որ Սառան գիտէր, թէ ինչի համար էի եկել, թէ ինչ առանձին խօսելիք ունէի, ուստի ներս էր մտել նախապատրաստուած մարդու

սառնասիրտ անձնապատանով թեամբ և սպասում էր:

Սիրտս դուշակում էր, որ այդ կինը կարող էր շատ կոպիտ կերպով վարուել ինձ հետ իւր ընտանեկան գործին խառնուելու համար, և, հարկաւ, իրաւունք կունենար: Այդ պատճառով վճռեցի խորամանկ միջոցի գիմել:

— Գուք գիտէք, տիկին, — ասացի, — որ ես ու ձեր ամուսինը շատ մօտիկ բարեկամ ենք իրար: Ես նրան ճանաչում եմ իբրև վերին աստիճանի բարի, բայց խիստ տարօրինակ բնաւորութիւն ունեցող երիտասարդի: Նրա կեանքը լի է մի շարք տարօրինակ վարմունքներով, այնպէս որ երբեմն ես լրջօրէն կասկածել եմ նրա հոգեկան դրութեան մասին: Բայց այն վարմունքը, որ այս մի քանի գիշեր, մանաւանդ երեկ գիշեր, ցոյց տուեց նա, միանգամայն համոզեց ինձ, որ նրա հոգեկան դրութիւնը կանոնաւոր վիճակի մէջ չէ խկապէս: Բանն այն է, տիկին, որ ես մի անկոչ հիւր ունիմ տանը. Գարեզինը կէս-գիշերներին գալիս էր նրան սպանելու, իսկ երեկ գիշեր արդէն ուղղակի ուզում էր սպանել և կրսպանէր, եթէ ես չմիջամտէի: Սակայն այդ բանն ինձ այնքան չզարմացրեց, որքան այն, որ ասում էր, թէ դուք էք պատուիրել, որ գայ սպանի: Գարելի բան է միթէ այդ: Նա ինձ այնպիսի բաներ պատմեց, որպիսիք միայն խելագարի ուղեղը կարող է ստեղծել: Յամենայն դէպս, տիկին, ես եկել

եմ յատկասելս խնդրելու ձեզ, որ լուրջ ուշադրութիւն դարձնէք նրա վրայ. թիրևս կարելի լինի նրան փրկել. ես իմ կողմից պատրաստ եմ իմ ծառայութիւնը մատուցանելու: Ահա և այն ատրճանակը, որ երեկ գիշեր խլեցի նրա ձեռքից:

Եւ, գրպանիցս հանելով Քարեզնից առած ատրճանակը, գրեցի սեղանի վրայ:

Սառան ծիծաղեց. նրա ծիծաղը շար էր:

— Խլեցիք, թէ ինքը տուեց. ձեզ այդ ատրճանակը:

— Խլեցի, թէ ինքը տուեց, այդ չէ խնդիրը, տիկին, — ասացի ես, խիստ շփոթուելով: — Ուզում եմ ասել, որ թոյլ չտուի սպանէր:

— Թոյլ չտուիք, թէ նա ինքը չկամեցաւ սպանել, — կրկնեց Սառան իւր փորձող հայեացքով և նոյն շար ծիծաղով:

Եւ, որովհետեւ ես, յանկարծակիի եկած, արդէն բռնուած էի և շփոթմունքից այլ ես բան չկարողացայ ասել, Սառան յանկարծ դադարեց ծիծաղելուց և անողոր հանդատութեամբ ասաց.

— Գուք շատ գելիկանտ մարդ էք, պարոն. քաղաքավարութեան զգացումը ձեզ թոյլ չի տալիս ուղղակի ասելու, որ ինձ էք խելագար համարում, այդ պատճառով ամուսնուս հոգեկան դրութեան մասին էք կասկածներ յայտնում: Շատ կարելի է, ես խելագար եմ. այդ մասին չեմ վիճում. բայց

միանգամայն համոզուած կարող էք լինել, որ ես կատարելապէս զիտակից եմ իմ վարմունքին և կշռագատել եմ, թէ ինչու եմ ամուսնուս ուզարկում, որ սպանի ձեր հիւրասիրութիւնը վայելող պարոնին: Այլ ևս ոչինչ չեմ ուզում լսել:

Եւ Սառան, վերին աստիճանի քաղաքավարութեամբ և լի հպարտ արժանապատուութեամբ, զլուխ իջեցրեց ինձ, շուռ եկաւ և դիմեց գէպի այն դուռը, որտեղից դուրս եկաւ:

Ամօթահար, բարոյապէս ոչնչացած, մեքենայաբար առայ զլիսարկս և ուզում էի դուրս գնամ, երբ յանկարծ նա կանգ առաւ, կրնկի վրայ շուռ եկաւ նորից իմ կողմը և գրեթէ ազդակեց.

— Սպասեցէք:

Նրա ձայնը կարծես էլեկտրական ոյժ ունէր, և ես ակամայ կանգ առայ: Նա նորից մօտեցաւ ինձ և նորից կանգնեց ուզդակի առաջս:

— Քանի որ ձեզ ամեն բան յայտնի է, ես իրաւունք եմ տալիս ձեզ խօսելու, — ասաց նա ուզդակի հրամայական տոնով: — Խօսեցէք, ի՞նչ ունիք ասելու:

— Ես ոչինչ չունիմ ասելու, տիկին: Ես միայն ցաւում եմ, որ, իմ անզգուշութիւնից, խառնուել եմ ինձ չվերաբերող գործի:

— Նրանք դատարկ խօսքեր են, — անհամբեր նեղսրտութեամբ նկատեց նա: — Ասացէք ուզդակի

ինչու համար էք եկել:

Ես դեռ երկար տատանում էի այդ զարմանալի, այդ անհասկանալի կնոջ առաջ, որն իւր կատաղի աչքերով ուղղակի ուտում էր ինձ: Այնքան շփոթուած էի, որ չէի էլ իմանում ինչ ասեմ: Ահրջապէս, ինքս ինձ բռնի հաւաքելով, ասացի.

— Ես եկել եմ, տիկին, նրա համար, որ ձեր կարեկցութիւնը խնդրեմ Պարեգինի համար:

— Նա արժանի չէ կարեկցութեան, — անողոր խստութեամբ նկատեց Սառան. — որովհետեւ նա թոյլ է տալիս, որ իւր հետ միասին միևնոյն երկնքի տակ շնչի մի մարդ, որը խլել է իւր կնոջ պատիւը — մի բան, որը սրբութիւնից էլ բարձր պէտք է լինի նրա համար:

— Լաւ, Պարեգինը ի՞նչ մեղաւոր է, որ...

— Իսկ ես մեղաւոր եմ, — յանկարծ ազդակեց Սառան այնպիսի մի անզուսպ կատաղութեամբ, որ ակամայ յետույետ գնացի: — Մեղաւոր եմ, որ կուսական անփորձութեանս մէջ իմ մարմը, իմ անարատ սիրտս հաւատացել եմ մի մարդու, որն անխիղճ կերպով զործ ածեց ինձ սպիտակ ձեռնոցի պէս և կեղտոտելուց յետոյ դէն շարտեց: Ասացէք, եթէ մեղաւոր եմ, ես պատրաստ եմ իմ ձեռքովս ինձ մորթելու: Օ՛, դուք, տղամարդիկ... Եթէ դուք ընդունակ լինէիք հասկանալու, թէ ի՞նչ է նշանակում մի անմեղ, միամիտ, մի անբիծ աղջկայ համար յու-

սախարուած լինել անպրանիկ սիրոյ մէջ... Եթէ ձեզ ծանօթ լինէր մի այդպիսի սղջկայ այն զգացումը, երբ նա յանկարծ տեսնում է, որ ինքն ապօրինի մայր է... Գժօխքն այն տանջանքները շէր կարող տալ ինձ, ինչ որ ես զգացի այն ժամանակ, երբ տեսայ, որ ստիպուած եմ ահամայ գործած մեղքիս հետքը ջնջելու նոր, առաւել եւ սուկալի մեղսագործութեամբ... Մինչև այժմ էլ ինձ թւում է, թէ լսում եմ իմ անմեղ զաւակիս առաջին ճիշը, որին վիճակուած էր վերջինը լինելու... Ես գործեցի ամենամեծ յանցանքը, շլտուած, շտեսնուած մի յանցանք. ես իմ ձեռքովս սպանեցի իմ զաւակին... Եւ ամեն բոսէ, ամեն վայրկեան մահուան սոսկում էր պատում ինձ, երբ մտածում էի, թէ ահա, որտեղ որ է, ամեն բան կիմանան եւ ամօթի, խայտառակութեան սիւնը կըբարձրացնեն ինձ... Թէև ամեն բան ծածուկ միայ, բայց ինչ օգուտ դրանից: Անգհակառակը, իմ տանջանքը կրկնապատկուեց, եռապատկուեց, տասնապատկուեց, բաւական էր, որ ես գիտակից էի իմ յանցագործութեանը, ուրիշ էլ ինչ պատիժ էր հարկաւոր, որ դրանից էլ աւելի սոսկալի լինէր... Բայց ինչո՞ւ համար, ասացէք խնդրեմ, ինչո՞ւ համար: Մեղաւոր էի ես, որ կրում էի այդ տանջանքները եւ մինչև օրս էլ կրում եմ...

Այդ բոլորը Սառան արտասանեց զրեթէ մի շնչում եւ այնպիսի բուռն կատապուլթեամբ, որ ինձ

Թուում էր, թէ նրա աչքերից կայծեր են ցայտում: Նա մի վայրկեան շունչը ետ բերեց և շարունակեց նոյն արագախօսութեամբ, նոյն կատաղութեամբ.

— Առացէք խնդրեմ, զգացե՛լ է ձեր հիւրասիրութիւնը վայելող այդ պարոնն իմ այս երկիւզիս, իմ այս սարսափիս, իմ այս տանջանքներիս գէթ մի միլիոներորդ մասը: Քիտակից է նա, որ, եթէ ոչ բոլորովին, գէթ մասամբ ինքն էլ գործակից է իմ սոսկալի ոճրագործութեանը... Աչ, ոչ և ոչ. որովհետև երբ ես, այս երկու տարուայ ընթացքում նրան որոնելուց յետոյ, վերջապէս անցեալ օր անակնկալ կերպով հանդիպեցի նրան փողոցում և, փորձելու համար, յայտնեցի նրան եղելութիւնը, նա անտարբեր մ'նաց քարի պէս: Նա միայն... Նա կարծում էր, թէ ես նոյն միամիտ աղջիկն եմ, որպիսին տեսել էր ինձ անտառի մէջ... Նա կարծում էր, թէ ինչպէս այն ժամանակ կարողացաւ կուսական սրբութիւնս խախտել իմ անփորձութիւնից, այնպէս և այժմս կարող է իմ ընտանեկան մարբութիւնը սրբապղծել... Օ՛, եթէ գիտանար, թէ որքան գարշելի, որքան քստմենելի արարածներ էք դուք, տղամարդիկը... Որքան միամիտ, նոյնքան և բարի էի ես. բայց նրա վարմունքն այնպիսի մի շար, վրէժխնդիր ոգի է ներշնչել ինձ, որ այժմ, ինչպէս տեսնում էք, ուզում եմ նրան սպանուած տեսնել... Ուզելը քիչ է. ամբողջ հոգովս, ամբողջ էութեամբս այդ

բանին եւ միայն ձգտում... Իմ անունս, իմ ամենանուիրական զգացումներս չափից դուրս կապուած են նրա հետ, որպէս զի կարողանամ հանգստանալ, մինչև որ չհամոզուեմ, որ նա այլևս չկայ, գոյութիւն չունի աշխարհիս երեսին... Իսկ ես այնպէս փափագում եմ այդ հանգստութիւնը, այնպէս ուզում եմ հոգով մարմնով անձնատուր լինել իմ ընտանեկան խաղաղ երջանկութեանը... Լսեցէք, պարոն, — շարունակեց Սառան, առանց մի վայրկեան անգամ դադար առնելու: — Պուցէ դուք կարծում էք, թէ ես չեմ սիրում իմ ամուսնուն, որ նրան դրդում եմ այդպիսի մի քայլ անելու: Ընդհակառակը, պարոն, ընդհակառակը. նրան սիրելուցս է, ամբողջ էութեամբս նրան նուիրուել ցանկալուցս է, որ ես կամենում եմ, որ նա սպանի ինձ անպատուողին: Ախ, ես չեմ կամենում, որ մեր երկսիս միջև գոյութիւն ունենայ մի երրորդը, որն ամեն ժամանակ իւր ընկերների շրջանում կարող է պարծենալ, թէ այսինչ կինը մի ժամանակ իւրն է եղել... Այդ բանն է, որի մասին մտածելիս ամեն անգամ հոգիս թոյն է կտրում, անզօր կատաղութիւնը խեղդում է ինձ, ուզեզս քիչ է մնում ցնդի... Հապա այն, որ նրա պատճառով իմ մարուր ձեռքերը թաթախել եմ մի անմեղ արեան մէջ... Մինչև օրս էլ այդ արիւնը հանգիստ չի տալիս ինձ, գիշեր-ցերեկ հալածում է ինձ, և ես չեմ իմանում ո՞ւր փախչեմ, ո՞ւր կտրչեմ

այս սոսկալի պատժից ազատուելու համար... Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ ես այսպէս և այսքան տանջուեմ, իսկ նա անհոգ շրջի աշխարհիս երեսին և դեռ պարծենալով էլ խօսի իւր *սղատարդկային յաղքանակի մասին*... Ես պատրաստ եմ ինձ շարգարացնելու, թէև, կրկնում եմ, այն ժամանակ ես մի անփորձ, միամիտ ազջիկ էի և հաւատացի նրան կուսական սրտիս ամբողջ մաքրութեամբ... Բայց մի՞թէ մեղաւորը միայն ես եմ, որ մենակ էլ պիտի կրեմ յանցանքիս պատիժը... Մի՞թէ աշխարհիս երեսին չի գտնուիլ մի մարդ, որը եթէ ինձ վրայ տասը քար չպլտի, մի քար էլ նրա վրայ նետի...

Սառան գրգռուած էր վերին աստիճանի. նրա գեղեցիկ գէմբը ոչ թէ գունատուել, այլ ուղղակի քաթանի պէս սպիտակել էր անզուսպ կատապոթիւնից. շրթունքները ցնցում էին, նա ինքն ամբողջ մարմնով գոգում էր. աչքերը խիստ շար. բայց և խիստ ազգու արտայայտութիւն էին ստացել. խօսում էր արդար բողոքողին յատուկ ինքնամոռացութեան հասցնող այն անկեղծ և խորը գայրոյթի ոգևորութեամբ, որի ժամանակ խօսքերը գուրս են թռչում ինքնաքերաբար, որի ժամանակ խօսում է բողոքողի ոչ թէ միտքը, այլ սիրտը, հոգին, ամբողջ էութիւնը: Այժմ ես, Վարժես թէ, մասամբ հասկանում էի, որ այդ կիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ—մի վերին աստիճանի զգայուն, պատուախնդիր, բայց և խիստ

դժբազդ կին, որին դժբազդութիւնը ոչ թէ ընկճել էր, այլ, ընդհակառակը, լցրել էր մի անմիտ վրէժխնդրութեան ոգով այն աստիճան, որ այդ վրէժխնդրութիւնը նրա գոյութեան նպատակն էր դարձել: Մինչև անգամ ինձ թուում էր, թէ նա իբրև կին, այսինքն իբրև աւելի թոյլ արարած, անկարող ի ներսով իւր վրէժը լուծել իւր սեպհական ձեռքով, ամուսնացել էր յատկապէս այն հաշուով, որ իւր ամուսնու ձեռքով կատարէր այդ վրէժխնդրութիւնը: Քայց նրա հաշիւը սխալ էր դուրս եկել. Քարեգինը ոչ թէ մարդ, հաւ էլ չէր կարող մորթիլ:

Ես փորձեցի հանգստացնել Սառային. աշխատում էի համոզեմ նրան, որ իւր վրէժխնդրութիւնը միտք չունի, որ եթէ նրան հալածում է իւր երեխայի արիւնը, միևնոյն է՝ այդ հալածանքը չի վերջանալ, եթէ Թուսեանը սպանուի. ընդհակառակը, այդ սպանութիւնն այն նոր ազէտը կրբերի նրա գլխին, որ օրէնքը կըպատժի թէ իրենն և թէ իւր ամուսնուն— մէկին՝ իբրև դրդողի, միւսին՝ իբրև խեղճական մարդասպանի:

— Ես ոչ մի օրէնք չեմ ճանաչում, — ազդակեց Սառան աւելի մեծ կատաղութեամբ. — իմ օրէնքը իմ վրէժխնդրութիւնն է, որ ես պէտք է գլուխ բերեմ, թէկուզ կախելու էլ լինին ինձ: Եսկ եթէ ոչ, այն ժամանակ...

Նա յանկարծ վազեց գէպի սենեակի խորքում

զանուած դուռը, ոչ այն դուռը, որտեղից ինքը դուրս եկաւ, այլ դէպի միւս դուռը, և ուժգնութեամբ բաց արեց: Ըստ երևոյթին, այդ դռան հտեր կանգնած էր մէկը, որին պինդ դիպաւ դուռը, այնքան պինդ, որ մի զսպուած հառաչանքի ձայն լսուեց միւս սենեակից:

Մինչդեռ ես զարմացած սպասոււմ էի, թէ ինչ է ուզում անել Սառան, մէկ էլ տեսնեմ նա ամուսնու ձեռքից բռնած՝ ներս քարշեց նրան:

Խեղճ Գարեգինը, մի ձեռքով այտը բռնած, սաստիկ վախեցած, ներս մտաւ, ոտները հագիւքարշ տալով կնոջ հտակից:

Սառան նրան բերեց կանգնեցրեց ինձ մօտ, թողեց նրա ձեռքը և ուղղակի կանգնեց նրա առաջ:

Ես նայեցի Սառայի՝ իւր ամուսնու գէմքին յառած աչքերին և ակամայ մի քայլ ետ գնացի— այնքան սոսկալի էր այդ աչքերի արտայայտութիւնը:

— Ասա, վերջապէս, սպանելո՞ւ ես նրան, թէ ոչ,— ազազակեց նա:

Գարեգինը մի վերին աստիճանի ազերսական հայեացք ձգեց ինձ վրայ:

— Ի՛նձ նայիր, ի՛նձ, — նորից ազազակեց Սառան նրա ձեռքից պինդ քարշելով: — Ես եմ խօսում քեզ հետ: Սպանելո՞ւ ես նրան, թէ ոչ: Եթէ վախենում ես, որ քեզ Սիրիւր կըքշեն, կախազան կըբարձրացնեն իբրև մարդասպանի, ասա, որ դու չես սպանել,

ասա, որ ես եմ սպանել, ես եմ պատուիրել որ սպանես: Այն ժամանակ ես համարձակ կրկանգնեմ դատաւորների առաջ և կասեմ. այ՛ո, ես եմ սպանել, ես եմ պատուիրել, որ սպանի, որովհետեւ նա սպանեց ազաւնին... այն անմեղ, այն սպիտակ, այն մաքուր ազաւնին, որը նրան ոչինչ չէր արել... նստած էր իւր համար անտառում, ծառի վրայ, լուռ, միամիտ, առանց ոչորի վնասելու... Այդ ես կը հաստատեմ, լսում ես, [թէ ոչ, կը հաստատեմ շօշափելի փաստով, որովհետեւ պահած ունիմ նրա սպանած ազաւնու այն փետուրը, որի վրայ դուրս էր ցայտել արիւնը... Այդ արիւնը մինչև օրս էլ կայ, երևում է սպիտակ փետուրի վրայ...

Այստեղ արդէն ես հրաժարուում եմ այդ տեսարանի նկարագրութիւնը շարունակելուց — այնքան դա անակնկալ, տարօրինակ, շտեմնուած բան էր: Ընդհանուր խօսքերով այս կարող եմ միայն ասել, որ Սառան դեռ երկար ժամանակ տանջում, չարչարում էր խեղճ ամուսնուն, ազմկում էր սենեակն իւր կատաղի ձայնով, և նրա խօսքերից այլևս բան չէր կարելի հասկանալ: Վերջն ես տեսայ Սառային ուղղակի յատակի վրայ նստած, դէմքը ձեռքերով ծածկած, ուժգին հեկեկալիս... Իսկ Քարեգինը չօքել էր նրա առաջ, համբուրում էր նրա շրջազգեստի ծայրերը և ինչ-որ ազաշական բառեր էր շնչում...

Ես դուրս եկայ վերին աստիճանի ծանր, ճնշող տալաւորութեան տակ:

X.

Այդ գիշեր Թուսեանին ուղղակի ասացի, որ նա վաղն և եթ պէտք է հեռանայ իմ տանից։

— Ի՞նչ է, ձանձրացար ինձ պահելով, — ասաց նա ցինիկական հանգստութեամբ։

— Ոչ թէ ձանձրացայ, այլ նրան համար, որ... (դու ցած մարդ ես, — ուզում էի ասել, բայց զսպեցի ինձ և, վախեցնելու համար, ասացի) որովհետև քեզ ուզում են սպանել։

— Ի՞նչ... սպանել... Ո՛վ։

— Նա, որը ամուսնացել է քո անպատուած աղջկայ հետ։

Թուսեանը սկզբում խկապէս կարծես թէ վախեցաւ, այնպէս որ կարճ ժամանակ բան չգտաւ ասելու, և միայն խիստ զարմացած նայում էր աշքերիս. յետոյ, երբ ուշքի եկաւ, արագութեամբ հարցրեց.

— Գու՞մբտեղից գիտես այդ... դու ճանաչում ես նրան — այն աղջկան... ճանաչում ես նրա ամուսնուն։

— Ես երկսին էլ չատ լաւ եմ ճանաչում, և այս երեկոյ նրանց մօտ էի։

Թուսեանի զարմանքը սահման չունէր։ Կարծեմ, նա զարմանում էր աւելի իմ անսովոր լրջութեան, քան թէ այն բանի վրայ, ինչ որ ասում էի նրան։

— ձիշտ ես ասում, — հարցրեց:

— Աչ թէ ճիշտ եմ ասում, այլ և կասկած չունիմ, որ գլխիդ անպատճառ մի բան կըզայ, եթէ վազն և եթ շհեռանաս:

— Բայց հետաքրքրական է իմանալ, քանի՞ գլուխ ունի նրա ամուսինը, որ ինձ սպանի, — հարցրեց Թուսեանը:

— Նա քեզ պէս մի գլուխ ունի. բայց նա հօքեզ մենամարտի չի հրաւիրիլ, այլ ուղղակի կըբռնի հէնց փողոցում, հէնց թէկուզ այստեղ, իմ տանը, և առանց այլևայլութեան կըտայ կըսպանի:

-- Շան պէս:

— Դու այդ բառը շատ ես սիրում: Այո, հէնց թէկուզ շան պէս:

— Այդ վատ է, — ասաց Թուսեանը և, բեխերը ոլորելով, մտախոհութեամբ սկսեց անցուդարձ անել սենեակում: — Երբոր այդպէս է, պէտք է հեռանալ: Այ, այս դէպքում արդէն ես հասկանում եմ, թէ ինչ է նշանակում խոհեմութիւն:

Նա յանկարծ կանգնեց առաջս:

— Բայց որ փող չունիմ:

— Ե՛ս կըտամ ճանապարհածախրդ:

— Ե՛հ, թէ որ կըտաս, տուր: Ուզում ես, այս գիշեր և եթ գնամ:

— Շատ էլ լաւ կանես:

— Դէ տուր:

Հանեցի տասնհինգ ռուբլի դրի առաջը:

— Բաւական է:

— Մի բան էլ աւելի է: Հէր օրհնած, թէ որ փող ունէիր, էլ ի՞նչ էիր այսքան ժամանակ ցաւ դարձնում ինձ գլխիդ: Ռադ կանէիր, էլի, ժամանակին: Հայրս էլ, ով գիտէ, արդէն հոգոցն հանգուցելոց է եղել: Բայց չէ. նրա կաշին այնքան պի՛նդ է, որ ես վախենում եմ մի տասն տարի էլ ապրի: Պէ՛հ, այժմ շտապենք, որ երկաթուղու գնացքին վրայ հասնենք: Վարժեմ, վատ չի լինիլ, որ ծառայիդ զրկես մի կառք կանչի: Իդէպ, սրբան ես վճարում այդ պարոնին բնելու համար:

Մինչդեռ ծառաս կառք կըրերէր, Թուսեանը, յատակի վրայ պզղած, զբաղուած էր իւր իրեղէնները ջարդուած ճամպրուկի մէջ տեղաւորելով:

Յանկարժ նա դարձաւ ինձ.

— Մի բան ասեմ, հօ չե՞ս նեղանալ:

— Ի՞նչ:

— Արի խոստովանուիր, որ մոզոնեցիր, թէ ինձ ուզում են սպանել: Տեսար, որ տանդ խնամի եմ նստել, ուղեցիր գրանով գլխիցդ ռադ անել: Չէ:

Պատասխանս միայն ուսերիս արհամարհական շարժումն եղաւ:

Թուսեանը նկատեց, որ այդ գիշեր ես ամենևին տրամադիր չեմ իւր հետ կատակ անելու, և հարցրեց.

— Լաւ. չի լինիլ իմանանք, ով է նրա ամուսինը:

— Նրա ամուսինը նա է, որը ամեն գիշեր գալիս էր զանգակս քաշում:

Թուսեանը վեռ թուա պալգած տեղից:

— Երեկ գիշեր որ բռնեցի,— բացականչեց նա:

— Հէնց նա:

— Այն լուսնոտը...

Ու բարձրաձայն ծիծաղեց:

— Հաւատացիր, այդքան լուրջ լինել և այդպիսի սիրուն կատակ անել, — դա շատ քշերին է աջողում, — ասաց նա, շարունակելով ուրախ ծիծաղել: — Երբոր այդպէս է, ես մնում եմ, չեմ գնում:

Բոլոր ոյժերս հաւաքեցի, որպէս զի որքան կարելի է չզրզուեմ, և մանրամասնօրէն պատմեցի նրան այն բոլորը, ինչ որ տեսել ե լսել էի այդ երեկոյ, և ասացի, որ, ճիշտ է, Սառայի ամուսինը շնորհք չունի սպանելու նրան, բայց Սառան իւր ամբողջ էութեամբ ձգտում է այդ բանին և անպատճառ ինքն իւր ձեռքով գլուխ կրքերի այդ բանը, եթէ մի անգամ դարձեալ հանդիպելու լինի նրան:

Թուսեանը, հակառակ սպասածիս, լսեց ինձ մեծ ուշադրութեամբ և շատ լուրջ կերպով, — երևի նրա համար, որ ես ինքս պատմում էի ամենայն լրջութեամբ: Յետոյ, երբ վերջացրի, նորից մօտեցաւ իւր ճամպրուկին, առաջը պաղեց և շարունակեց իրերը տեղաւորել:

— Ուրեմն անցեալ օր հասցէս ուզեց նրա

համար, որ... Բռնւօ, չէի սպասում, թէ այդքան
խորամանկ կարող է լինել... Ասենք այն ժամանակ
արդէն տեսնում էի, որ մի քիչ էքսցենտրիկ
աղջիկ է... Բայց յիմար է. փոխանակ փառք տալու
Աստծուն, որ այնպիսի ամուսնու չի հանդիպել,
որը կարող էր պսակի հրկրորդ օրն և եթ խայտա-
ռակութեամբ դուրս անել իրեն իւր տանից, նա
դեռ տանջում էլ է այդ խեղճ լուսնոտին, որ վայ
սպանի ինձ... Իսկ այդ լուսնոտը... Դրա վարմունքն
էլ չեմ հասկանում... Երևի, ինչքան մարդ կայ աշ-
խարհիս հրեսին, այնքան էլ—բնաւորութիւն...
Յամենայն դէպս, պէտք է առանց այլևայլութեան
փախչել: Չգիտեմ ով է ասել, կամ, գուցէ, ոչոք չի
ասել, այլ ես եմ ասում. հազար գազանի ճանկերից
աւելի հեշտ է պրծնելը, քան մի կնոջ վրիժառու-
թիւնից: Փախչենք, փախչենք շուտով, թէ չէ...
Չեկաւ քո քնուկը:

Վերջապէս, ծառաս կառքը բերեց:

Թուեսանին ճանապարհ դրի հէնց դռնիցս:

— Ինչ էլ որ լինի,— ասաց նա երբ արդէն
նստում էր կառքը,— ես երբէք չեմ դաւաճանիլ իմ
հալիկուրեհան նշանաբանին: Ինչ վերաբերում է քո
տասնհինգ ուրլուն, հայրս որ մեռնի, իսկոյն կու-
ղարկեմ, իսկ եթէ ոչ, սպասիր, մինչև որ մեռնի:
Իսկ այն յիմար կնոջն ասա, որ բազդն իրեն ամե-
նալաւ պայմանների մէջ է դրել, բայց ինքն օգուտ

քաղել չգիտէ... Գէ՛հ մնաս բարեաւ:

Այդպիսով ճանապարհ դրի անկոչ հիւրիս, որին արդէն ատում էի, որից զարշում էի իբրև թունաւոր օձից: Եւ նրան շտապեցի հեռացնել, հարկաւ, ոչ թէ այն պատճառով, որ հոգում էի նրա կեանքի համար (ընդհակառակը, նրա դատաստանը որ ինձ տային, կըկախէի առաջին պատահած ծառից), այլ նրա համար, որ, կարծում էի, Սառան—խեղճ, թշուառ բարեկամիս այդ թշուառ կինը կըհանգստանար, երբ տեսնէր, որ Թուսեանն այլևս «միկնոյն երկնքի տակ չի շնչում», ինչ որ ինքն ու իւր ամուսինը:

Հետեւալ առաւօտեան ծառայիս ձեռքով մի քանի տող նամակ ուղարկեցի Քարեզինն, որին յայտնում էի, որ Թուսեանին արդէն ճանապարհ եմ ձգել: Բայց, ինչպէս յետոյ իմացայ, Քարեզինն այդ նամակը ցոյց չէր տուել կնոջը, որովհետև վախեցել էր, որ Սառան աւելի ևս պիտի կատաղէր, երբ իմանար, որ նա ձեռքից բաց էր թողել Թուսեանին:

Այդ գիշեր ուշ վերադարձայ տուն: Սաստիկ յոգնած էի և թիկն տուի մահճակալիս վրայ, որ մի քիչ հանգստանամ, նորից աշխատանքի նստելու համար: Ձէի իմացել, թէ ինչպէս քունս տարել էր, երբ յանկարծ վեր թռայ ականջիս մէջ լսուած մի ձայնից: Չանգակիս ձայնն էր: Ինձ թուաց, թէ այդ

ձայնը երազիս մէջ լսեցի—մի բան, որ շատ բնական կարող էր լինել նախորդ գիշերներէ իրականութեան ազդեցութեան տակ, մանաւանդ, որ ես իսկոյն յիշեցի այդ առաւօտեան Քարեգինին գրած նամակս և մտածեցի, որ, ուրեմն, Քարեգինը չէր կարող գալ դարձեալ ինձ անհանգստացնելու, ինչպէս նախորդ գիշերներն էր անում: Եւ նորից թիկն տուեցի: Բայց սրբան եղաւ զարմանքս, որ զանգակը նորից հնչեց: Գեռ ես չհաւատալով, թէ դա իրականութիւն է, նստեցի մահճակալիս վրայ, ականջներս չորս շինեցի և մտածում էի. եթէ զանգակը նորից հնչի, կընշանակի, որ իրականութիւն է, իսկ եթէ ոչ, կընշանակի, որ քնած եմ և երազումս եմ լսում այդ ձայնը: Զանգակը նորից հնչեց—մէկ, երկու, երեք անգամ իրար ետեից: Ուրեմն երազ չէր:

Մասամբ զրգուած, մասամբ հետաքրքրուած, մասամբ վախեցած վեր կացայ և գնացի դուռը բանալու, ճանապարհին սաստիկ կատաղելով ծառայիս վրայ, որ խոհանոցում չնթռկած իւր պաշտօնն ինձ էր թողել կատարելու:

Գուռը բաց արի և քարացած մնացի տեղսուտեղս:

Հակառակ սպասածիս, դռանս առաջ կանգնած էր ոչ թէ Քարեգինը, այլ—Սառան:

—Տիկին, — շնչացի ես վերին աստիճանի ապշած և մերկնայտարար յետ քաշուեցի, որ տեղ

տամ նրան մտնելու:

Այնուհետև ինչ որ պատահեց, մինչև օրս էլ ինձ թւում է, թէ երազ էր:

Սառան մի բոպէ անշարժ կանգնած էր դռանս առաջ, փողոցում: Լուսինը ձմեռային նօսք մառխուղի միջից լուսաւորում էր նրա պրոֆիլը միայն: Մեծ զարմանքով նկատեցի, որ այդ ցուրտ ձմռանը նա գլխարաց էր և նոյն սև հագուստի մէջ, որի մէջ տեսել էի նրան վերջին անգամ, առանց վերարկուի: Նա նայում էր դէպի ներս, ոչ թէ ինձ, այլ դէպի մութ նախասենեակը: Նրա մի աչքից, այն աչքից, որ կողմից որ լուսինն էր լուսաւորում, կարծես կայծեր էին դուրս ցայտում, Նա ոչ մի ձայն չհանեց, ձեռքը կամաց, կարծես երկաթի ծանրութեամբ, բարձրացրեց և ուղղեց դէպի նախասենեակը: Նրա ձեռքի մէջ լուսնի լոյսի տակ մի ինչ-որ պլպլաց: Մերենայաբար յետ ընկայ դէպի նախասենեակի պատը և թաղնուեցի դռան ետեր: Նոյն վայրկեանին մի տրաքոց լսուեց և միևնոյն ժամանակ նախասենեակս լուսաւորուեց մի վայրկեանական լուսով: Արիւնը սառաւ երակներինս մէջ: Տեղիցս շարժուել չկարողացայ: Չգիտեմ, որքան տեսեց այդ սարսափելի բոպէն, որը երբէք չեմ մոռանալ, բայց այնուհետև, երբ փոքր ինչ ուշքի եկայ և գլուխըս դուրս հանեցի դէպի լուսնի լուսով լուսաւորուած փողոցը, տեսայ, որ ոչոք չկայ: Նորից և

առաջուանից աւելի մեծ կասկածով ինքս ինձ հարց տուի, թէ քնած չեմ արդեօք և տեսածս երազ չէր արդեօք: Բայց ինչ քնած, ինչ երազ. ևս կանգնած եմ դռանս առաջ, ձիւնի մէջ. խորին գիշեր է. փողոցը լուսաւորուած է ցերեկի պէս. ցուրտը մարդու ոսկորներն է անցնում. շուրջս կատարեալ լուսթիւն է տիրում. նոյն իսկ ատրճանակի ձայնի վրայ ոչոք չի զարթել հարևաններից, որոնց տան պատուհանները պինդ փակուած են: Կասկածս միանգամայն փարատեց ձիւնի մէջ, հէնց ոտներիս առաջ, սևին տուող մի բան, որ յանկարծ աչքիս ընկաւ: Վերցրի: Ատրճանակ էր:

Ներս մտայ և դուռը փակեցի: Գեռ ևս կատարելապէս ուշքի չէի եկել: Նոր նկատեցի, որ ամբողջ մարմնովս դողում եմ ոչ թէ ցրտից, այլ այն բանից, ինչ որ տեսայ: Այլ ևս ում քունը կըտանէր: Նստած էի և չէի իմանում ինչ մտածեմ, ինչ անեմ: Մէկ ուզեցի վազեմ Գարեգնի տուն, մինչև անգամ վերարկուս հագայ, գլխարկս ծածկեցի. բայց յետոյ մտածեցի, թէ ինչ պէտք է անէի, որ գնայի:

Մինչդեռ նստած էի այդ անորոշ դրութեան մէջ և իզուր ջանք էի անում բռնի սառնասրտութեամբ ինքս ինձ հաշիւ տալու կատարուած իրողութեան մասին, յանկարծ գանգակս այնպէս պինդ քաշեցին, որ ինձ թուաց, թէ թեյը կտրուեց: Այլևս առանց հասկանալու, թէ ինչ եմ անում, ինչպէս

երազի մէջ, գլխապատառ դուրս վազեցի և, երբ դուռս բաց արի, աչքիս առջև ներկայացաւ ոչ թէ Սառան, ինչպէս սպասում էի ես, այլ—Գարեգինը, ձիւնի մէջ կոլոլուած, գունատ, հազիւ շնչելիս:

—Ի սէր Աստուծոյ, օգնիր,—չշնջաց նա, հազիւ շունչը ետ բերելով:—Սառան չկայ... Ես քնած էի... Դուրս է եկել... Չգիտեմ ուր է գնացել... Թէ օգնես, էլի դու կօգնես... Ես խելքս կորցնում եմ... Ձեմ իմանում ինչ անեմ... Իսէր Աստուծոյ, շուտով... արի գնանք:

—Ո՛ւր:

—Նրան որոնելու...

—Ո՛րտեղ:

—Չգիտեմ... Ես այլևս մտածելու ընդունակութիւն չունիմ... Դու ասա, նրտեղ կըլինի:

—Նա այստեղ էր:

—Այստեղ... քիչ մօտ,—աղաղակեց խեղճը և վրայ ընկաւ ձեռքերիս:—Յետոյ:

Նա շնչասպառ էր լինում, նա լափում էր ինձ իւր հետաքրքրութիւնից չուած աչքերով:

Մի քանի խօսքով պատմեցի եղելութիւնը:

Նա լսեց ինձ, լսեց, յետոյ «Վայ» արաւ, երկու ձեռքով պինդ խփեց գլխին և մնաց տեղնուտեղը քարացած: Այնուհետև յանկարծ խեղդուողի նման բռնեց ձեռքիցս և սկսեց քարշ տալ:

—Գնանք... Իսէր Աստուծոյ, գնանք շուտով...

չուտով, շուտով, շուտով...

— Ո՛ւր:

— Չգիտեմ... Գետը... Նա սպառնում էր, որ կրսպանի և յետոյ գետը կընկնի կըխեղդուի... Գնանք... Մենք կազատենք նրան... ևս կազատեմ նրան... Իսկ եթէ չենք ազատիլ, ևս էլ կըխեղդուեմ... Մնապատճառ, անպատճառ, անպատճառ...

Եւ նա մի տարօրինակ կատաղի ուժով շարունակում էր քարշ տալ ինձ, շարունակ սայլթաքելով ձիւնի մէջ:

Մեծ սառնասրտութիւն էր հարկաւոր ինձ, որպէսզի հասկացնէի նրան, որ այդ կէսգիշերին, ձմեռային այդ ցուրտ գիշերին Սառային գետի մէջ որոնելն առնուազը խելագարութիւն կըլինէր. և սրտեղ որոնէինք նրան. գետը շատ ճանապարհներ ունի. սր ճանապարհովն էր գնացել Սառան, եթէ ընդունէինք անպամ, որ նա գնացել էր գետն ընկնելու: Ամենից լաւն այն չէր, որ նախ գնայինք տուն և տեսնէինք հօ շի վերադարձել:

— Հն, այդ լաւ ասացիր, — բացականչեց Գարեգինը: — Դա հիանալի միտք էր... Ուրեմն տուն գնանք... շուտով, շուտով... Ա՛խ, մի կառք, մի կառք... Կառք չկայ:

Ամայի փողոցներում շուն էլ չէր հաջում, սր մնաց կառք լինէր: Եւ մենք մի ամբողջ կէս վերստ ճանապարհ վազում էինք ոտով:

Գուռը կրնիլի վրայ բաց էր: Միջանցքը լուսաւորուած էր առաստաղից կախուած կապոյտ լապտերով: Քարեզինն ամենից առաջ վազեց աղախնի սենեակը: Աղախինը չկար, ինչպէս յետոյ իմացայ, նա փախել էր սարսափից: Այնուհետև Քարեզինը ներս վազեց միւս սենեակները: Ես հետևում էի նրան:

Սառային գտանք ննջարանում: Հերարձակ, նստած էր մահճակալի վրայ, ճօճում էր ոտներն ու ժպտում:

Քարեզինը վազեց դէպի նա, շոքեց և պինդ գրկեց նրա ոտները:

— Սառա ջան, — աղաղակեց նա, և նրա ձայնը մարեց:

Սառան տարօրինակ հանգստութեամբ նայեց նրան և սկսեց ձեռքերով խաղալ ամուսնու մազերի հետ: Նա շարունակ ժպտում էր լուռ: Յետոյ երկու ձեռքով բարձրացրեց Քարեզնի գլուխը և շրթունքները մօտեցրեց նրա ականջին:

— Գիտե՞ս, որ ես սպանեցի նրան, — շնչաց նա այնքան կամաց, որ հազիւ լսեցի: — Սպիտակ, անմեղ, անբիծ ազաւնին ծառից ընկաւ գնդակահար և իւր վրէժը լուծեց...

Սառան յանկարծ ամբողջ մարմնով ցնցուեց, նստեց ուղիղ, երկու ձեռքով յետ քաշեց երեսին թափուած հարուստ մազերը և նայեց իւր շուրջը: Նրա անմիտ հայեացքը կանգ առաւ ինձ վրայ. նա կար-

ծես նոր տեսաւ ինձ և, յանկարծ վեր թռչելով տեղից, ազազակեց.

— Ո՛վ է այս պարոնը... Ի՞նչ իրաւունքով էք մտել դուք այստեղ... Ո՛վ իրաւունք ունի լսելու իմ գաղտնիքը, բացի Աստծուց...

Բայց Սառան իսկոյն հանդարտուեց, երկար ժամանակ անթարթ նայեց ինձ, յետոյ ձեռքով շփեց ճակատն և սաստիկ յոգնած մարդու պէս արտասանեց.

— Ա՛խ, այդ դճւք էք...

Ու նորից նստեց։ Այս անգամ ժպիտը չբացել էր նրա դէմքից, և այդ գեղեցիկ դէմքը վերին աստիճանի խաղաղ ու վշտալի արտայայտութիւն էր ստացել։ Երկար ժամանակ նա լուռ էր։ Գարեգիները չորած էր նրա տուաջ և սարսափահար նայում էր նրա դէմքին։


— Գու գիտես, որ խիստ ցուրտ է, — վերջապէս արտասանեց Սառան, ուսերը կուշուհուպ ածելով։

— Ես մրսում եմ։

Ու կամաց գլուխը դրեց բարձի վրայ։

Այստեղ վերջացնում եմ իմ պատմութիւնը, որովհետև այն, ինչ որ յետոյ պատահեց, վերաբերում է հոգեկան հիւանդութիւնների պատճառներն ուսումնասիրող բժշկական մատենագրութեանը։







14620

2019

